





ԵԶՈՒՄ ԱՐԱԿԱՆ


ԱՐԱԿՈ

ՀՅՈՒՅՆԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ

ԲՐԵՄԱ

ՄԱՆԱԿԱՆ Ց



ՀԱՅԱՍՏԱՆ

Խնապի Պայտ

— 1827 —

Ա Ր Ա Կ Ք

Ե Զ Ո Վ Բ Ա Ս Ի

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ,

Դ ԳԱՂԱԲԱԿԱՆ ԼԵԶՈՒԻԿ

ՅԱԽԵԼՄԱՄԲ

ՈՏԱՆԱԽՈՐ ԻՄԱՍՏԻՑ

ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏՈՒՑ

Դ Հ ՄԻՒԱԾ ՎԱՐԴԱՊԵՏԵ

Բ ԺՇԿԵԱՆ

Դ ՄԻՒԹԵՐԵԱՆ ՈՒԽՏԵԿԻՆ



Դ ՎԵՆԵՏԻԿ
Դ ՎԱՆ ՄՐԲՈՅՆ ՂԱԶՄՈՒ

1827

ՀԱՅՈՒԹ ԵՎ ՀԱՅՈՒԹ
ԵՎ ՀԱՅՈՒԹ ԵՎ ՀԱՅՈՒԹ
ԵՎ ՀԱՅՈՒԹ ԵՎ ՀԱՅՈՒԹ

Սիմկ
39

ՎԱՐ Ք

ԵԶՈՒՄԱԲԱՆԻ

Հարադրեալ հեղեներէն ՚ի Մաքսիմոսէ
Բլանուտէ (*):

ԳԼ. Ա.

Մանկան խախտուն՝ եխցի ՚ի հանդէն,
Եւշվը ՚ի սուջիւր դպրու իռլէ վժեւ.
Ուր անբան յաւելու ճառաւն գիտնապէն,
Հրահանգել ըլմարդ յիմաստը ուեսպէն :

Ըատ գիտուն մարդիկ գեղեցիկ քննելով մարդկային գործողութիները և անստամբութեանց սրատձառները՝ ջանացին աշխատեցան, որ ետքի եկօղները սկէսալէս խրաններով կրթեն և բարեկարգեն: Բայց Եզրոբոս քան զամենը գերազանցեց. որուն գործքին մէջ ամէնէն աւելի կը

(*) Բլանուտ Մանակն էր Յոյն կը օնաւուր, ու հին բաներու ուղիւու ըլլալով Փիլիսոփաներուն ու դասնաւուրները ծողվնեց գիրւ ըստ յեղու Եպու:

փոյլի իմաստասիրութիւնը և բարօյական հանձարը . որ գրեթէ վերին զօրութէն շարժելով զարմանալի աւանդեց մարդկանց այս չափ գեղեցիկ և օգտակար կանոններ բարոյականութե , որ շատ վեր են երեւլի Փիլստիքաներուն տըւած կանոններէն . որո՞ք որ մինչեւ ան ատենը աշխարհք էին եկեր : Եթզ զի՝ Եզրոս չի կամեցաւ առաջ բերել բարակ սահմաններով պատճառներ , և երեւելի սլատմութիններէ օրինակներ , որպէս զի կարենայ մարդուս միտքը համոզելով բոնադատել՝ որ առաքինութիւր սիրէ , ու մալութէ փախչի : Ուրիշ բանով չուղեց մարդկանց վարդապետել . բայց միայն առակով , որ կըսվի Առասպէւ (*) . որով իրը վախմը կուտայ , թէ թռչունները և այլ կենդանիներն՝ որ խելք ու միտք չունին , միայն բնական հասկացողութք շարժելով շատ բաներէ հեռու կեցան . իսկ մարդիկ՝ որ ունին բանականութիւն , պէտք է ամընան երբոր չեն զգուշանար անանկ բաններէն , որ աղ-

բան վարդապէւ հին գրեանց մէջէն , և հինեւուն բերնեն լուսավարութէն . որ Քառականութէն ընդիր նարգիմանած ըլլալով մենաւլաւ վարութագութարք կերտաւաւէ մէր մէջ աւ հին ապէնը նարգիմանած պիտի ըլլայ . վասն պի հին գրեանց մէջ Եպիփանին բանեւըն իւ գունընին :

(*) Առասպէւի ընդպին անանի առանիներն ու իրած չեն նշան , այլ նայացած են . որպէս մէ իւնդանին և անընաւ բանը իւ խօսի : Ասանի առանիները հին ժամանակը աստիվածածվեին ամեն ապէի մէջ հարաց Յանացած Աստիվածածվագութէն :

ուեսները, և ուրիշ կենդանիները զգուշանալով աղատեցան մեծամեծ վտանգներէ իրենց ճարտարամիտ խորագիտութքը . և երբեմն շատ մեծ օգուաններ ալ շահեցան երբորատիթը պատահեցաւ : Ուատի Եղոբոս իր վարքը իւր քաղաքավարութեւ և խմատոասիրութեւ պատկերք մը ձևացընելով դրաւ ամենուն առջին . և ասով Գիլխառփաներէն երևելի եղաւ, որ առաւել գործքով, քան թէ խօսքով վարդապետեց :

Ծնաւ Եղոբոս Ամօրիոն քաղաքը մեծին Փոխւգիոյ (*), և մնաւ ծառայական վիճակի մշջ : Ասոր շատ յարմար կուգայ Պղատոնն Փիլխառփային գեղեցիկ խօսքը . որ Կորիա ըսված տրամախօսութեւ մշջը Ճշմարտութք կը խօսի, [թէ] || Բնունն ու օրէնքը շատ անդամիրարու հակառակ են || : Վասն-

ինչո՞ւ յայտնի է Ամօրիոն : Բայց Գիտունները երես ուստի իւր բայնին առասպելը . ու բանական . ու մորդուս բարչը իւր յայտնի . և շաբաթին ըստ բարչի ու իւր յայտնի . ինչո՞ւ է հետագա Եղորդին . և անոր նմանները : Ի բարոյական, ու անբանները բարչը բացառութեալիւր իւր հանե . ինչո՞ւ է ըստ այս առանձինները Եղորդին : Գ խառն . ու իւր յայտնի . ու մորդը իւր իտուի անբանին հետ . ինչո՞ւ է ըստ առանձիւ, ևն :

(*) Փահագիտ է Գուստավ Ասիայի՝ Գաղաքին ու հին Սաքամուլին մէջ պեղը . որ ըստ առաջնունք ունի բարչ . մէն ունի Ամօրիոն բարչը . ու ծնաւ Եղորդին յամի աշխարհի 3400, ինչ 600 տարի առաջ. բայց իւր իտուին . ու հին առենին Դընեւ շաբաթին երես իւր իտուն առանձինները . ու հե-

զի բնութելը տըւաւ Եղորոսին մեծութեաւ ա-
զատ հոդի մը . բայց մարդկային օրէնքը
դրաւ զայն ծառայական վիճակի մէջ . սա-
կայն այս օրէնքը չի կըրցաւ այլայլեւ անոր
հոդուն աղատութելը . երբոր իր գերի վե-
ճակը՝ զինքը մէկ դիէն մէկալ դին նետելով
կը չարչարէր . և զանազան վիշտ նեղութե-
ները՝ ոչ երբէք կըրցան զայն իր բնական
կարդէն վոփոխել :

Բաւական չեղաւ Եղորոսին գերի վիճա-
կը, այլեւ գէմքը խիստ գարշատեսիլէր. անանկ
որ աշխարհը չէ եկած այնպիսի տգեղ մարդ-
վասն զի դլուխն եր սրածայր երկայն, քի-
թը տափակ, վիզը հաստ ու կարճ, պուկուն-
քը թանձր, գոյնը սեւ, կապուտ . և այս
սպատճառաւ կըսի Եղբբան, այսինքն Եթիօբա-
որ կընշանակէ Եթովպացի (*) : Ասկէ ՚ի
զատ վորն եր չափազանց դուրս, կռնակը

անար գէրի ծնուա . բայց ճար ըրսաւ Ալէն+ գնաց
բարսցական գիշեաբարենիւ սորվեցաւ, որ շա-
շարգէլի սասամյէր . բայց գէսաւ ոչ այն վիճա-
կին մէջ այլոց բան չի կրնար սորվեցնէւ սիսա-
կէնդանիներան բներնէն խօսելով այս սուսիներ-
շինէւ, որ գէլ ասովկարենայ բարի շարտ սոր-
վեցնէւ . որ շափ մէջ շարգութիւ սանեցաւ նախ-
Յանաց մէջ . որ Սոկրատ Փիլիպոսիան սնապէնը
սպանաւոր Շարժուա բուրը առանիները . Նախաց ա-
լէն անդ Շարգանեց ախուժէլի ըլլալուսուն համար :

(*) Եղբբանին ծնուզը Եղբբանիայէն, ի՞մ հա-
պէլսա կողմէրէն եկած ծախուժէին Փահ-գիտային
յէջ . սոսակի իրեն+ որուն որ գէրին եին, Եղբբ-
անական անորն էր . յէտու ծախուժաւ սորինինէրուն :

ծուռ սասպատողն իւանդուռու . այնչափ որ տառը
տգեղութիր աւելի էր քան զթերախտէսին .
որ (*) ծիծաղելով կը նկարագրէ Հոմե-
րոս : Ամէն բանէն աւելի մեծ սլակասու-
թին էր դժւարախօսութիր . որուն խօսքն
էր աննշան և ձայնը անորոշ (**) :

Ահա այս ամէն պակասութիներա յարմա-
րեցան Եզօբոսի ծառայական վիճակին . որ
այնպիսի արտարոց բաներու մէջ գտնըլելով
այս տգեղ (†) անյարմաք մարմնովը ի՞նչպէս
կըրցաւ իր ծառայական կեանքը վարել : Ու-
պէտ ասանկ անշնորհք էր դրաի տեսքը , և
մարմինը այլանդակ . բայց հոգին Եզօբոսի
աղնիւ էր սրամիտ և քաղոքավար . որ զա-
նազան գիւտերով և խելքով լեցւած՝ շու-
տով կը դաներ ամէն բանին հնարքը , որը կի-
խրթին և նուրբ բան ըլլար (**) :

(*) Թէրոիդէս Յոյնը անոնի գորշագէնիւ էր
իւազ անընդունի , որ պատմէները առաջ էին ըրեւ .
ինչպէս Հոմերոս Բանասագէնին աւ ծառը ընելու-
համար անոր իւրուարան+ը իւնի իւրագըն : Աս դժէ՛
և անապարծ յարդը յը գնաց Հոմերիւ և ազին
գով . անալ մէյ յը յէւ+ով զարիածին պէս ընիւ-
մատաւ . իբր 1200 գարիբնի նուականէն առաջ :

(**) Բայսաւագ այսպէս պԳէ՛լ իւնիարագըն .
Բայց իսկ որ իւսէն , Ան Եզօբոսին ինչպէս որ իւնէ՛
գէղեցին էր , անանի ալ յարմինը , և իիսպ յար-
մար գողոցայաց նըածիւլք էր ամենէն վէր :

(***) Ըստ առանինէր խառնւըւնցան Եզօբոսին
առանինէրուն հէպա . անանի որ Եզօբոսին առաջ և
յէտու շինուած առանինէրուն շապը Եզօբոսին
գործին մէջ խառննէցին : Աս պատճառապէ՝ որ լադ

Գ. Լ. . Բ. .

ԶԵՐՊԱՐԳՈՒԹԻՒՆԻ ԵՎԱՀԵՐՄՈՒՅԻՆ :

Եղոքոսին առջի տրն որ զինքը գներ էր՝
ասանել կոշտ անշնորհք տեսնելով զայն, միտ-
քը դրաւ թէ տանը ծառայութելը չպիտի
կրնայ ընել. ուստի արար խրկեց որ հոն
երկիր փորելով աշխատի. բայց Եզրուս հոն
դացածին պէս սկսաւ անանել լաւ աշխատիլ
սրտանց որ չի կրնայ ըլլալ: Օր մը տրը գե-
նին տունը գնաց անտեղի գործքերը լայելու
համար. մէկ պարտէզպան մը տեսնելով ա-
նոր գալը՝ ընծայ բերաւ իրեն աման մը խիստ
աղնիւ և պատուական թուզ, որ սիրով ա-
ռաւ հաճեցաւ, ու տըւաւ պահելու իր մէկ
ընտանի ծառային, որ կըսվէր Ագաթօքոս
(*), որպէս զի երբոր բաղնիքէն ելլէ՝ առ-
ջին բերէ: Այս միջոցիս մէջ պէտք եղաւ որ
բանիմը համար Եզրուս տունը մտնէ: Ագա-
թօքոս այս բանն իրեն առիթ ընելով գնաց

ԼԵՂԵՐԻ մէջ որ Աարգյանած իայ, միահերու մէ ո-
րսան մէջ աւելի է, որսան մէջ պահան :

(*) Ագաթօքոս կը Աարգյանի բարեսօնն պաշ-
տօննայ. որ իւրեւայ նէ արտգաւարժ աշխաժ
հարդ ըլլաւով այս անուամբ կը իւրեւ. և անով
սիրելի եղած էր պէտքն որ համարյակին յառա-
պարգութին ընելու Եզրուսին վը :

իր ընկերներուն մէկին ըսաց թէ եկո՞ աս
թուզերը մենք ուտենք . երբոր մեր տրը ու-
ղէ , Եզոբոսին վրան կը ձգենք , թէ տունը
մանելու ատենը կերաւ ծածուկ : Այս բա-
նիս վրա մենք կրնանք շատ սուտեր շինելու ,
որ Տշմարխտ երևնայ . անանկ որ Եզոբոս չի
կարենայ այս զրաբարտութէս զինքն արդա-
րացընել . որովհետեւ անոր վկայութիւն չէ
կրնար դէմ կենալ մեր մէկ խօսքին՝ երբոր
լաւ հաստատենք . հապա ինչնչէս պիտի կա-
րենայ մեզի սուտով յազթել . մանաւանդ
մեզի սկառասիսն տալու մէկ սկառառ մը
ցուցմունք մը չունի :

Ասանկ խորհուրդ ընելէն ետե այս ըրած
միաբանութե չար խորհուրդը կատարեցին ,
ու ամէն մէկ թուզն ուտելու ատենը բարձր
ձայնով կը ծիծաղէին ըսելով . || Այս քեզ
ողորմելի Եզոբոս || :

Ելաւ տրը բաղնիքէն և ուզեց որ թուզը
բերեն . երբոր լսեց թէ Եզոբոսը կերաւ ,
անանկ բարկացաւ , որ մէկէն հրամեց դի-
մացը հանեն . որ տեսածին պէս կանչեց .
այ թշուտական , ինչնկայանդդնեցար մտար
սեղանատունն ու կերար թուզերն որ ինծի
համար պահւած էր :

Եզոբոս լսելով այս յանդիմանութիւնը լաւ
հասկըցաւ բանը . բայց դժւարութին հոն
էր . որ չէր կրնար խօսքը արտաքերել ու պա-
տասիսն տալ : Այս սկառառաւ շուտով
յաղթը լվեցաւ սուտ վկաներուն խօսքով . և
տեսաւ թէ չարաչար ծէծ պիտի ուտեէ , ըն-
կաւ տիրովը ոտքը մէծ աղաչանքով իսնդրեց .
որ քիչ մը ատեն տայ իրեն : Ուստի վազեց

կերակուր եվելու տեղն ու քիչ մը տաք ջուր
բերաւ հոն խմեց . յետոյ մատը խօթեց բեր-
նին մէջ սիրար ետ բերաւ : Կայիս բերնէն
պարզ ջուր եկաւ . վազ զի բոլոր օրը բան չէր
կերած : Եշքը աղաշեց տիրոջն որ հրամայե-
ամբաստանօվ թշնամիներուն , որ անոնք ալ
անանկ ընեն . որպէս զի յայտնի ըլլայ թէ
ոլ է կերեր դանոնք , և ուրիշի խօսքով չի
խարմի :

Իսկ առը զարմանալով անոր սրամիտ ու-
շիմութեց վրա , պատւիրեց որ սուտ վկա-
ներն ալ խմեն այն ջրէն իրեն առջին : Անոնք
ալ խմեցին . բայց փոխանակ որկորը պօշուց
տանելու մատը , գետ ՚ի ընտերքը տարին , որ
չի փրսիւն : Սակայն հազիւ թէ խմելը լմըն-
ցուցին , ներսէրնին աւրելով գանիլ մը եկաւ
իրենց , և ահա բոլոր կերած թուզերը դուրս
եկան . որոնց յանցանքը և անօրէն դրաբ-
առութիւր յայտնի եղաւ ամենուն : Իսկ առը
հրամայեց մէկալ ծառաներուն , որ զանոնիք
մերկացընենն , և լաւ մը ծեծեն : Որոնք ան-
ատենը իրենց վրա փորձելով լաւ հասկը-
ցան այս ճշմարտութիւր առակին , որ կըսէ .
|| Ուշ որ նենդութեց չարութիւր կը պատրաս-
տէ ընկերին , իր գլխուն կը բերէ այն բո-
լոր չարկին որ ուրիշին համար կուզեր || (*) :

(*) Եպիստուն այս առջի գերը ինը տառապայ նէ
Փակագիւանէր եր Եպիստունը Ալենիւն դառնացն
էպատ . իսկ Ալենիւն երթաւը՝ ծնօպին պիրոջը հըս-
մանը վկայի ըւլայ . որ մշտնելուն էպատ ասուը ծախ-
զած ինը տառապայ . իսկ այս մարդը իրաւ մէծապատն էր .
բայց անի մասս ըւլաւը Եպիստունին յարգը միշտէ :

ԳԼ. • Գ.

ՀԻ-ՐԱՍԻՐՈՒԹԻ ԵՎՇԱԽ-Ի :

Ո՞իւս օրը տղրը քաղաք դարձաւ . և Եղու-
բոս երկիր փորելով կաշխատէր ինչպէս որ
պատուիրած էր իրեն : Եղաւ որ Արտեմի
սին (*) Քուրմերը ուրիշ մարդկանց հետ
գիպւածով ճամբայէն մոլորեցան և ժուռ
գալով եկան Եղորոսին հանդիպեցան . եր-
դումով աղաւեցին , թէ (**) Վանատուր
Դիոսին համար ըլլայ քաղքին ճամբան ի-
րենց ցցընէ : Անալ շուտ մը զանոնք նստե-
ցուց ծառին տակը՝ շուք սեղ մը , և իրենց
քիչ մը ուտելու բան հանեց լաւ մը մեծա-
րեց . յետոյ սլատւելով զանոնք առաջնոր-

(*) Աբովեմ լածուակին մէր մէջ Անահիտ իշ-
չէր . որ Հայոց աղքէն գւիսաւուր կուռածն էր . Ու-
իշհար վարդամարն ուրեր էին անունը : Կու-
ռաչանեւուիսէին , որ այս լածուակին Դիմուին աղ-
քին էր և Ապողունին +ոյրը . որ Բուր Ասիսովին
պաշտպանը ուրեր էին . անոր համար ասոր Քուռ-
մերն աւ Շեշիսերը ասանի պատեցան Եղբայրնեւ-
սէն մէր Ճեմարանին 651 համարը :

(**) Պահա ի Աբովադդ' կուռածն ծեր լածին
որդին ըլլաւով , Բուր լածուերան հայրը իւ իշ-
չէր և ամենամ գլուխը . որ հին կուռաչանեւը
անոնի մէծ իւ ուրեին , որ անոր անուսանը ինւիւն-

դութիւնը ըրաւ մինչև շխտակ ճամբան հանեց։
Իսկ ճամբորդները ուրախանալով Եզրոսին
մէծարանացը վրա, և անոր երախտիքը ճանչ-
նալով ջերմեռանդ սրառով թևերնին վեր-
ցուցին երկինքն ու աղօթքը ըրին պաղատան-
քով իրենց բարերար Եզրոսին համար։ Ե-
զրոս գարձաւ իր տեղը, բայց ճամբուն աշ-
խատանքէն և տաքէն յոդնած ըլլալով պառ-
կեցաւ քնացաւ։ Բայց քունին մէջ երազ մը
տեսաւ թէ (*). Բաղդը մօտեցաւ իրեն, ու
լեզուն բացաւ։ և իրեն տըւաւ զօրութիւն
խօսելու, և առակներ շնորհուած ։ Ո՞չ ըստ
արթըննալով, ի՞նչ անոյշ քնացեր եմ. և ի՞նչ
բարի երազ տեսայ. ահա ի՞նչպէս զարմա-
նալի դիւրութք կըխօսիմ. ահա առանց
դժւոր թէ կընամ ամէն բանին անուննե-
րը տաւ եւ, եւ, բեր։ Գիտէ Երկնաւորն,
որ այս բարիքն ինծի եղաւ երախտեացս փո-

թիւ + ո՞ւ ըլլար՝ հարիսաւ կադարէւսւ ։ Ո՞սպէ-
տա անգամ օգնիւ գլուխ հայր իւ իւնին, և եր-
բեն կանագուշ, այսինքն ինեամօզ Տէ՛ Ճէմ. 619:

(*) Որովհեաւ Բաշուագ այս պատմանիներս
կառպաշտներան գրեանց մէջն հաներ եւ որոնց
ո՞վ օգարախանին միւսսաֆիրին պատիւ օգնուի-
լունէւ ։ Սա մէծ բան եւ ինպէս ո՞ւ ամեն ապդի
օրէւնին ։ Ո՞սպէ Եղաբարին ըրած բարեւարաննե-
նեցուի հասկացնէւս հայտ, իւնին՝ իւ բարդու-
իւն հադաշուայ ըրած ո՞ւ ամեն իւնին գու-
իւ բարդու մէկ ո՞ւ իւ կը իւցած, ո՞ւ սա անգամ
դիուած կը իւցած բարին անարժաններան, և ի-
պէսներ ո՞ւ արժանաւորին պայ. բայց առաջինին
հարդին աւան կը իւցէր, բարին ո՞ւ չիւցիւ իւնին։

իսարէնը, որ մոլորած օտարականներուն ըրին
Ուրեմն Երբոր մէկը բարերարութիւն կընէ,
պիտի յուսաց թէ հարկաւ իրեն ալ բարի
կըլլայ : Եզրոյս տեսնելով թէ այս մեծ բա-
րիքն իրեն հանդիպեցաւ՝ ուրախութե՛ լց-
ւած սկսաւ ալ աւելի հոգ տանելով աշխա-
տիւ անանկ սրտանց, որ չէ եղած :

ԳԼ. • Դ .

Վաճառաւուն Եղունդուի :

Օ Ենաս անունով մէկը վերակացու էր
դեղի տանը, ուր կաշխատէր Եզրոյս : Այս
մարդը ելաւ արտը դնաց որ տեսնէ, թէ
ծառաները հաւատարիմ կաշխատի՞ն ինչ որ
իրենց հրամայած է : Տեսաւ որ աշխատով-
ներուն մէկը անհոգութե՛ իր գործքը թո-
ղուցեր չէր աշխատէր, մէկէն վրան վազեց
սկսաւ սաստիկ ծեծել խեղճը : Այս ան-
գթութե՛ը չդիմացաւ Եզրոյս, սիրաը ցա-
ւելով մօտեցաւ ըստաց . ինչո՞ւ համար ասանկ
չարաչար կը զարնես խեղճ մարդուն, որ
քեզի գէշութիւ մը չէ ըրած . դուն այն մար-
դը չե՞ս որ ամէն օր բոլոր տանը մարդկանց
նեղութիւն և չարչարնեք կուտաս առանց
պատճառի . իրաւ որ ըրածներդ կըսէմ մէր
տիրոջը : Զենաս լսելով Եզրոյսին զուրցած
խօսքերը շատ զարմացաւ անոր համարձա-
կութե՛ը վրա , ուստի մէկէնիմէկ ինքնիրեն

մտմըտալով կըսէր . թէ ահա Եզօբոս խօսիլ
սկսաւ . ասկէ ետեւ իմ բանս խիատ գէշ է .
մանաւանդ երբոր տրս հասկընայ իմըրած-
ներս : Ուրեմն պէտք է որ ես Եզօբոսէն ա-
ռաջ խօսիմ , և ամբաստանութիւննեմ անոր
վրան . վազ զի տրս իմ գործքերս խմացածին
պէս զիա կը վուղնատէ պաշտօնէս :

Ասանկ մտածելէն ետեւ ճամբայ ելաւ քա-
ղաք գնաց տրը գտաւ . և մօտենալով քովը
խռոված երեսով մը բարեեց : Տըլ երեսը
նայելով հարցուց՝ թէ ի՞նչ պատճառէ եկած
է քեզի այդ խռովութին , որ կերպարանքէդ
կերենայ : Պատասխանեց Զենաս , թէ գե-
ղի տունդ մէկ արտաքոյ կարգի հրէշ մը ե-
ղաւ : Ի՞նչ է ըսաւ տրը , ծառերուս մէկը
ատենէ գուրս սպառով արւաւ , թէ ձիերս
ցուցանք ծնան : Զէ ըսաց Զենաս , հապա
Եզօբոս որ միշտ համբ էր չէր կրնար խօսիլ ,
հիմա խիստըաւ կը խօսի : Զայնդ վար քաշէ
ըսաւ տրը . հրէշի տեղ ես գրեր այդ գիտ-
ւածը :

Կրկնեց Զենաս . որ իմ Ճշմարիտ կըսէմ , որ
ես լոռւթենով անցայ , և չեմ պատմեր Ե-
զօբոսին ինձի տըւած նախատինքները . բայց
աէրութեդ և Ածներուն գէմ ըրած հայ-
հոյանքներուն , և յանդգնական խօսքերուն
չեմ դիմանար . ահա կըսպատմեմ : Այս խօս-
քերս որ լսեց տրը անանկ բարկացաւ Եզօ-
բոսին վրա , որ մէկէն ըսաւ , թէ ահա այն
թշուառականը քեզի յանձնեցի , ի՞նչ որ
կուզես , ըրէ անոր . կուզես ծախէ , կուզես մէ-
կին տուր . ի՞նչպէս սիրատ կուզէ անանկ ըրէ .
Վազ զի ես . քու կամացդ կը յանձնեմ զայն :

ԶԵՆԱՍ ԵՐԲՈՐ Բացարձակ առ Եղան Եզո-
 բոսին՝ հասկըցուց անոր, թէ իր ազատու-
 թել բոլորովին անկէ կը կախվի: Եզոբոս
 ալ տատասիան տրւաւ, թէ ինչ որ ձեռ-
 քէդ կուգայ ըրէ ինձի. և որ բանն որ հա-
 ճոյ է քեզի, իր անձիս հրամէ: Այս խօ-
 սակցութես վրա յանկարծ վաճառական մը
 Եկաւ հոն անասուն դնելու համար. հար-
 ցուց ԶԵՆԱՍԻՆ, թէ ունիս ծախու անա-
 սուն: Անալ չէ ըսաց. բայց մէկ գերի մը
 ունիմ ծախու, որ հոս մօտ է, ուղես կրնառ
 գնել: Զայս ըսելով կանչեց Եզոբոսը առ-
 ջին: Խոկ վաճառականը Երբոր տեսաւ անոր
 կերպարանքը՝ սկսաւ ծիծաղիլ Ռւստի գտեր
 ևս ըսաւ այս ցուցանքը, որ պատկի նման
 է: Մարդ է, թէ ծառի կոճ. թէ որ ձայն
 ալ չունենար՝ ոլիտի կարծէի թէ տիկ է հո-
 վով լեցուն. ինչո՞ւ ճամբայէս արդելեցիք.
 տսանկ մէկ այլանդակ մը ինձի ցցընելո՞ւ
 համար: Այսպէս խօսելով սկսաւ Երթալ-
 խակ Եզոբոս ետևէն վազեց. կաղաչէր որ
 քիչ մը կենայ. վաճառականը բարկանալով
 կըսէր. գնա կորիր գարշելի: Պատսախա-
 նեց Եզոբոս, թէ հասկա ինչո՞ւ համար այս
 դեղս Եկար: Եկայ որ ըսաւ վաճառականը՝
 լաւ բան մը գնեմ. բայց ինձի հարկաւոր չէ
 ասանկ տգեղ անալիտան մարդը, ինչպէս որ
 դուն ևս: Զիս գնէ ըսաց Եզոբոս. եթէ
 ինձի կաւտաս, քեզինեղութի մը չեմքերեր.
 և անանկ լաւ ծառայութի մը կընեմ, որ
 մոքէդ ալ չէ անցած: Հարցուց վաճառա-
 կանը, թէ ինչ օգուտ կրնամ յուսալ քեզ
 մէ, որովհետեւ ասանկ կերպարանքի մէջ էս,

ամենուն ատելի և դարչելի կը լսաս : Պատասխանեց Եղբայր, թէ չունիս տանդ մէջ անհանդարու կանչըլուտօղ լավկան տղաք . զիս անոնց վրա դիր . որոնք զիս տեսնելով իբր մէկ զարհութելի բանէ մը կը վախնան : Խնդաց այս խօսքիս վրա վաճառականը . ետ դարձաւ Զենասին հարցուց, թէ ինչ տամ որ ինձի տաս այս ողորմելին : Անտել ըսաւ երեք դրամ (*): Վաճառականիը հանեց ստակը արւաւ ըսելով թէ ոչինչ արւի . ոչինչ դնեցի : Ուստի երկուքը միատեղ սկսան գնալ, և երբոր հասան վաճառականին տունը, երկու աղաք կային հոն, որ դեռ կաթ կուտէին, տեսածնուն պէս սկսան պօռալ : Տես ըսաւ ալիրոջը իշնչպէս խոստմունքս կատարվեցաւ, հիմակուց վախցան տղաքը : Վաճառականը խնդալով պատւիրեց, որ մէկալծառաները բարեւէ . որոնք տեսնելով զայն կը զարմանային իրարու ըսելով . իրաւ որ այս մէկ մէծ գժբաղդութիւն մը կը նշանակէ մեր տիրոջն որ ասանկ անշնորհք մարդ դնեց . երեսութը կը ցցընէ թէ ատանը սլիտի բերէ մէկ գէշ ձախորդութիւն մը (**):

(*) Գառավարին իշտնէ օպօլ . իսկ Յոյնը օվօլու . որ իշնչանակէ՝ դրամ դանի նատարայիդա . որ հին Յոյնեց իշ գործածէն այս պատիւ . բայց յարդնի չէ թէ դանի զարդարաւ իշրժեր մէկ օպօլը, մէկեա իշտանար թէ օսծ եր գինը :

(**) Ուշացնեաւ հեթանուննը ամեն բան իտիւրդնիք իշ մէինեին, միւլ բնական բաներն աւ այն մարտկն իտանեին . պարօքինակ աւտին իտալւը, առաջանց դիմացնին եւած մարտը, ևն . որ միւլ


Արքունի
39

Գ. Լ. Ե.

Ճարդար ճառանբելի Եպահութիւն :

Քանի մը օրէն ետև վաճառականը կա-
մեցաւ Ասիա երթալ . ուստի ծառաներուն
սկառտիրեց , որ բեռները կապեն սկառրաստ
ըլլան որ մէկալ օրը ճամբայ ելլեն : Անոնք
ալ ամէն բան կարդաւորեցին ինչպէս որ
ողբը սկառտիրեր էր , և բաժնեցին իրենց մէջ
բեռները ինչ որ ամէն մարդ պիտի տանէր :
Եզրոս կազաչէր որ իրեն թեթև բեռ տան .
որովհետև ամմէնէն ետքը նոր եկած ըլլալով
ասանկ բաներու սորված չէր : Անոնք ալ
զինքը սկառտաւորեցին որ բան մը չառնէ ,
և աշխատանք չի քաշէ : Պատասխանեց ա-
նոնց թէ արդարութիւն չէ առանց աշխատան-
քի մնալ . ամէն մարդ պէտք է իրեն բեռը
տանել : Ընկերներն ալ իրեն կամացը ձգե-
ցին . ինչ բեռ որ ուզէ , զայն թող աանի ի-
րեն յարմար : Եզրոս ապին անդին նայե-
լով կըդիտէր բեռները , ամանները և տօպ-
րակները . աղաչեց որ հացին ամանը իրեն
կունակը տան , որ երկու հոգու բեռ էր .
ուստի սկսան ամմէնքը խնդալ վրան ըսելով

Հիմա մամեդները իւղահեն : Ահա Եպահութիւն իւր-
ագարանին նայելով աշէի չի սեպեցին , իարծե-
ւէ , նէ պահը յախորդանբելի ոիդի բերէ :



թէ այս խեղճ՝ գերիին պէս անխելք մարդ
կայ արդեօք աշխարհքիս մէջ. որ իր յիմաւ-
րութիր ահա ամենուն յայտնի ըրաւ. վասն
զի խնդրեց թեթև բեռն ու ընտրեց առաւ-
խիստ ծանր բեռը : Սակայն պէտք եղաւ ա-
նոր կամբը կատարել. ուստի բարձուցին
վրան բեռը . որ այն ծանրութեւ տակը աշ-
խատելով ասդին անդին կըդլորէր : Իսկ
վաճառականը այնչափ բեռն անոր կռնակը
տեսնելով կըզարմանար, թէ այս ինչ ջան-
քով կաշխատի Եղոբոս . իրաւ որ կըաէր՝ ա-
հա իր դինը հանեց . զի ձիու մը բեռ մինակ
կըտանի :

Երբոր հասան պանդոկ խօնախ մը, պէտք
եղաւ բան ուտել. Եղոբոսին հրաման եղաւ
որ ամէն ծառաներուն հաց բաժնէ . անալ
որ բաժնեց ամանին կէսը հատաւ կերակ-
րէն ետքը . և բեռին կէսը թեթեցաւ անանի
որ շատ գիւրութիւն կերթար ճամբան : Իրի-
կունն ալնորէն բաժնեց ծառաներուն հաց.
ուստի մէկալ օրը Եղոբոսին ամանը սլարդե-
ցաւ . որ կռնակը զարկած առանց աշխա-
տանիքի կերթար ամենէն առաջ . որոնք չլի-
տէին ինչ ըսեն . մինչև կը տարակուսէին ,
թէ իրենցմէ առաջ գացողը Եղոբոնն էր թէ
ուրիշ մարդ . բայց երբ գիտցան թէ այն է՝
շատ կըզարմանային իրեն ճարտարմտութեր
վրա . որ անանկ տգեղ անշնորհք մարդ ըլլա-
լով ծաղը էր եղեր իրենց , ու այնալիսի խելք
բանեցուց հացին ամանն առնելով . զի լաւ
դիտէր թէ այն բեռը շատ չպիտի մնայ ի-
րեն վրան : Իսկ ընկերներն ուրիշ բեռ առ-
նելով չի կրցան յոյս մը ունենալ, որ բե-

ուն թեթևան ճամբորգութե մէջ . որով
հետեւ ծախվելու բաներ էին չէին կրնար
սլակսիլ ուտելու բանի պէս :

ԳԼ. Զ.

ԵՐԻՇԻՇ ՀԱՅՈՒԹՈՒՄ ԵՎԱՀԵԿՈՒ:

Ա աճառականը Աղիս հասաւ , և հոն իր
գերիններուն շատը ծախեց աղեկ դնուլ . մի
այն երեք հոգի մնացին քուլը . մէկը նօտար
էառըձը , մէկը երդիչ հանէնքն , մէկալն ալ
Եզրոս : Վաճառականին մէկ բարեկամը ի-
րեն խորհուրդ կուտայ , թէ այս երեք գե-
րին ծանր դնուլ ծախելու համար (*) Սամոս
կղզին երթայ հոն ծախէ : Երբոր հասաւ
հոն աղեկ լաթեր հագցուց նօտարին ու եր-
դիչին , վաճառանոցը Քաղաք հանեց , որ ծա-
խէ : Բայց Եզրոսին յարմար բան մը չի
դատաւ հագցըննելու , որ քիչ մը զարդարվի .
որովհետեւ անանկ անճոռնի էր մարմինն՝ որ
միայն մէկ քուրձ մաղե հագուստ մը կրցաւ

(*) Սամոս կղզի ըստ ամ . սուսամ առաջը
և Եփուսին Դիմաց Սիդիւլին անդին . որ հին
ապէնը շնուրական կամաց անուննե անդ էր և
բնաւիլու անուանի էին . որ կառէ աման շնուն
առանց գառն կըսէ Պլինիսիս . այս կղզին էր
Պլինիսիսի ուրան Քիւլիսիս :

հագցընել. և անանկ այլակերպ դրաւ ընկերներուն մէջ, որոնք որ կը տեսնէին՝ զարմանալով կըսէին, թէ այս հրէշս ուրիշ բանի չի գար, հապա մէկալոնք ալ կաւրէ: Եղորոս թէսկէտ միշտ ասանկ ծաղք կըլլար անարդվելով ամէն տեսնողներէն, սակայն ամենեին չէր այլայլէր, և ամենուն ուշ դնելով միակերպ կընայէր: (*) Գսանդոս ֆիլիսոփան անառենը Սամաս կղզին կը բնակէր. որ մը ելաւ վաճառանոցը գնաց. երբոր տեսաւ թէ այն երկու ծառաները լաւ հագւած էին, և Եղորոս անոնց մէջ անանկ անշնորհք հագուստով շատ զարմացաւ վաճառականին հնարքին վրա, թէ այն այլակերպ մարդք գրեր է մէկալոնց մէջն, որ անոր անշնորհք երկնալովը մէկալոնք աւելի գեղեցիկ երենան:

Ուստի այս ֆիլիսոփան մօտենալով անոնց՝ հարցուց երգիչին, թէ ի՞նչ տեղէ ես: Անալսատաօխան տըւաւ թէ (**): Կապագովկացի եմ: Հարցուց թէ ի՞նչ գիտես ընել: Անալ-

(*) Այս ժիշտութան թէպէտ շատ երևելի էր, բայց այն իշխանին մէջ մէծ անուն ուներ. վասն շէ տառչին ուղբարձունը գլուխին եր, ու շատ աշխարհական աներ, և շատ մէծ անդի. մինչև ամենա աշխարհին յարգելի էր:

(**) Կապագովկաչին իշտվ զայսէրի. որուն բնակիները զայտիր իշտվէին: Կէրտեայ թէ այս գէրին առեւշտան իշտվէին էիսծ կապագովկաչին երկար հաւաքնիքն առշվարչն է, իսմ ծնուզը հռն է. իսծ ծախովն էն, և իրենց պատահին աւգէրի ըւտակ վաճառականը գներ է:

ըսաւ, ամէն բան գիտեմ: Այս պատասխանիս լրաց խնդաց Եղորոս ակռաները բանալով: Քսանդոսին աշկերտները իրեն հետ ըլլալով Եղորոսին երեսն որ տեսան անանկ ակռաները բաց, կարծեցին թէ մէկ ցուցանքմը է. որոնցմէ մէկը կըսէր, թէ անտարակոյս այս մէկ կատղած կենդանի մը ոլիտի ըլլայ, որ ակռաները բացաւ: Մէկալն ալ կըսէր, թէ արդեօք ի՞նչ բանի համար ծիծաղեցաւ: Մէկ ուրիշն ալ կըսէր, թէ սոսկալով խոժոռեցաւ ու դէմքը ծըռեց, չէ թէ ծիծաղեցաւ: Ուստի ամէնքն ալ ուղեցին հասկընալ անոր ծիծաղին պատճուր, մինչև մէկը մօտեցաւ Եղորոսին հարցուց, թէ ինչո՞ւ համար անանկ խնդացիր: Անալ ըսաց. գնա քովէս ծովու ոչսար: Այս պատասխանս անանկ ամըջուց զայն, որ տայքնալով մէկէն փախաւ:

Իսկ քսանդոս հարցուց վաճառականին, թէ երդիչին դինը ո՞րչափ է: Անալ ըսաւ հաղար դահեկան: Քսանդոս տեսաւ որ չափազանց է դինը, գնաց մէկալ գերիին հարցուց. որ քաղքէն ես: Պատասխանեց: թէ (*) Լիւդացի եմ: Ի՞նչ բան գիտես հարցուց: Անալ ըսաւ՝ ամէն բան գիտեմ: Եղորոս լսելով, նորէն սկսաւ խնդալ: Այս գիլիոռփային մէկ աշկերտը չիյաէր թէ ինչ պատճառաւ կըխնդայ, ուղեց հարցընել. բայց իր ընկերներէն մէկը զինքն արգելեց ըսելով. թէ որ գուն ալ կուղես ծովունո-

(*) Լիւդացի + Հին արէնը արգեին Աժրէին գասարին մէջ. որոնցմէ գէրէ ելոծ է նօդաբ:

խազ կոռվիլ նէ հարցուր : Անատենը Քսանդոս մօտեցաւ վաճառականին հարցուց թէ քանի՞ է նօսարին գինը : Պատասխան տըւաւ թէ երեք հազար գահեկան :

Այս չափաղանց գինը Քսանդոսին սիրտը նեղացուց , ուստի սկսաւ ետ գառնալ : Բայց աշկերտները հարցուցին թէ չի հաճեցար գերիներուն . հաճեցայ ըսաւ . իմ ուղածուն . սակայն օրէնք դրած է , որ մէկ գերիի համար այնչափ ստակ չի տըրւի : Եթէ այդ պէս է ըսին՝ օրէնքի գէմը ըըլլամ , թէ որ տըր գեղ գերին գնես . որ անոնց չափ քեզի ծառայութիւն կրնայ ընել . և մենք կըլճարենք անոր գինը ինչ որ կարժէ : Պատասխանեց Քսանդոս , թէ խելքի գէմը բան է , որ գուք գնէք՝ ես ծառայի առ ըլլամ : Ո՞ւր թողունիք որ իմ ընկերս աւելի զարդարանիք և մաքրութիւն կրսիրէ , նայինք կուզէ՝ ասանկ աղտոտ և այլանդակ ծառայ : Անոնք ալ ըսին թէ այս սլատճառը չի կրնար խափանել , որ չի գնես այն գերին . որովհետեւ առակ մը կայ կըսէ , որ պէսաք չէ հնազանդիլ կնկան խօսքին , և անոնց շատ մտիկ ընել :

Քսանդոս ըսաւ , թէ քանի որ չենք գնած երթանիք նայինք բան մը գիտէ . ըըլայ թէ ծովը նետենիք տըւած ստակնիս : Ուստի մօտեցաւ Եղոբոսին ըսաց . ուրախ կեցիր : Ինչու համար՝ հարցուց Եղոբոս . միթէ ես սըր տում եմ : Քեզի կըբարեեմ ըսաւ Քսանդոս . անալ ըսաւ և ես քեզ կըբարեեմ : Վամենքը զարմացան այս չնորհքով պատասխանիս վրան : Հարցուց Քսանդոս , թէ գուն ուստի՞ ես : Ես ըսաց՝ սե եմ : Այն չէ հար-

ցուցածս ըստւ . Ես կուզեմ խմանալ , թէ
ո՞ր քաղը էն ես , և ո՞ւր տեղէն : Ես մօրմէս
եղեր եմ , ըստց Եղոբոս :

Այն չեմ ուզեր գիտնալ ըստւ , հասկա
ո՞ւր տեղ ծնած ես : Պատասխանեց Եղոբոս ,
թէ իմ մայրս չէ պատմած ինծի , թէ ուր
ծնած եմ . տանը վերը , թէ բակը (*):

Ի՞նչ բան գիտես՝ հարցուց Քսանդոս :
Ասալ ըստց՝ բան մը չլիստեմ : Ի՞նչ ըսել կու-
զե՞մ՝ հարցուց : Պատասխան տրւաւ Եղոբոս .
որովհետև այս գերիներն ըսմն , թէ ամէն
բան գիտենք . ինծի բան մը չի մնաց գիտ-
նալու : Այս խօսքերուս վրտ խխատ շատ
զարմացան փիլիսոփային աշկերտները : Ի-
րաւ որ , կըսէին զարմանալով , այս մարդը
յայտնի ըրտաւ իրեն խելքն ու միտքը այս
խօսքերովս . ո՞վ կընայ պարծ ենալ , թէ ամէն
բան գիտեմ . ահա այս է եղեր պատճառն
որ կըխնդար և ծաղը կընէր անոնց տրւած
պատասխանը :

Նորէն հարցուց Քսանդոս , կուզե՞ս որ
քեզ գնեմ . անալ ըստւ , թէ այս խօսքդ ա-
մենեին ինծի հարցընելու բան չէ . կուզե՞ս
գնէ , կուզե՞ս մի գներ . քու միաքդ ինչ որ
կըմկայէ , զայն ըրէ . պէտք չէ որ մարդս
բռնի ակամայ բան լնէ . այս դործքս բոլո-
րովին քուկին կամքէդ կըկախիլ : Թէ որ
կուզե՞ս զիս գնել , բաց քատակդ ու ստակ

(*) Հին ապէնի իմաստանէրուն մէջ սունը ունի
եր այսպիսի հարց մուն + պատասխան ընել : Եղո-
բոս ալ անոնց սովորութէը նայելով այս ամը
բռնէց . մինչև զարմացաւ իմաստը ինէրը :

Համբէ . և եթէ չես ուղեր գնել , հանդիստ
կեցիր , ալ մի խնդար վրաս : Աշկերաներն
իրարու կըսէին , թէ ճշմարիտ որ մեր վար-
պետին յաղթեց : Թէ քեզ գնեմ ըսաց Քսան-
դոս , ալիտի ջանա՞ս փախչելու : Եղորոս ծի-
ծաղելով ըսաց . թէ ուղենամ փախչել քեզի
չեմ հարցըներ , ինչպէս որ քեզ ալ պէտք չէ
ինձի հարցընել : Լաւ կըխօսիս ըսաց Քսան-
դոս , բայց խիստ այլանդակ ես : Պատաս-
խանեց Եղորոս , թէ փիլիտոփային կըլայլէ
որ մարդուս խելքին ու հոգուն նայի , չէ
թէ դէմքին :

Ան ատենը Քսանդոս գնաց վաճառակա-
նին հարցուց . թէ այս գերիին դինը ի՞նչ
է : Անալ ըսաց թէ եկեր ես որ իմ գերի-
ներս վար զարնես , լաւ և գեղեցիկ գերի-
ներս չուղեցիր գնելու : Հիմա եկեր տգեղ
մարդուն ար կելես . կուղես մէկալ երկու-
սին մէկը գնէ . ասալ անոնց վրա առ առանց
ստրկի : Չէ ըսաւ Քսանդոս , ես ալիտի զայս
գնեմ : Ուրեմն տուր ըսաց վաթսուն գահե-
կան : Քսանդոսին աշկերաները չուտով համ-
րեցին ստակը , և գնեցին Եղորոս : Մաք-
սաւորները նիդապանները եկան քննելու ,
թէ ովէ ծախօղը , և ովէ գնօղը . բայց երբոր
հասկըցան , թէ ոչինչ գնով է ծախվածը ,
ամբցան : Խոկ Եղորոս ոտքի վրա ելաւ կան-
չեց . թէ ահա ես եմ ծախվաղը . ահա զիս
ծախօղը և գնօղը . թէ որ ասոնք ձայն չի հա-
նեն , ես ազատ կըմնամ : Մաքսաւորները
ծիծաղելով մաքս չառած ելան գային :

Գ. Լ. Ե.

Եղութեան էրնայ ՚ի պահ :

Երբոր ՚Քսանդրոս տուն դարձաւ պատեի-
րեց Եղորոսին, որ դռանը քով սպասէ,
որովհետեւ դիտեր որ կնիկը բանի մը չեր
հաւներ, այն այլանդակն որ տեսնե՛ չըլ-
լոյ թէ բարկանայ, ուզեց նախ անուշ քա-
զաքավար խօսքերով սիրաը շահել, ու յե-
տոյ ներս բերել կոչտ Եղորոսը : ՚Քսանդրոս
ներս մտաւ, մօտեցաւ կնկանն ըսաց, թէ
Տիրուհի ասկէ ետեւ այլ երեսս չես զարներ
աղախիններուդաշխատանքը, ահա քեզի ծա-
ռայ մը գնեցի, որ իմ առջևս անանկ աղւոր
շնորհքով է, որ այնովիսի սիրուն մարդ չես
տեսած : ահա գուանը քով կեցեր է: Երբոր
ասանկ կըխօսէր՝ աղախինները վազեցին որ
տեսնեն, և կը մտմքսային, թէ որերնուն
հետ պիտի բարեկամ ըլլայ: Իսկ Տիրուհին
հրամեց, որ ներս գայ նոր գերին: Աղախին-
ներուն մէկը վազեց կանչելու համար, եր-
բոր տեսաւ, դուն ես ըսաւ Եղորոս ծա-
ռան . թէ որ դուն ես՝ ներս մի՛ մտներ, վա՞զի
քեզ աեսածնուն պէս ամենքը պիտի փախ-
չին: Մէկ ուրիշն ալ դուրս ելաւ ծաղր ը-
նելով կըսէր, թէ դէմք փոխէ, անանկ
ներս մախիր :

Եղորոս ներս մտաւ գնաց Տիրուհին առ-

ջին . որ տեսածին պէս աչքը դարձուց եր-
կանն ըստաց . ուր տեղէն փնտըռեցիր դտար
այս ցուցանկոս . վերցուր առջևէս վերցուր:
Կաղաչէր քսանդոս , թէ մի խռովիր . մի
անարդէր նոր գերիս : Ես ինչպէս կրնամ
համբերել կըսէր կինը . ահա ասով հասկը-
ցայ որ դուն զիս քամահրել կուզես , ու կա-
տես . կերենայ , թէ ուրիշ մը կուզես բե-
րել . անոր համար այս գերին բերիր , որ ես
իզմէ երթամ տնէն . ուրեմն տուր իմ բա-
ներս , Ես կերթամ :

Քսանդոս տեսաւ որ չըլլար , սկսաւ ա-
նարդելով ըսել Եղոբոսին , թէ ամէն բանի
սպասասխան կուտայիր , հիմա ինչո՞ւ կնկանս
բան մը չես զուրցեր : Պատասխանեց Եղո-
բոս , թէ մէկ փոսի մը մէջ ձգէ կնիկդ :
Կտրէ ձայնդ ըստաց , շատ մի խօսիր սիրելի
ընկերոջս դէմ : Եղոբոս ոտքը գետինը զար-
նելով կըսէր , թէ ահա արս գերի բռնըւած
է կնոջմէն : Ո՞վ մեծդ (*) Եւրիբիտէս , չու-
նիմ քու ճարտասանուիդ որ քեզի պէս խօ-
սիմ . խխատ լաւ կըսէիր , թէ || ծովուն կա-

(*) Եւրիբիտէս եւ Յոյն բանապէշտ երեւել
Սաղամինա կղզին , ուր ծնաւ շատ տարի առաջ
գույն լուսականնեն . ու մէկ ժորած ծայրէի խայայի
մը մէջ + առջած իշտէր իր բանապէշտ ու մէկնէը
որոնք շատ մէծ յարգութիւննեցան Յոյնաց մէջ
այս գրչած մէջէն մինչև հիմա իշտ գուշակնեն . Եւ-
րիբիտէս շատ անգամ իանանց գործութիւննեւ
անանց դէմ շատ առականուր խօսիւթէ և վճիռներ
իշութ . այս լադ ու անունը Եւրին կանանց թշնամի ,
ահա այս բաներէն բերած է Եւրիս այս խօսիւ:

տաղութիւն սոսկալի է, գետերուն առատա-
նալը սարսափելի է, կրակին բռնութիւնը ա-
ղետալի է, և աղքատութիւնը անտանելի
խեղճութիւն է . հաղար կերպ պատահմունք-
ներ կան, որ արտմութիւն և վիշտ կը բերեն .
սակայն անզգամ կնիկը ամէն չարուիներէն
աւելի է || : Այս դիտնական բանիս վրա
մտածելով ու Տիրուհի, քեզի շատ մեծ բան
է որ ասանկ Փիլստփայի կնիկ ես եղեր .
խելքդ գլուխդ ժողվէ, ըրլան թէ աղւոր
մանուկ ծառայ առնես քեզի, որ անպատ-
ւութիւնը մը չի բերես ընկերոջդ :

Այս խօսքս կնիանը խելքը տարաւ, ա-
նանկ որ չեր դիտէր ինչ սկատասխան տայ .
մինչեւ դարձաւ երկանն ըստաւ թէ ուստի դը-
տար այս շնորհքով գերին . իրաւ կըսեմ, որ
չափ տգեղ և այլոնդակ է, այնչափ սիրելի
և անոյշ է, ուրեմն ես հետը կըվարվիմ կու-
ղեմ : Քսանդոս դարձաւ Եզրոսին ըստաւ,
թէ ահա Տիրուհիդ քեզի հետ հաշտըւեցաւ :
Պատասխանեց Եզրոս, թէ ուրեմն այնչափ
խեղճ մարդ չեմ եղեր ես . որովհետեւ մէկ
կին մը հաշտեցրնելը պղտիկ բան չէ : Չայնդ
վար քաշէ ըսաց մըրը . ես քեզ գնեցի, որ
ինձի ծառայութիւննես, չէ թէ դիմադար-
ձութիւն :

ԳԼ. Բ.

Պատրասիանագուասի Եղավանի :

Վասնդոս մէկալ օրը հետն առաւ Եղու
բոսն ու գնաց պարտէզ մը բանջարեղէն գը-
նելու համար : Եղորոս առաւ ձեռքը պար-
տէզանին ժողված կանանչեղէնները . Քը-
սանդոս ստակը տալու ատենը , պարտէզան-
նը այս խօսքս ըստց . Կաղաչեմ , մէկ բան
մը պիտի հարցընեմ , ինձի պատասխան տնւրի:
Ի՞նչ է տարակոյսգ հարցուր ըստաւ : Զեմ՝
հասկընար՝ կըսէր , ինչու համար բանջարե-
ղէն բոյսէրն , որ այնչափ հոգ տաննելով կը-
տնկեմ , կըջրեմ , ու ասանկ ուշ , և դժւա-
րաւ առաջ կուգան . և ընդհակառակին ին-
քիրմէ բուսած խոտերը առանց փորելու և
ջրելու շուտ առաջ կուգան . ի՞նչ է պատ-
ճառը :

Այս խօսքս թէպէտ Գլիխառիայտական
խնդիր է , բայց Քսանդոս չի կըցաւ լուծե-
լու . այլ մէկ ընդհանուր պատասխան մը
տղւաւ , թէ այնախախնամութեան գործքն
է , որ ամեն բան կը կարդաւորէ (*):

(*) Կախախնամութեան իշունի աւելութ գնդեսութ .
Հին ժիւմանութաները ասուն կիշանային ածացին իս-
տավարութին , որ ամէն բան իր կայտնութը անանի իշ-
կարգադրէ . որ իշենց կախախնամութեան իշհամանին : Կա-
ռաւզ ժիւմանութաները և իշաշան ուստի ածացին

Եղոբոս լոելով սկսաւ այս պատասխանիս
վրա խնդալ։ Զիս ծաղը կընես, ըստց փի-
լիսովան, թէ կըծիծաղիս։ Պատասխան տը-
ւաւ Եղոբոս, թէ իրաւ ծաղը կընեմ, չէ
թէ հրամանիքդ, հապա քեզի սորվեցընօղը։
վո՞զի անանկ մէկ հասարակ պատասխան մը
տըւիր, որ գիտունները ամէն հարցմունքի
կընան տալ, որոնք բաւական կըկարծեն ը-
սել, թէ ամէն բան այ նախախնամութիւն
կըկառուլարէ։ Ինձի հրաման տուք ես պա-
տասխանեմ սլարտէզպանին։ տեսնես թէ
ինչպէս կըհանգչի սիրոը։ Ան ասենք Քը-
սանդոս գարձաւ սլարտէզպանին ըստւ, թէ
վայելուչ բան չէ, որ ես երեւելի գպրատուն-
ներու մէջ Փիլիսոփայութիւնըած եմ, հիմա
կենամ սլարտէզի մէջ բան վարդապետեմ։
ահա իմ ծառաս ալ կընայ քու հարցմունքդ
քակել, թէ որ իրեն զուրցես։ վո՞զի հմուտ
է ասանկ բաններու սլատասխան տալ։

Կրկնեց պարտէզպանը. թէ քէ հ կընայ ըլլալ
որ ասանկ անշնորհք կոշտ մարդը կարդալ
բան գիտնայ. որչափ խեղճ բան է ասանկ
տղեղ ըլլալ։ Տեսնենք կընաս իմ տարա-
կուսանքս լուծել, և սիրաս հանգչեցնել
այս ըստած բանիս վրա։ Եղոբոս սկսաւ ա-
սանկ սլատասխան տալ. Երբոր մէկ կինոմը
երկու անգամ կըկարգըվի, ու առջի երկը-

նախախնամութիւն։ Կի սպեզօջը պէտք է սպեզ-
ծածները իտուալարելով խնամէ իշուեին։ Ահա
այս մասնաւ պատասխան իտուայ բառանդան. որ
բան էլեմոնիայան պատասխան չէ, ինչպէս
Եղոբոսինը։

նեն զաւակներ ունի , և առած մարդն ալ
առջի կնոջմէն զաւակներ ունի . յայանի է
որ այս կնկանը հարազատ զաւակները հետը
բերածներն են . և երկանը զաւակները իրեն
խորդ են . այս պատճառաւ տարբեր կեր-
պով զանոնք կը նայի . մեծ հոգ կընէ , որ
լաւ պահէ աղէկ կերցընէ . և մեծ սիրով
խնամէ իր ծնածնելը : Խակ երկանը զաւակ-
ները չեթէ միայն այնպէս չի նայիր , հասկա-
շատ անգամ կատէ , և ոտքի տակ կառնէ .
անանկ որ զանոնք կը զրկէ , անոնցմէ կը
քաշէ , ու իր զաւերներուն կուտայ . և այն-
պիսի բնական դութ մը կըցըցնէ իրեննե-
րուն . որ կարծես թէ իր մարմինին կտոր-
վանքն են . ասոր հակառակ , մէկալոնք օտա-
րի աչքով նայելով միշտ կըջախէ : Ասանկ
ալ հողը մայր կը սեպվի ամէն բուսած բա-
ներուն . բայց քու տնկածներդ անոր խորդ
զգուակներն են . և իր բուսուցածները բուն
հարազատ զաւակ ըլլալով աւելի հոգ կը-
տանի , ու կաձեցընէ . ուստի քու տնկած-
ներդ խորդ ըլլալով քիչ մնունդ կուտայ ,
որ շատ չեն կրնար աճիլ . վա զի օտար են :

Այս պատասխանը անանկ հանգչեցուց
պարտէզալամին սիրուն որ մէկէն կանչեց Ե-
զորոսին , թէ ես քեզի մեծապէս շնորհակալ
եմ ; որ մեծ տարակուսանքէս զիս աղատեցիր ,
և սիրոս հանգիստ ըրիր : Ուստի երթաս
բարով , որչափ բանջար պատառ կուզես՝
առ գնան առանց ստրկի , և որ ժամանակ
պէտք ըլլայ՝ եկոր առ . ասկէ ետեւ քու պար-
տէզիդ պէս պիտի դաս հոս բան առնես :

ԳԼ. Թ.

Խորայանիս-Ռ Եպիսկոպոսի:

«Պահեմ մը օր անցնելէն ետև Քսանդոս
բաղնիք գնաց, հոն մէկ քանի բարեկամներ
դժաւ. պատվիրեց Եզոբոսին, որ վազելով
երթայ տուն՝ իրեն ոսալ մը եփէ: Եզոբոս
մէկեն տուն գնաց, ու սատանութիւն բանե-
ցընելով, մէկ հատ ոսալ մը առաւ պտուկին
մէջ դրաւ եփեց: Իսկ Քսանդոս բաղնիքէն
ետև ազաշեց բարեկամներուն, որ կերակու-
րը տունն ուտեն, և հասկրցուց, թէ ես
մէկ հարկիք մը չունիմ. միայն թեթև ոսակէ
ապօւր մը պիտի ուտենք: Ասալ ըսաց, թէ
չի վայլէր շատ տեսակ կերակուրներով բա-
րեկամ փորձել. հասկա աւելի պէտք է սիր-
ալ նայիլ:

Անօնք ալ Քսանդոսի հարկիքն ընդունե-
ցան, տունը եկան: Տը կանչեց Եզոբոսին,
թէ մեզի մէկ բաղնիքի ջուր մը բե՛ր, որ զո-
վանանք քիչ մը: Վազեց Եզոբոս գնաց բազ-
նիքին լուացված ջուրը բերաւ տիրոջը տը-
ւաւ. երբոր բերանն առաւ, դարշահոտին
չդիմանալով ըսաւ. ուստի բերիր այս ջու-
րը: Բաղնիքէն բերի ըսաց, ինչպէս որ ինծի
պատվիրեցիր: Քսանդոս բարեկամներուն
առջին բռնեց բարկուեն, ու հրամեց Եզոբո-
սին, որ իրեն մէկ կոնք նշէն մը բերէ: Ա-

նաւքերաւ, ոտքի վսա կեցաւ: Չի լրւաս, ըսաց արը . չէ, ըսաւ . վո զի ինծի ինչ որ ըսիր, այն ըրի . թող ըսէիր . թէ ջուր լից կոնքը, ոտքս լրւա . բեր հողաթափներս, և բոլոր բաներս: Քսանդոս գործաւ բարեկամներուն ըսաւ, թէ այս գնած մարդու գերի չէ, հասպա վարդապետ է: Երբոր սեղան նասան Քսանդոս հարցուց Եզօքոսին, թէ եղան ոսպը : Եզօքոսն ալ բերաւ դքալով մէկ ոսպն որ եփեր էր: Տըր բռնեց մատովը սխմեց, ըսաց . թէ լաւ եփած է բեր: Եզօքոս լեցուց ջուրն ու բերաւ ամանով սեղանը : Հարցուց Քսանդոս, թէ ուր է ոսպը: Քեզի արւի ըսաց : Ի՞նչ, մէկ համ մը եփեցիր: Հրամերես ըսաւ . վո զի դուն որոշ ըսիր, թէ ինծի ոսպ մը եփէ, ոսպեր եփէ չըսիր: Այս խօսքովս խիստ տաքցաւ Քսանդոս . մինչեւ ըսաց բարեկամներուն, թէ թողութիւրէք ծառայիս յիմարութեր, որ մարդը խենթ կը գործընէ:

Հոս եկոր ըսաց Եզօքոսին անզդամ ծառայ . գնաւ խոզի չորս ոտք գնէ . և շուտ մը եփէ, որ ուտենք: Եզօքոս գնաց շուտով բերաւ . երբոր ոտքերը կեփէին՝ Քսանդոս գնաց ծածուկ ոտքին մէկը գորցաւ Եզօքոսին հօն չեղած ատենը . որպէս զի սկառճառ ընելովլաւ մը ծեծէ զայն:

Քիչմը կանցնի Եզօքոս ալ կուգայ կը նայի, որ պտուկին մէջ երեք ոտք կան . կը հասկընայ խաբեռութիւր . ուստի վազէ կերթայ տանը պահած խոզին մէկ ոտքը կըտրէք քերթէ, կըդնէ մէկալոնց հետ կեփէ: Քը սանդոս կըվախնայ, որ Եզօքոս տեսնելով

ոտքին մէկը արակաս, ըլլայ թէ վախչէն պահած ոտքը կըքերէ մէջը կը ձգէ : Եփած ոտքերն որ առաջքերաւ, Քսանդոս տեսաւ թէ հինգ են : Ի՞նչ է այս ըսաց Եղոբոսին. Ես քեզի ըստի որ չորս ոտք գնես : Հրամեր ես ըսաւ . բայց երկու խողին ոտքերը քանի կըլլան . ուժը . ահա դուն հինգ հատ տեսար հոս . երեք ալ վարի խողն ունի, որ կըպահես :

Քսանդոս այս խօսքիս վրա սաստիկ բարկանալով կըաէր բարեկամներուն, թէ ես իրաւունք չունիմ, որ կըաեմ, թէ այս ծառան իմ խելքս գլխէս պիտի տանի : Եղոբոս ուղեց պատճառով խօսիլ տիրոջը հետ. Տը իմ ըսաց, չիշտէս որ թուաբանութեան մէջ որչափ հանում ըլլայ քանակութենէ, այնչափ ալ յաւելում որ ըլլայ, դումարը սիսալ ըլլար : Ուսափ Քսանդոս չի կրցաւ պատճառ մը գտնել, որ Եղոբոսին ծեծ մը տայ, ոկտաւ սիրան ինցնիլ (*):

(*) Եղոբոս երիսու պատճառաւ այս խաբեռալիները բանեցաւ . նախ սովոր պիրոջը աւտը վախչընեւ և իր ինչորսի մարտ ըլլաւը անոր հասկընեւ, որ վարչութերթայ հետը. երիբոր՝ սովոր վրէծինտիր ըլլաւանոր ըբած անորդանացը . անուն հասկընայ, որ եմն առանցին իրեն նեղութիւն գունդուն, մարդու մէջ պինու ծառը չնելութեւը իւ հանէ :

Աւունդինաբանի Եղովունին :

Եղաւ որ Քսանդոսի մէկ աշկերտը մեծ
հարկիք մը ըրաւ իր վարպետին, և բոլոր ըն-
կերներուն : Քսանդոս սեղանին վրա որչափ
լաւ և համով կերակուրներ կար, մէյմէկ
քիչ կը վերցըներ Եղորոսին կուտար, որ ե-
տին կայնած էր : Ասոնք տուն տար կըսէր
իմ բարեսրտիս տուր : Եղորոս առաւ գնաց-
քայց Ճսուբան ինքիրեն մոմբատալով կըսէր,
թէ ահա խիստ աղէկ տեղն եկաւ, որ վրէժ-
խնդիր ըլլամ մեր Տիրուհին . որ հասկընայ
անանկ իմ վրաս անողորմ ինդալն, ու սիրտ
ծակելը՝ երբոր զիս առջի անգամ տեսաւ .
Ես ալ հիմա փորձեմ, նայինք կը սիրէ՝ սըր-
տանց մեր տրը : Երբ տուն հասաւ Եղորոս
կանչեց Տիրուհին, և Քսանդոսի տըւած
կերակուրները առջին դրաւ՝ ըսաց, ահա
ասոնք իմ տրս խրկեց . բայց քեզի չկ խրկեց,
իրեն բարեսրտիս սիրականին խրկեց : Ծուտ
մը կանչեց տիրոջը սլզափ շունն որ հոն կը
կէնար, առ աղւորիկ կըսէր, կէր, տրս հրա-
մեց, որ քեզի տամ . և այսպէս բոլորը կեր-
ցուց շանը : Յետոյ դարձաւ գնաց տիրոջն
ըսաց, որ տըւի և բոլորն իմ առջիս կերաւ:
Ուտելու ատենը բան մը զուրցեց, ըսաւ

Քսանդոս : Զէ ըսաց , բայց մաքովը շնորհակալ կըլլալ տէրութեղի :

Իսկ Քսանդոսի կնիվիլը սաստիկ նեղացաւ , որ ընկերն իրեն բան մը չի խրկեց հարկիքէն . միտքը դրեր էր թէ այս եղած բանը՝ նշան է թէ զինքը աչքէ ձգեր է . և իր սերը պաղած է . որովհետեւ հոգ տարաւ աւելի շանը , քան թէ իրեն . ուստի սոսկալի տրտունցներ կըներ , և վշտանալով բարկանար ու կըաէր , թէ այլ չպիտի նայի երկանն երեսը . և այսպէս իր խուցին մէջ փակված անանկ կուլար , որ աշխարհք կըփլցընէր , և ամենեին չէր ուզէր մխիթարվիլայս ըրած բանին համար :

Բայց հարկիքը լաւ մը շէնցաւ դինին խմելով . երբոր զըւարձութե մէջ էին՝ սկսան ամէն մէկը իրարու հետ հակաձառութի ընել զանաղան բաներու վրա : Անոնցմէ մէկը աւելի բարակամիտ և հետաքրքիր ըլլալով հարցուց՝ թէ որ ատեն կըլլայ աւելի հակառակութի և անկարդութի մարդկանց մէջ : Եղոքոս այս հարցընողին եաին ըլլալով պատասխանեց , թէ անատենը կըլլայ երբոր մեռելները յարութի կառնեն . վ՛զ զի ամէնքը ինչ որ ունէին (*) աշխարհքիս մէջ մէկ-

(*) Կուապաշտ ինչորդաներուն շաբը գիտեն , որ մէկ օր մը մէռէնէրը արքանի պիտի առանեն . որովհետ իշխայէին որ առնէի մարտի հասնեղանի իշտաւնն մարմար , և գէշ մարտի լաւ իշորէին . հարկաւ ասոնց հապաւում պիտի ըլլայ իշտէին . մանաւանդ՝ Պղագունի աշխերդները . որոնտ Անդաշնէը իշրդաւուն լադ բանի իշտաւուին :

զմեկե կըսլահանջեն : Քսանդոսի աշկերտները խնդալով այս խօսքիս վրա , միաբան խոստովանեցան , թէ Եղոբոսխիստ մտաւոր մարդ է :

Մէկ ուրիշն ալ հարցուց , թէ ինչու համար երբ մսագործը կըքաշէ ոչխարը՝ չի պօռար , ու խողը սոսկալի կըպօռայ : Պատասխան աղւաւ Եղոբոս , թէ ոչխարը սորված է որ կաթը քաշեն , և վրայի բուրդը խուզեն . ուստի ձայն չի հաներ , թող կուտայ , որ զինքը բռնեն քաշեն ոտքէն . ինքն ալ ըսութքը կերթայ ետևնաւն , անտարակոյս գիտէ թէ իրեն նեղութիւ ալիտի տան : Բայց խողը ոչ կաթ կուտայ , ոչ բուրդ , ոչ կըկապէն , և ոչ ոտքէն կըքաշեն . գիտէ որ մարմինէն 'ի զատ ուրիշ բան մը չունի . ուստի այս պատճառաւ կըպօռայ , կըկանչէ երբոր իրեն կըդպչի մսագործը : Ակսան այս պատասխանիս վրան ալ խնդալ Քսանդոսի աշկերտները . և մեծ գովեստներ տըւին Եղոբոսին :

Կերակուրը լմբնցածին պէս Քսանդոս տուն դարձաւ . հարցուց թէ ուր է կնիկն որ հետը խօսի , ինչպէս սովորութիւ ուներ : Բայց կնիկը ծուռ ծուռ նայելով անոր ըսաց . հեռու գնա . առւր ինծի իմ բաներս , որ երթամբ քու տնէդ . ասկէ ետքը ես չեմ կընար քու տանդ մէջ քեզի հետ մնալ դուն դնա քու շունդ սիրէ , որուն որ հարկեքին բաները խրկեցիր : Քսանդոս խիստ զարմանալով ասանկ անմիտ անարդանացը վրա , չեր գիտէր ի՞նչընէ . և ի՞նչ պատասխան տայ . կըսէր թէ առանց կարծեաց Եղոբո-

սը բանմ' ըրեր է : Դարձաւ կնկանն ըստ ,
թէ Տիրուհի , ես խմեցի՝ դուն գինովար .
Ես այն պատուական բաները որուն խրկե-
ցի . քեզի չի խրկեցի : Երդում կընեմ ըստ
կնիկը , թէ ինծի բան մը չեկաւ , հապա շա-
նը եկաւ : Հոս եկոր ըստ Եղոբոսին . ո-
րուն տըւիր այն կերակուրները : Որուն պի-
տի տամբ ըստ , քու սիրականիդ տըւի :

Դարձաւ Քսանդոս կնկանն ըստ , թէ
դուն բան մը չես առած : Ամենելին բան ա-
ռած չեմ ըստ : Տը իմ , ըստ Եղոբոս դուն
սիրականիդ չի խրկեցիր : Կանչեց շունն ը-
ստ . ահա բարեսիրա սիրականիդ . որ ամե-
նէն աւելի քեզ կըսիրէ , և քեզի բարի կու-
զէ : Վասն զի թէսկէտ կինդ կըսկայէ , թէ
քեզ շատ կըսիրէ . բայց պղտի բանէ մը նե-
ղացածին պէս , քեզի դէմ կելք կըխռովին .
կըսկարտաւէ անարդելով , կըչարանայ , որ
քեզ ձգէ : Խակ շունը թէսկէտ ծեծ ուտէ ,
անօթի մնայ , վուշնտվի , ամենելին չի փախ-
չիր . բոլորը կըմոռնայ , քեզ կըսիրէ շողո-
քորթելով , և ամէն երախտագիտութենը-
շանները կուտայ :

Ուստի պէտք էր որ ըսէիր տէր իսր , թէ
կնկանս տուր , չէ թէ բարեսրտիս : Քսան-
դոս դարձաւ ըստ կնկանը . կըտեսնես Տի-
րուհի , այս պակասութիւն իմս չէ , հապա
Եղոբոսին է . ուրեմն համբերէ , հանդարտ
կեցիր , ես ծեծով անոր վրէժինդիր կըլլամ :
Այս պատասխանը բաւական չեղաւ անոր
սիրտը հանգչեցընելու . նայիս ծածուկ մը
սնէն ելաւ գնաց հօրը տունը : Անատենը
դարձաւ Եղոբոս ըստ տիրոջը , թէ ես քե-

զի ըստի, թէ քու շունդ կնոջմէդ աւելի քեզ
կըսիրէ :

ԳԼ. ԺԱ.

Եւմբա դարձուցանէ պահինն ՚ի պահ :

Վանի մը օր անցաւ Քանդոս չի կրցաւ
կնկանը սիրան առնել ոչ աղաւանքով և ոչ
շողոքորթելով. ուստի դրաւ իրեն ազգական
ները խրկեց որ հաշտեցնեն, և մոռնայ սըր-
տին նեղութեղ. բայց ամենեւին մամիկ ըրբաւ-
ալ աւելի կատղեցաւ : Այս ըրած անզգա-
մութեղիսիստ ցաւցուց Քանդոսին սիրով :

Եղոքոս եկաւ քովի ըսաց մի՛ վշտանար տը
խմ, մի՛ տրտմիր սկարապ տեղը . ես քեզի
խօսք կուտամ, որ կնիկդ վաղը ինքիրեն կու-
գայ հոս : Քանի մը դրամ առաւ անկէ դը-
նաց գնելու հաւեր՝ թռչուններ՝ որսեր, և
այլ հարկաւոր բաներ մեծ հարկիքի մը :
Զատնիք բերելու առենը տնէ տուն սլըտր-
տելով կուգար, յետոյ եկաւ Տիրուհին հօ-
րը տանն առջեւէն անցաւ, այս մոքով, որ
տեսնեն առած բաները առանց իմացընե-
լու, թէ ինքը գիտէ որուն տուն ըլլալը, և
Տիրուհին հոն ըլլալը :

Յանկարծ հանգիպեցաւ անոնց ծառային
հարցուց, թէ արդեօք ունին ծախու բա-
ներ հարանեց հարկիքի համար : Ոլոտն հա-

մար կուղես ըստ ծառան։ Պատասխանեց։
թէ քսանդոս Փիլիսոփային համար, որ վա-
ղը պիտի կարդըվի։ Ծառան շուտմը ներս
վաղեց սկասմեց կնկանը. որ առանց ուշա-
նալու մէկէն ելաւ գնաց երկանը տումը։
Եւ այնալէս խռոված անհանդիստ էր, որ
տրանջելով կըսէր քսանդոսին, թէ քեզի
կըվայլէ՛ կարդըվիլ ուրիշին հետ քանի որ
ևս կամ։ Ահա այսալէս մնաց երկանը քով
Եղորսոսին հնարքովը. ինչպէսոր անոր պատ-
ճառովը գացեր էր, անանկ ալ եկաւ։

ԳԼ. ԺԲ.

Ապա Եղովանի։

Քսանդոս ուղեց օր մը իր աշկերտնե-
րուն կերակուր ընել. Եղորսոսին պատւի-
րեց որ երթայ որչափ լաւ պատուական բան
կայ զանոնք դնէ։ Եղորսոս երթալու ատե-
նը կըսէր թէ պիտի հասկըցընեմ տիրոջս,
որ ուրիշ անդամ ինձի ասանկ անխելք բան
չի հրամէ։ Ուստի գնաց մէկ քանի խոզի
լեզու առաւ պատրաստեց հարկեքին համար,
և ամենուն առջին դրաւ մշյմէկ լեզու խոր-
ված համեմով պահարւ։ Աշկերտները հա-
ճեցան, որ Փիլիսոփայի դործք է առջի կե-
րակուրը լեզու բերել. ինչպէս լեզուն ամէն
լաւ խորհուրդները կըսյայտնէ։ Իսկ Եղո-
րսոս երկրորդ կերակուրն ալ խաշած լեզու

բերաւ : Ելքոր երրորդ կերակուրն ուղեցին , նայիս լեզու բերաւ : Այս բանիս վըրա սրտերնին նեղացաւ . վասն զի լեզու ուտելով ձանձրացեր էին . մինչև բարկանալով ըսին Եղոբոսին , թէ մենք մինչև իրիկուն լեզու պիտի ուտենք : Բայց Եղոբոս առանց նայելու անոնց արտօննինն նորէն լեզու դըրաւ անոնց առջին : Ուստի Քսանդոս բարկանալով կանչեց , թէ ուրիշքան մը չի կայ որ բերես : Պատասխանեց Եղոբոս հանգիստ սրտով մը , թէ չի կայ : Ի՞նչ կըխօսիս թըշւառական կըսէր , ես քեզի չխասաւիրեցի՞որ սկատուական համով բաներ դանես . սկսաւ անարդել զինքը փիլիսոփիաներուն առջին :

Ընորհակալ եմ ըստ Եղոբոս՝ ըրած նախատանքիոդ վսա . բայց խնդրեմ՝ լեզուէն անոյշ և պատուական ի՞նչ բան կայ աշխարհքիս մէջ . ահա ամէն ուստում և խմաստութի լեզուով կըլսոյ . ամէն բան անով կառնենք կուտանք , աղօթք , ատենաբանութի , մարդավարութի , հարսնախօսութի , և ամէն ճոռոմութի լեզուով կըլսոյ . քաղաքներ անով կըշնչին . և ամէն մարդ լեզուով կըվճարէ իրեն դործքը : Ուրեմն ես կըհաւտամէ և լաւ գիտեմ , թէ լեզուէն գերազանց բան չի կայ աշխարհքիս մէջ : Բոլոր նատօնները հաւնելով այս սկատճառներուս միաբան վըճուեցին , թէ Եղոբոս իրաւունք ունի , և Քսանդոսի բարկութիք անիրաւէ : Եւ այս պէս ամէն մարդ տուն դարձաւ :

Գ.Լ. Ժ.Գ.

ԵՐԵՐԵԴ ԱՊԱ ԵՎ ՀԵ՞ :

Քանիդոսի աշկերաները քանի մը օրէն
ետև երեսը զարկին ըլուծ հարկիքը : Անալ
անպարտ զինքը ցըցուց ըսելով, թէ այդ
բանը մտքէս ալ չէր անցած . իմ ծառայիս
չոլութէն անսնկ եղաւ . բայց փորձը ոյ-
սօր ամէն բան կը յայտնէ . ահա ձեր առջին
իրեն կը պատփրեմ : Այս խօսքիս վրա Եղո-
րոս ալ հոն եկաւ : Տըն ըսաց որ դնա ո՛ր
չափ դէշբան գտնես գնէ, որ հարկիք ընեմ
այս պարոններուն :

Եղորոս գնաց նոյնպէս լեզու գնեց, պատ-
րաստեց սեղան բերաւ : Ամէնքը տրտնջա-
լով սկսան իրադու զուրցել, թէ այս ի՞նչ
ոլէս բան է . միշտ լեզու սլիտի ուտենքը :
Քիչ մը անցաւ, նորէն լեզու բերաւ : Եր-
բորդ անդամ ալ լեզու բերաւ սեղանը :
Այլ չդիմացաւ Քսանդոս բարկութեամբ
կը պուար . դուն ի՞նչպէս խօսք կը հասակը-
նաս Ե՛զոք . Երբոր քեզի ըսի պատուական
կերակուր գնէ, դուն դացիր լեզու գնե-
ցիր . և Երբոր պատուիրեցի անշահ կերակուր
գնէ, նոյնպէս դացիր լեզու գնեցիր :

Ճշմարիտ է խօսքդ ըսաց Եղորոս . բայց
լեզուէն դէշբան ի՞նչ կրնայ գտնելիք . լե-
զուն չէ որ աշխարհնք կը կործանէ, և սոս-

կալի մարդեկ կըկորսընցնէ . ինչու կըլան
այնչափ սուտերը՝ հայհոյութիները՝ անի-
րաւութիները, և խաբեութիները . լեզուով
կըլան : Ասով պատկեալները կըքակվին .
որութիներ թագաւորութիները կըկործա-
նին . և այլ անհամար չարիք միշտ լեզուն
կըսպատճառէ , արտմութի՝ խեղճութի՝ եր-
դում՝ բամբասանք . որով մարդուս կեան-
քը լեցւած է :

Ան ատենը նստողաց մէջէն մէկը կանչեց
Քսանդոսին, թէ զցոյշ կեցիր՝ այս ծառադ-
քու խելքիդ բան մը կըբերէ . զի կընայիմ
որ հոգին ալ մարմինին նման այլանդակ է :
Եղոբոս մէկէն սկատասխան արւաւ թէ այ-
լանդակ անմիտ դուն ես , որ հետաքրքրու-
թէ՛ ուրիշի բանին կըխառնըվիս , և չար
խօսքերով կըջանաս անմիաբանութի՝ ձգել
տիրոջն ու ծառային մէջ :

ԳԼ. ԺԴ.

ՀԱՅՐԱԳԻՒԹԱՆՑԻ ԵՎԱՀԲԱԿԻ :

Պասանդոս Եղոբոսին այս խօսքերը լսե-
լով անանկ տաքցաւ , որ սկատճառ կըվինալը-
ւեր լսու մը ծեծելու : Գարշելի ըսաց , ո-
րովհետեւ դուն իմբարեկամս պարսաւեցիր,
թէ հետաքրքիր ըլլալով ուրիշի բանին կը
խառնըվիս , գտիր ինձի մէկն որ հետաքըր-
քիր ըըլայ : Եղոբոս հասկըցաւ բանը , մէ-

կալ օրն ելաւ դնաց վաճառանոցն բազմու-
թե մէջ ուշադրութե ամենուն կընայէր .
տեսաւ թէ մէկ մարդ մը երկար ժամանակ
կեցէր է մէկ տեղ մը : Հասկըցաւ որ խիստ
սկարզամիտ խեղչ մարդմ' է . մօտեցաւ իրեն
ըսաց , թէ արա կըհրամցընէ , որ իր տունը
կերակուր ուտես : Այս կոշտ մարդը ա-
ռանց հարցընելու , թէ ուլես , և որուն տը-
նէն եկեր ես , Ելու դնաց հետք . և աղտոտ
կօշիկները ոտքը դնաց անանկ սեղանը նըս-
տեցաւ :

Քսանդոս հարցուց , թէ ուլ է այս մար-
դը : Պատասխանեց Եղոբոս , թէ առանց
հետաքրքրութե մարդ է , որ ուրիշի դործ-
քին չի խառնըլիլ : Ան ատենը քսանդոս
ծածուկ կնկանն ըսաց , որ ես քեզի ինչ բան
ըսեմնէ՝ հնազանդելով պիտի ընես . որպէս
զի պատճառ մը գտնեմ , ու լաւ ծեծ մը
տամ Եղոբոսին : Ուստի ամենուն առջին ը-
սաց կնկանն , որ գնա ջուր բեր՝ օտարակա-
նին ոտքը լրւած . վասն զի կարծէր , թէ այն
խեղչ մարդը չպիտի թող տայ որ Տիրուհին
ոտքը լրւայ . պէտք է որ մեծ շնորհակալու-
թի ընելով հրաժարի : Եւ ասանկ ընելովը
յայսնի կըլլար , որ հետաքրքիր մարդ է , ոչ
թէ անհոգ . ինչպէս հասկըցէր էր Եղոբոս .
այս բանը կըլլար օրինաւոր պատճառ Եղո-
բոսը պատժելու : Խոկ կնիկը բերաւ ջուրն ,
ու սլատրաստվեցաւ որ օտարականին ոտքը
լրւայ : Բայց այն թանձրամիաը տեսաւ
թէ Տիրուհին իրեն ծառայութիւնն կընէ ,
ինքիրեն կըսէր , որ ահա զիս կուղէ պատ-
ճէլ , ուրիշին ընել չի տար , ինքը կընէ . և

այսպէս երկընցուց ոտքերն , ու կըսէր՝ լրւած Տիրուհի . որ լրւացւելէն ետև սեղաննստաւ : Քանիդոս հրամեց , որ իրեն խմածդինիէն օտարականնին տայ : Դարձեալ կը մտմրտար գեղջուկը , թէ ալէտք էր որ առաջ իրենք խմեն . բայց որովհետեւ այսպէս հրամեց բարեսիրաը՝ ինձի չիյնիր քննել այս քաղաքավարութիր . ուստի առաւ խմեց :

Բերին առջին կերակուր մը , որ շատ կը սիրէր , ու ախորժանքով կուտէր : Տըլ կանչէց խոհարարը աշճին երեսը զարկաւ , թէ ինչու համար գէշ եփեցիր . և պատւիրեց որ պատժեն ու ծեծեն : Գեղջուկը սիհոգ կուտէր և կըսէր . թէ այս կերակուրս իմաստ պատւական եփած է , մեկ պակասութիւն մը չունի . բայց թէ որ արքա իր սիրտը հանդցեցրնելու համար կուզէ առանց պատճառի ծեծելխոհարարը , ինքը գիտէ . իմ ի՞նչ պրաս պէտք է , ինչ կուզէ , թող ընէ :

Քանիդոս այս անհոգ մարդուն վրա խիստ իլընեղաննար . որ ամեննեին հետաքրքրութիւն մը հոգ մը չէր ըներ , և բանի մը եամեւն չէր ըլլար . բայց կը համբերէր նեղութիւնը չէր ցցըներ : Բերին սեղանը կարկանդակ ոգջաւ . օտարականը ուտելը չէր գիտէր , սկսաւ հացի պէս ուտել : Քսանդոսին սիրար սրխմրդելով կանչէց բառւ հացեփողին . յիմար , ինչու համար կարկանդակին տակը մեղք ու համեմ չի լեցուցիր , որ քիչ մը համովը ըլլար : Անալ պատասխան տրւաւ , թէ տէր իմ , թէ որ գէշ եփեցի , զիս պատժէ , բայց թէ համեմ չէ դրած՝ մեր Տիրուհին պիտի դիանայ , իմ բանս չէ , անորն է : Ե-

թէ իմ կինս է պատճառը՝ հիմա ողջ ողջ
կերեմ՝ կըսէր քսանդոս։ Աչք ըրաւ կըն-
կանն որ իրեն հեազանդի։ որովէս զի պատ-
ճառ ունենայ Եղոբոսը պատժելու։

Ուստի բերել աղւաւ փայտի կարուլանք։
որ երբ վառեցան՝ քսանդոսի Տիրուհին բե-
րին կըսակին մօտ, և ձեւացուցին, որ մէջը
պիտի ձգեն։ նայելով թէ ի՞նչ կընէ օտա-
րականը այս բանիս մէջ։ գէթ հոգ տանե-
լով բան մը կըհարցընէ, կամ կարգիլէ որ
չերի կինը։ Բայց այն առանց այլայլելու
հոգ մը չունէր այս սկաւոր բանին վրա։ և
իր սովորական անհոգութե կեցեր կըսէր
մաքովը։ թէ որ պատճառ մը չունի բարկա-
նալ ընկերոջը գէմ, ինչու ասանիկ տաքցեր
է։ Ելաւ գնաց քսանդոսին քովըսաւ, թէ
որ պարտք է ասանկ ընել կանանց, քիչ մը
համբէրէ երթամ խմին ընկերս աւ բերեմ,
որ երկուսը միատեղ երես։

Փիլխոփան լուլով այս մարդուս խօսքը,
զորմացաւ, թէ ասանիկ առանց հետաքըր-
քութե անհոգ և պարզամիտ մարդ կընայ
ըլալ։ ոյնչափ որ այլ ցիխացաւ կանչեց
Եղոբոսին, թէ իրաւ որ դուն պարապ տե-
ղը մարդ չես ճանչնար։ ահա ճշմարիտ ան-
հոգ անհետաքըրիր մարդ, որ ամենելին բան
մը հոգը չէ։ յաղթեցիր Եղօք, և վաստը-
կեցար յաղթութեր։ Ահա ասկէ ետեւ դո՞՛
եմ բու վրադ, կըմոռնամ ըրած բաներդ,
կըներեմ, և աղատ կընեմ քեզ ծառայու-
թենէդ։

ԳԼ. ԺԵ.

ԽՍՀԻ ԵՎԱՀԲԱԿԻ ԸՆԴ ԴԱՎԱՆՈՐԻՆ :

Վասնդոս պատւիրեց Եղոբոսին, որ եր-
թայ բաղնիքը նայի, թէ բազմութիւն շատ
կայ. վասն զի կուգէր բաղնիք մտնել: Եղո-
բոս Երթալու ատենը ճամբան հանգիստեցաւ
դատաւորին. որ գիտէր թէ Քամնդոսին
մարդն է, հարցուց թէ ուր կերթամ: Զեյ-
տեմ ըսաց Եղոբոս, ուր կերթամ: Դատա-
ւորը կարծեց թէ զինքը ծաղը կընէ, բար-
կացաւ տըւած պատասխանին վրա. հրամեց
որ բանտը գնեն: Երբոր դարձուցին Եղո-
բոսը, սկսաւ բարձր ձայնով պօռալ: Տես
կըսէր աւէր խմ, ահա խմ պատասխանս նայէ-
ինչչական ճշմարիտ ելու. ուրեմն իրաւունք
ունէի որ ըսի թէ չիյտեմ ուր կերթամ, ես
գիտէի թէ բանտը պիտի երթամ. դիալւա-
ծով քեզ տեսայ, որ խմ բանտն երթալուս
պատճառ եղաւ:

Դատաւորը զարմանալով անոր խելացի
պատասխանին վրա, թող տըւաւ: Եղոբոս
բաղնիք գնաց տեսաւ որ շատ բազմութիւն
կայ. ամէն մէկին ուշադրութե՛ կընայէր.
բաղնիքին դռանը քով մէծ քար մը տեսաւ
որ ամէն մտնող ելլօղին ոտքին դպչելով նե-
ղութի կուտար, որ մէկը չէր վերցընէր ան-
կէ. մէկ մարդ մը ներս մտնելու ատենը

վերցուց անկէ ուրիշ տեղ դրաւ : Եզրոբս
դարձաւ տուն ըսաց տիրոջն , որ խիստ հան-
դիստ կրնաս ըրւացվիր . վասն զի ես՝ մինակ
մէկ մարդ մը տեսայ հոն :

Քսանդոս գնաց բաղնիք երբոր տեսաւ
այնչափ բազմութիւն , որ կը ըրւացվէին . ի՞նչ
է այս կանչեց Եզրոբսին . դուն ինծի չըսի՞ր
որ մէկ հոգի մը կայ . ճշմարիտ է ըսաց .
բայց տէր իմ տեսայ այն քարը բաղնիքին
դռանը մէջ դրած , ամէն մտնօղ ելլօղ անոր
զարնելով կանցնէր , այնչափ բազմութեան
մէջէն մէկ մարդ մը գտնըւեցաւ , որ այն
քարը վերցընէ անկէ անդին դնէ : Ահա
այս պատճառաւ ըսի , որ մէկ մարդ մը տե-
սայ այսչափ բազմութէ մէջ , ամենէն վեր
գնելով զայն : Քսանդոս ծիծաղելով ըսաց ,
թէ Եզրոբսին պատասխանը խելքով լեցուն՝
միշտ պատրաստ է :

Գ.Լ. • Ժ.Զ. •

Հանձար Եղանձնուի :

Երբեմն քսանդոս իր աշկերտներովը ե-
րեւելի հարկիք մը գնաց . երբոր գինին խմե-
ցին հարբեցան , սկսան իրարու հարցմունք-
ներ ընել կերպ կերպ բաներու վրա : Քսան-
դոս տաքնալով կը խօսէր գինիին ուժովը .
Եզրոբս քովին ըլլալով ըսաւ . Ամիրայ քեզի

կուզեմ հասկլցընել, [թէ (*)] Բաբոս Երեք
յատկութի, կմ Երեք զանազան աստիճան
ունի. առաջինն է զրւարձութի. Երկրորդն
է արքեցութի. Երրորդը՝ կոխ թշնամնիք.
գուն ուղածիդ չափ խմեցիր լաւ մը զրւար-
ձացար, ուրեմն դոհ կեցիր այդ աստիճա-
նին մէջ, ալ առաջ մ' Երթար : Քսանդոս որ
սկըսերէր դինովնալ, այս խրամս ծուռ
մնչով հասկլցաւ, որ բարկանալով ըսաւ.
կտրէ ձայնդ՝ գնա դժոխքին մէջ Եղօղներուն
խրատ տնւր : Պատասխանեց Եղորս, [թէ
կարծեմ դուն պիտի Երթաս անոնց քով :

Հոն նստողներուն մէկը տեսաւ որ Քսան-
դոսի գլուխը տաքցէր է. Պարոն, ըսաց, կըր-
նայ դտովիլ անսանկ մարդ, որ բոլոր ծովուն
ջուրը խմէ : Պատասխանեց Քսանդոս, [թէ
ես մինակ կընամ խմել : Անալ ըսաց . [թէ
որ չի կընաս նէ ինչ կուտաս : Բոլոր առունա
կուտամ ըսաւ : Այս դաշնիքո հաստատե-
լու համար Երկուքն ալ հանեցին իրենց մատ-
նին դրին դրաւ ըսէ հին . Ետքը ամէն մարդ
տեղը դարձաւ :

Առաւօտուն Քսանդոս ելաւ լրւացվեցաւ
տեսաւ, որ մատնին մատը չէ՝ զարմանալով

(*) Բաբոս Դիմունին որդին էր . որ իւսպաւր-
նեց խաղողիւ գիշի լած որեւ էին, ու Դիմ-
ունին իւսէին . իսէ հայեց Սպանդարամետ իւ-
սաւանէին . որովհետև ասոր պօնին օրը լափ իւն-
դանէին էր պահ իւսնէին . որովհետ արքանն էր մանուկ
պղայ : Բայց չափ անգամ գրաց մէջ գիշին աւուց
բարոս իւնդնէն . իւսուկ Եղորս աւգինին ըս-
է լաւ պեղը, իւսէ Բաբոս երեւ յադիւսի անի :

հարցուց Եզրոսին, [թէ ի՞նչ եղաւ: Պատասխան տըւաւ, [թէ չիտեմ. բայց այսչափ գիտեմ, որ դուն առւնդ կորարնցուցիր: Ինչո՞ւ համար՝ ըսաւ: Երէկ գինովութե մէջ պարտաւորեցար, որ ծովը խմես. ասոր համար մասնիդ գրաւ դիմք ('): Պատասխանեց Քանդոս, [թէ ի՞նչ ընելու է որ այս բանէս ազատիմ. իրաւ որ մարդու կարողութէ վերբան է. կաղազեմ, մէկ խելք մը բանեցնւր, ու բոլոր խմաստութշդ և փորձովդ ետ առ իմ խօսքս, այս փորձանքէն զիս ազատէ, որպէս զի իմ արւած գրաւս ետ առնեմ առանց անարդանաց: Խրաւ որ անկարելի է ըսաւ Եզրոս, որ կարենամ քու խօսքդ ետ առնել, բայց կրնամ դաշնիքդ աւրել:

Երբոր այսօր ամենքդ մէկատեղ կուդաք՝ գուն խօսքիդ վրա կեցի՛ր համարձակ, ամենելին մի՛ վախնար: Արբեցութե մէջ ի՞նչ որ ըսիր, հոն ալըսէ բազմութե մէջ. հրամայէ՛ որ ծովուն քով սեղան դնեն. սպասուիրէ՛ ծառաներուդ, որ աման մը ծովու ջուր բերեն քեզի խմելու համար: Կը տեսնես որ բոլոր ժողովուրդը հոն ժողւած են, հրամայէ՛ քովի եղողներուդ, որ գաւաճիթը ծովու ջուր լեցընեն՝ տան. ձեռքդ առ, բարձր ձայնով հարցուր դաշնիք ընողին, [թէ ի՞նչ էր մեր սպայմանը. անալ պիտի ըսէ, [թէ բոլոր

(*) Ուշադիւրւ հին ժիւիսութանեւը ծողովուրդին մէջ չափ մէծ յարգութիւն և գէրազանցութիւն առնեին, անոր համար գինուշութիւն մէջ եղած խօսքն աւ չուտանելի էր, և էս առնելու անկարելի:

ծովը խմել Ան ատենը դարձի՞ր նստողներուն
ըսէ . Սամոսացիք, դուք դիտէք թէ որշափ
գետեր կը լեցւին այս ծովուն մէջ . իրաւ
ես պարտաւոր Եմ միայն ծովուն ջուրը խմե-
լու, չէ թէ գետերուն . ուրեմն պէտք է որ
այս մարդս նախ գետերը կտրէ, որ ծովը չի
վաթին, հապա թէ ես ալ խմեմ ծովը :

Քսանդոս տեսաւ, թէ այս հնարքս ան-
տարակոյս կրնայ դաշինքն աւրել, և մասնին
ետ տալ, մեծ յուսով սկսաւ ուրախանալ:
Ուստի երլոր ժողովուրդը ծովուն մօտ դիզ-
վեցաւ, բոլոր քաղաքը հոն լեցւեցաւ . որ
այս չի լսուած բանը տեսնեն, թէ ինչպէս
Քսանդոս զինքը սիրտի այս բանէն փրցընէ:
Բայց Քսանդոս ինչ խրատ որ առաւ Եղո-
բոսէն՝ կատարեց ըրաւ ժողովուրդին առ-
ջին : Սամոսացիք զարմացան Եղոբոսին խել-
քին հնարքին վրա, և մեծապէս գովեցին:
Խակ դաշինք ընօղը Քսանդոսին ոտքն ըն-
կաւ, խոստովանեցաւ, թէ յաղթը բւեցայ, և
աղացեց, որ դաշինքն աւրէ : Քսանդոս ժո-
ղովուրդին աղաւանքովը յօժարեցաւ աւրել
դաշինքն, ու հաշորեցաւ անոր հետ :

ԳԼ. • ԺԷ. •

Աղերակունիւն քառակունի ընդունէ
Եղալբասի :

Խրբոր տուն դարձան, Եզրոս ըսացքամն-
դուին. առ իմքեզի ըրած այս աղեկութես
դէմ, արժան չէ որ ես լուսպէս քեզ աղա-
տեցի, դուն ալ զիս ազատես գերութէս։
Տըլ խստութե վարհաեց ըսելով. կարծես,
թէ ես չեմ ուզեր քեզ ազատելու։ Ելի՞՛
դուռը նայէ թէ որ երկու ագռաւ միասեղ
կեցած են, բարի նշան է. հասդա թէ մէկ
ագռաւ մը կայ, գէշ նշան է (*): Եզր-
ըսո երկուար միասեղ տեսաւ կեցած ծառին
մըս, եկաւ պատմեց քասանդոսին. բայց եր-
բոր Քասանդոս ելաւ նայեցաւ, մէկը կար,
մէկալը թռեր էր։ Թշուառական ըսաց Ե-

(*) Հին ագէնը հաւերսան և թալուններուն
իշշածուց և յայնը դիրել խիստունի կը-
նէին, լըզած բաները իւ գուշակին իւրո իւրո
խաբէսնի. որ իւս-ի հաւահմայութ. որ հաւե-
րսան յայնէն և շարժմանէն իւգուշակին լս-
ողիրի ըլլայ, թէ գէշ։ Եւ երբեմ իւրը բակա-
լազմաներուն շարժմանէն և վրտին գունէն
գուշակութի իւս-ին։ Ահա քառակուն աւ ագ-
ռաւաց նշան տնելով գէշ սեպէց աղադ ընել Ե-
ղալբաս։ որ է խաբէսնի։

զոբոսին , դուն ինձի երկուք են ըսիր , ուր
է : Պատասխանեց , թէ ես ճշմարիտն ըսի ,
բայց մէկը թռաւ : Անանկ չէ , հասլա գար-
շելի դուն զիս ծաղր ըրիր : Բարկութք
պատւիրեց ծառաներուն որ հանվեցընեն Ե-
զոբոսն ու ծեծեն : Երբոր կը զարնեին խեղ-
ճին , տեղէ մը կանչեցին Քսանդոսն , որ
կերակրի երթայ : Սկսաւ Եզոբոս կանչել .
վայ անբաղդ ողորմելուս , ես որ երկու ադ-
ռաւ տեսայ , ծեծի արժանի եղայ . դուն որ
մէկ ադռաւ մը տեսար՝ հարկիք ուտելու
կերթաս . ահա ի՞՞ փորձս յայտնի ըրաւ , որ
ըրած կախարդութիդ սուտ է : Քսանդոս
զարմանալով անոր բարակ մտացը վրա գադ-
րեցուց ծեծը :

ԳԼ. ԺԼ.

ՓՐՅԵ ԵՎՀԵՇ ԱԳԻՄԱԽԵՆ :

Եղաւ որ Քսանդոս կերակրի հրամցուց
շատ փիլիսոփաներ և ճարտասաններ . Եզո-
բոսին պատւիրեց , որ դուռը կենայ , և պա-
տիւ ըլլալու համար միայն իմաստուն մար-
դիկ ներս առնէ . իսկ Եզոբոս դուռը դո-
ցեց , ու ներսը կեցաւ . նայիս հրամցուցած
մարդուն մէկն եկաւ դուռը զարկաւ : Եզո-
բոս առանց դուռը բանալու ներսէն հար-
ցուց , թէ շունը ինչ կըշարժէ : Անալ Դըր-
սէն կարծեց , թէ իրեն շուն կըսէ , բարկա-

նալով ձգեց գնաց : Որչափ մարդիկ որ ե-
կան, ասանկ բարկանալով ետ դարձան, կար-
ծէին, թէ զիրենք կընախատէ . վազ զի Եղո-
րոս ամենուն ալ այս հարցմունքը կընէր :
Յետոյ մէկն ալ եկաւ դուռը զարկաւ . ա-
նոր ալ հարցուց Եղորոս, թէ շունը ինչ
կըշարժէ : Անալ դրսէն պատասխան տը-
ւաւ, թէ սպն ու ականջները : Եղորոս
տեսաւ որ յարմար պատասխան տըւաւ, բա-
ցաւ դուռն ու տարաւ ներս ախտօնք քո՞ն,
ըսաւ թէ մէկ վիլխոտիայ մը չեկաւ քու
հարկիքդ ասկէ ՚ի զատ :

Քսանդոս սաստիկ բարկացաւ՝ կարծելով,
թէ մէկալոնք զինքը ծաղը ընելու համար
չեն եկած : Մէկալ օրը բարեկամներն եկան
դպրոցը, և երեսը զարկին Քսանդոսին, որ
զիրենք անանկ անարդելով դռնէն ետ ճամ-
բեց . ինչո՞ւ համար՝ կըսէին այն աստիճանը
մէզ անարդեցիր . դրիր դռանը քով այլան-
դակ գերիդ, որ մէզ թշնամանելով ետ դար-
ձուց : Հարցուց Քսանդոս, թէ քո՞ն էք
ի՞նչ էք . իրաւ է ըսածնիդ : Պատասխանե-
ցին ամէնքը մէկ ձայնով . ճշմարիա է քեզի
ըսածնիս : Ծուտ մը կանչեց Եղորոսն հար-
ցուց բարկանալով, թէ ինչո՞ւ համար ա-
սանկ անարդելով ետ դարձուցիր բարեկամ-
ներս : Պատասխանեց Եղորոս, թէ դուն չի
պարտաւորեցիր, որ յիմար մարդիկ թող
չիտամ ներս մանելու . որ միայն գիտուն
խմաստուն մարդիկ նստին հարկիքդ : Իրաւ
այդպէս է ըսաւ Քսանդոս . բայց սանք ա-
մէնքը գիտուն չե՞ն : Պատասխանեց Եղո-
րոս, թէ ես այս գիտեմ, որ դուռը զար-

կած ատենը, ևս իրենց կըհարցընէի, թէ
շունը ի՞նչ կըշարժէ. մէկը չի կրցաւ հաս-
իրնալ, և հարցմունքիս պատասխան տալ.
ուստի կընայէի որ տղէտ մարդիկ են, դու-
ռը չէի բանար. միայն անոր բացի դուռն,
որ լաւ պատասխան տըւաւ :

Եզօբոս խօսքը լմբնցուց, բայց մէկը չի
կրցաւ դէմ խօսիլ. և ամէնքը խոստովան
եղան, թէ Ճշմարիտ է ըսածը :

Գ.Լ. • ԺԹ. •

ՀՆԱՐԱԳԻԳՈՒՄԻ ԵՎԱՀԲԱԽԻ :

Պասանդոս օր մը Եզօբոսին հետ գերեզ-
մաննոցը գնաց, որ գերեզմաններուն վրայի
դովեսաները կարդալով կը զըւարձանար :
Եզօբոս տեսաւ, որ մէկ գերեզմանի մը վրա
գրած էին այս գրելս Յունաց . α Αἴφω .
β Φέτω . δ Σέτω . ο Οιήφρον, ε Εΐταξι .
δ Θέτω . χ Ιυհի : Եզօբոս այս գրելը ցըցուց
Քսանդոսին, հարցուց, թէ ասոնք ի՞նչ կը-
նշանակեն : Քսանդոս ուշադրուք նայեցաւ
քննեց մտընթաց . չեմ հասկընար ըստու ի՞նչ
ըսել կուզէ : Անսատէնը դարձաւ Եզօբոս ը-
սաց . Ամիրայ եթէ այս գրերուն ուժովը
հոս գանձ գանեմ, ի՞նչ կուտաս ինձի : Անալ
սիրտ տալով ըստու, թէ կէսը կուտամ և
քեզ ալ կազտում : Եզօբոս այս խոստունքս
ըսելով չորս քայլ առ հեռացաւ անկէ՝ փո-

թեց գանձ դժաւ . տարաւ . Քսանդոսին ը-
սաւ , թէ կատարէ՛ խոստմունքդ . զիս ալ
ազատ ըրէ : Պատասխան տըւաւ , թէ քեզի
չէմ ազատէր , մինչև որ այն գրերուն զօրու-
թէր չե մեկնես ինձի . վազ զի աւելի կուզեմ
անոնց իմաստը հասկընալ , քան թէ ոսկին
ժառանդէլ :

Եզրոբոսն ալ ըսաց թէ ով որ այս դան-
ճը հոս թաղերէ , իմաստուն մարդ ըլլալով
այս գրերը փորել տըւեր է . որ կընշանա-
կեն . α Εξιστάν գնացեալ . β Πέμπτա քայլս .
δ Τέսτα չորս . ο Ορθοւաս փորեալ . ε Κυ-
ρικուս գտցես . թ Թիստարծն գանձ . χ Ιսհրιսու-
սակւոյ : Քսանդոս ալ ըսաց . որովհետեւ
այսպէս հնարագէտ բան գիտցօղ ես դուն ,
յիմար կըլլամ ես թէ որ քեզ ազատեմ :
Կրկնեց Եզրոս . թէ որ չընես՝ այս գանճը
չես կրնար ժառանդէլ . վազ զի կերթամ
թիւզանդացոց (*) թագաւորին կիմացը-
նեմ . որ անոր համար պահած էր : Ուստի
գիտես ըսաց Քսանդոս : Ահա գրերը յայտ-
նի կը ցցընեն ըսաց . α Εξιστάն տըւոր . β Πέ-
μπτα թագաւորին . δ Σիօնիս Դիոնէսիո-
սի . ο Οն զոր . ε Κ' թէս գտեր . թ Թիստարծն
գանձ . χ Ιսհրιսուս սակւոյ : Քսանդոս այս
բանը լսելով հասկըցաւ որ ձեռքէն պիտի

(*) Բիւզանդիան իշով սպամպօւ Վեհա-
նիւսոնին անուանիւ . որ նախ շինեց պապին ժա-
շատ իւ Ապողոնին պատգամուլը . յէպոյ իսսպան-
դիանուն նորգէց Անդրուց : Հին ապէնը հոս նըս-
դող թագաւորը իշհրամայէր մօդ եղած իշունե-
րուն . ինչպէս Եպոնս աւ իշյայինէ :

երթայ . առ ըսաց կէսն , ու ձայն մի՛ հաներ :
Դուն չես ինձի տըւօղը ըսաւ Եզոբոս . հա-
սլա ոսկին թաղօղը տըւեր է : Մալիկ գիր
նայէ ի՞նչ կը նշանակեն դրերը . ո Անէւմն-
նի զառեալն . Յ Վարիսանդէս գնացեալ . ծ
Տիէւմնէ բաժանեցէք . օ Օն զոր . ε կ'որէ-
տէ գալիք . մ թէստ-բօն գանձ . չ խնդիսիս-
ոսկւոյ :

Եկոր տուն երթանք ըսաց Քսանդոս , որ
բաժնենք ոսկիները , և քեզ ալ ազատ ընեմ:
Բայց երբոր եկան՝ վախցաւ Քսանդոս , ը՛լ-
լայ թէ բանը դուրս հանէ Եզոբոս . ուստի
բանտը դնել հրամեց խեղճը : Երբոր բանտը
կը տանէին Եզոբոս կըսէր , թէ փիլիսո-
փաները այսպէս կըսլահեն իրենց ըրած
խոստմնքը : Չէ թէ միայն չաղատեցիր զիս,
որ խոստացեր էիր , հապա բանտն ալ դնել
կուտաս : Այս խօսքովս միրտը շարժեցաւ
Քսանդոսին , շուտ մը սկատւիրեց , որ թող
տան ըսելով , անտարակոյս երբոր դուն ա-
զատիս , զիս չարաչար պիտի բամբասես և
ամբաստանես :

Պատասխանեց Եզոբոս . հիմա որչափ գէ-
շութի կուղես ինձի ըրէ . բայց գիտնաս որ
որ մը զիս ակամայ պիտի ազատէս :

Գ. Լ. · Ի. ·

Աղամանակս Սամոս կղզին զարմանալի
դիպւած մը պատահեցաւ . Երբոր մէկ ըհա-
նուր Երևելի տօն մը կընէին , յանկարծ ար-
ծիւ մը ինջաւ բարձրէն խլեց տէրութեան
մատնին , տարաւ ծառայի մը ծոց ձգեց :

Բոլոր ժողովուրդը զարմանալով այս սքան-
չելեացս վրա , Եկան միաբան աղաջեցին
Քսանդոսին , որ իրենց մէջ խիստ Երևելի
իշխան , և մ.ծ փիլիսոփայ էր , մէկնէ ա-
նոնց , թէ ի՞նչ կընշանակէ այս հրաշալի
դիպւածս :

Քսանդոս չէր գիտեր ի՞նչ պատասխան
տայ , Ժամանակ ուղեց որ մտածէ : Երբոր
տուն դարձաւ միշտ անհանգիստ տրտմութե
մէջ մնալով սկսաւ մաղձոսիլ : Եզրոս տե-
սաւ թէ իր արք տրտմութե՛ կը մաշի՝ հար-
ցուց թէ ինչո՞ւ համար ասանկ տրտում էս .
այս բանսինձի ձգէ , և տրտմութե՛ մէկ դի-
դի՞ր , որ քեզ կը տանիչէ : Գնա՞ վազէ զուրյէ՛
Սամոսացիներուն , թէ իմ բանս չէ հրաշք
մէկնել , և գուշակութի ընել . ասկայն ես
մէկ ծառայ մը ունիմ տունս , ոք ասանկ
բաներու լաւ տեղեակ է , այն կընայ տալ
ձեղի մէկնութե՛ դիպւածին , և ձեր տա-
րակուսանքը քակել : Տէր իմ , թէ որ ես

անոնց տարակոյսը վերցընեմ. բոլոր պատիվը քեզի կըլլայ, որ ասանկ բան գիտցող ծառայ ունիս. թէ որ չի կրնամ, միայն ինձի կըլլայ պարսաւանքը :

Քսանդոս մեծապէս ուրախանալով գնաց միւս օրը քաղաքացոց ժողովքը, և անոնց պատմեց Եղոբոսին իսօսքերը : Անոնք ալ աղացեցին . որ շուտովլքերել տայ : Երբոր Եղոբոս եկաւ մտաւ Սամսացոց ժողովքին մէջ, կերպարանքին նայելով սկսան ամենքը ծիծաղիլ, մինչև ծաղը ընելով ըսին, թէ կրնայ ըլլալ, որ ասանկ այլակերպ կոչտ մարդը այս հրաշքին մեկնութեր տայ : Ասանկ ցուցանքաւոր բերնէն ի՞նչպէս պիտի բարի բան լսենք . ուստի նորէն սկսան կասկելով խնտալ Եղոբոսին վրան :

Խակ Եղոբոս ձեռքը շարժելով կաղաչէր ժողովքին որ լուռ կենան . ու Սամսացիք կըսէր, ինչու զիս կանարգէք կերպարանքիս տգեղ ըլլալուն համոր . հոգին պէտք է նայել, չէ թէ կերպարանքը . բնութեր շատ անգամ գեղեցիկ հոգին տգեղ մարմինին մէջ կը դնէ, դուք ամանին ձեւին կընայիք, թէ մէջի եղած պատուական դինին: Բոլոր ժողովքին մարդիկը այս խօսքերս լսելով ըսին որ, եթէ գուն ունիս մեզի օգտակար բան մը խօսելու, որ կարենայ ամենուս սիրաք հանգչեցընել, խօսէ: Ան ատենը մեծ համարձակութեր մը այսպէս խօսեցաւ Եղոբոս. Ո՞վ Սամսաա՞ք որովհետեւ երրոր բաղդը սիրէ երկպառակութեի և խուզովութեի ցանել, կը դնէ մէկ առիթ մը փառաւորութե տիրոջն ու ծառային մէջ. եթէ պատահի որ ծառան

Եյնի իշխանութեն տակը, վիշտ կը քաշէ . և
թէ տիրոջմէն վեր ըլլայ , նոյնպէս վիշտ կը
քաշէ ծեծ կուտէ . անանկ որ բանը որ գին
դառնայ , ծառան նեղութիւն սլիտի քաշէ :
Դուք մինչեւ որ զիս ազատ չընեք . իմ տիրոջս
իշխանութեն տակէն չեւ հանեք , ես համար-
ձակ ձեզի չեմ կընար յայտնել առանց վախու՝
զայն , որուն կը փափաքիք : Այն կետին բո-
լոր ժողովուրդը մէկ ձայնով կանչեց Քսան-
դոսին , թէ ազատ ըրէ Եղոբոսը , կատարէ
Սամոսացոց կամքը . ասովլ բոլոր քաղաքը
ազատ կընես :

Քսանդոս ովատասխան չի տըւաւ . Դատա-
ւորը մէկէն կանչեց Քսանդոսին . թէ որ
դուն ժողովուրդին մատիկ չընելով ազատ ըր-
նես քու կամքովդ՝ հիմա ես ազատ կընեմ
իմ իշխանութես . որ քեզի հաւասար կըլ-
լայ :

Այլչե կրցաւ գէմ կենալ Քսանդոս՝ ա-
կամայ կամքով ազատ ըրաւ . որ փողերով
պօռանէրակ քաղքին մէջ կըկանչէին , թէ
Քսանդոս փիլիսոփիան ազատ ըրաւ Եղոբո-
սը Սամոսացոց ազատնիքին համար : Եւ այս
ողէս կատարեցաւ Եղոբոսին մարդարէու-
թիը . որ Քսանդոսին ըսեր էր , թէ ակա-
մայ զիս պիտի ազատ ընես : Եղոբոս ազատ
ըլլալէն ետև սկսաւ ասանկ խօսիլ ժողո-
վուրդին :

Ո՞վ Սամոսացիք՝ ինչպէս գիտէք , (*) որ
թիւն է թռչուններուն թագաւորը . որ իւ-

(*) Աչծիւ . որ է խարդալ թռչունը , իշում
թռչուններս թագաւոր , որ անձնութենք զբա-

Խանական մատնին վերցուցտարաւ ծառային
ծոցը ձգեց . այս բանս կը նշանակէ՝ որ հի-
մակւան թագաւորներէն մէկը կը մտածէ ,
որ ձեր ձեռքովը ձեր իշխանութիւնը կործա-
նէ , և ձեզ գերի ընէ եղծանելով ձեր օրէն-
քը : Այս խօսքս ահի դողի մէջ ձգեց բոլոր
Սամոսացիք :

Քանի մը օրէն ետեւ Սամոսացիք թուղթ
առին կը եսոս թագաւորէն (*) Ախողիայի .
որով իրենց կը պատւիրէր , որ ամէն տարի
իրեն սուրբ տան . Եթէ չի տան՝ պատերազ-
մով վրանին պիտի ելլէ . պատրաստ կենան:
Այս բանիս վրա ժողովք ըրին որ մտածեն
Համբայ մը գտնեն . վազի եթէ հնազան-
դէին , ազատուեը կը կորսըլէր . և կը վախ-

սոր և սոսկալի է . ու ամէնուն իշ յաղթէ . նու-
զինունին շնծայ եղած է , ինչու ոիրի բացա-
րէն :

(*) Կը եսսս վի-դիայի թագաւորէն էր 550 տա-
րի առաջ գոյի թագաւորէն . որ Ասիային մէջ շա-
րելէրս աիրէւ վրայը Յոյնեւը հարիադրութեա-
ւունք գտնէ մէծութիւն տիպէ , որ շար մէծ եղա-
հարսութեա : Իմաստուններս հետ խօսիւ շար իշ-
ահրէր . որ յը մէծութեա կը շարամանալու-
սայ Սողոն գիշեագոյին , իւ ինչի ոկա գտա-
սը մարդ պէսած է : Անուշուաց , իւ մինչ ի
մահ ոկար չէ , որ մարդ իրէն երանի դայ : Յետու
կիւրսս թագաւորէն յաղթը ելով + աշածին առին .
երբու մէի պինունը յը գիշեալուսունը վերցուց
ոիրի շարնէր կը եսսսին , իւ պահ գոյւթ գոյւ-
շացաւ , որ մեղսուն իսպած էր վէր խօսեր . ու ոին
կոչուսուն վերան բացվեաւ . մի շարնէր ըստ շի-

նային Կրեսոսին իշխանութել տակն եյնիւ.
մինչև հարկ եղաւ խորհուրդ հարցընել Եղո-
բախն . և անոր տըւած խորհուրդին հե-
տեիլ ամէն բանի մէջ : Անալ պատասխան
տըւաւ , [թէ Պարոններ ձեր իշխանները խոր-
հուրդ կուտան , [թէ տուրք տանք Կրեսո-
սին . և օգտակար է հնազանդիլ անոր , ու
սկատերազմին [թշուտուութէն սովատիլ . ուո-
տի իմ ձեզի ասալու խորհուրդս սկարասլ է .
սակայն բաւական է ձեզի մէկ բան մը սկատ-
մել . որ հասկընաք [թէ ի՞նչ պէտք է ընել
այս բանիս մէջ : Այս աշխարքիս մէջ բար-
դը երկու ճամբայ յայտներ է մէկզմէկու-
հակառակ . մէկն է ազատութե՛ ճամբան .
որուն սկիզբն է դժւար և խիստ , և վերջը
դիւրին ու զըւարճալի : Մէկալն է ծառայ-
ութեան . որուն սկիզբն է դիւրին և հան-
գիստ , բայց ետքը դժւար և խիստ : Այս
բանս որ լսեցին , ամէնքը մէկ ձայնով պօռա-
ցին [թէ մենք ազատ ենք . ծառայութե՛ տակ
չենք իյնիր : Եւ այսպէս [թագաւորին խրկած
դեսպանը ետ ճամբեցին առանց տուրք տա-
լու : Կրեսոս երբոր բանը հասկըցաւ՝ ուզեց
Սամոսացոց վրա պատերազմ բանալ . բայց
դեսպանն իրեն ըստաց , [թէ առ իմ , չեմ կար-
ծեր [թէ կարենաս անոնց յաղթելով վրա եւ

նուռին . իմ հայրս է Կրեսոս : Զինուռը բռնէց
դարս կիւրս թագաւորին առջին , որ հրամէտ
իրակ վառեն ու ուշեւեն . իբակին ու բեր-
քին մասն ընկառ Սուզոնին խօսն ու սկսու Պօ-
տաւ , Սուզոն Սուզոն : Թագաւորը հարցաւ . եւ-
բար իմաշտ Սուզոնին խօսէց , աշտ ըստ :

լես որչափ որ Եզրոս իրենց քո՞վն է . վշ զի
անոր խորհուրդին կը հետեւին , որ ամմէն բա-
նի տակէն կելլէ . ուստի իմ խորհուրդս այս
է , որ ամէն բանէն լաւ կըլսոյ . դեսպան
խրկէ Սամոսացոցմէ Եզրոտն ուղէ , և խօսք
առւր իրենց հետ հաշոտւթե ընելու . սպար-
գեներ ալ խոստացիր առանց յիշելու տուր-
քը՝ ձգէ հիմա պատերազմը : Երբոր Եզրո-
սը ձեռք ձգես ան առենը առանց տշխատա-
նաց կը յաղթես անոնց : Կրեսոս հաւնեցաւ
այս հնարքիս , և դեսպան խրկեց ուղեց Ե-
զրոսուը : Անոնք ալ հաւանեցան խրկելու :

Եզրոս հասկընալով անոնց միտքը եկաւ
ժողովքին մէջ այսպէս խօսեցաւ . Ո՞լ Սա-
մոսացիր ինձի մէծ պատիւ է , որ թագաւո-
րին երթամ ոտքն իյնիմ , պատուեմ . սա-
կայն երթալէս առաջ կուզեմ ձեզի առակ
մը զուրցել : Հին ատենը երբոր կենդանի-
ները համաձայն էին՝ գայլերը պատերազմ
բացին ոչխարներուն դէմ . որ շներուն հետ
միաբան ըլլալով անոնց ետևէն կերթային .
իսկ շները առաջնորդ ըլլալով կը ծեծկը-
վէին . անանկ որ գայլերը չէին կրնար մօտե-
նալ ոչխարներուն : Ուստի գայլերը դես-
պան խրկեցին ոչխարներուն , որ հաշարվին .
բայց իրարու հետ միրով վարվելու համար
ուզեցին , որ շները պատանդ ըռէ հին խրկեն :
Ոչխարները յիմարութե հաւանեցան , և
խրկեցին անոնց իրենց շները . գայլերը մէ-
կէն պատռեցին շները՝ եկան խարներն ալ
կերան .

Սամոսացիք լաւ հասկըցան առակին միտքն
ու չուզեցին որ Եզրոս երթայ իրենց քո-

վէն . բայց Եղոբոս չուզեց կենալ , ելաւ
դեսպանին հետ դնաց թագաւորին :

Գ.Լ. • ԻԱ.

Եղուակն հաւունացանե զմագաւորն :

Երբոր Լիւղիա քաղաքը հասաւ Եղոբոս
ելաւ թագաւորին առջին . բայց թագաւոր-
ը զայն որ տեսաւ աւելի բարկացաւ :
Մեծ ամօթ է ինձի՝ կըսէր , որ ասանկ այ-
լանդակ մարդք զիս արդելէ , և անանկ մեծ
կղզին ձեռքէս հանեք : Պատասխանեց Եղո-
բոս , թէ ովլ մեծ թագաւոր , ես ոչ բունու-
թբ եկայ հոս , և ոչ վախնալուս . այլ իմ
կամքովս Եմ եկեր . ներէ ինձի , որ քիչ մը
խօսիմ . սակայն մեր բանին վրա չի խօսած
մէկ առակ մը սկսումեմ , թողութիւն ըրէ :
Մէկ մարդ մը մարախի ցուիրէ ժողովէր կը
մեռցընէր . դիսկւածովը բռնեց ճպուռ ճշ-
ճշ-ուէ օճէի մը . կենդանին տեսաւ թէ զինքն
ալ սկիտի մեռցընէ , սկսաւ աղաւել , թէ զիս
մի՛ մեռցընէր պարապ տեղը . վո՞ զի ես ոչ
ցորենի վնաս ունիմ . և ոչ մէկ ուրիշ զէն
մը կընամ տալ . այլ միայն շարժելով (*)

(*) Այս գեղակի իշնուանին էր ան յայնը օդէն
իւ սպառիսնայ . Հե՞ ո՞ի վրայի ծավին օդը իւ սպ-

մանտըրախիկ մաշկերս որ ունիմ վրաս՝ քաղցր
ձայն կը հանեմ, որ անցնօղները և բանւոր
ները զբւարձանան. ուստի ձայնես 'ի զատ
բան մը չունիմ, և ուրիշ բան չես կրնար
վրաս գտնել: Այս բանս որ լսեց, թողուց
որ Երթայ:

Ո՞վ մեծ թագաւոր. ահա ես ալ ոտքդ
ընկած կաղաւեմ, զիս փուճ տեղը մի՛ մեռ
ցըներ, ես մարդու գէշութի՛ ըրած չեմ. մէկ
յանցանք մ' ունիմ, որ համարձակ կը խօ-
սիմ, և մարդու երեսպաշտութի՛ չեմ ըներ.
թէպէտ մարմինս է անշնորհք, որ դրսէն
անարդ կերևնամ, բայց խօսքս անարդ չէ: Թագաւորը այս խօսքիս վրա անանկ զար-
մացաւ, որ մեռցընելու մեղքըցաւ. ուստի
կանչեց. Եզրոս, ես չէ, հասկա (*). Ճա-
կատագիրը կեանքդ քեզի բաշխեց. խնդրէ
խմէ ի՞նչ կուղես, քեզի կը շնորհեմ: Ո՞վ
մեծ թագաւոր, բաաւ Եզրոս, կը խնդրեմ
որ Ստմնսացոց հետ հաշտութի՛ ընես: Խիստ
բարի ըսաց կրեսոս՝ կը հաշտըզիմ: Անառենը
Եզրոսը ընկաւ թագաւորին ուղին ու խոնար-

նեն մաշկին թուերսն. և այն մաշկին թըր-
թըրաւը թէ ուշ կը սարժի սաստի յայն իւ հանէ.
սաս մարդ իւնդանիներ սասնի սափիայն իւ հանէն:

(*) Ճակատագիրը ըսելով հեթանոս իշլառիա-
ները իի մանային ճակատի կը գըած ամէն մար-
դան գալիւը. որ գըածը հարիսա- ոիտի ըւլոր,
ինչ որ ընես սահ լի իսր իւսէին: Այս գիրը դայն
ածները իրնային կարդաւ, բայց լեին իրնար ա-
րէւ անոր համար իւսէին, թէ Դիս Ամի-դա-
սին մահաւանը կը իսուլը. որ ճակատագրս

հութե՛ շնորհակալեղաւ ըրած բարերարութել համար :

ԳԼ. ԻԲ.

ԵՎՀԵՐԻ ԳՐԷ ԱՍՏԱԽԻՆ ԻՆ :

Եղոբոս իր առակները ան ատենը գրեց,
Երբոր Կրեսոս Թագաւորին քովին էր . որ
մինչև մեր օրը մնացին : Այս առակները
ընծայ ըրաւ Թագաւորին . անալ մեծ շնոր-
հակալութե՛ ըստնեց , և Եղոբոսին մեծու-
թե տալով գեսական ըրաւ , ու Թագաւորա-
կան թղթերով խրկեց , որ երթայ Սամոսա-
ցոց հետ հաշտութե խօսի Թագաւորին կող-
մանէ , և հասկըցնէ , որ իրեն աղաջանքով
Կրեսոս անոնց հետ բարեկամ պիտի մնայ :
Ասկէ ՚ի զատ Թագաւորը շատ սկարգեներ-ը
ընծայ ըրաւ Եղոբոսին , և Ճամբուն ամմէն
բանը հոգաց : Երբոր Սամոս հասաւ , քա-
ղաքացիք անպատմելի ուրախութե՛ լեցւած ,
Թագ սկսակ տարին իրեն . և քաղաքական
հանդեմներ ըրին , որ մեծ սկատիւ ըլսայ Ե-
ղոբոսին :

Իսկ Եղոբոս Թագաւորին թղթերը կար-
դաց բոլոր ժողովուրդին առաջը , հասկըցը-
նելով թէ անոնք ինչպէս որ իրեն ազտատու-

էր : Բայց աբ վարդապէտները իիմանան ածացին
նուիստաբարդին՝ որ իւ իստավարէ աւ իստին :

Թե շնորհեցին , ինքն ալ անոր դէմայս բա-
նով հատուցումը ըրաւ . ուստի թագաւորին
միտքը յայտնեց անոնց և հաշտութե՛ ըրաւ :
Յետոյ ելաւ այս կղզիէն գնաց զանազան
քաղաքներ իմաստուն մարդիկ փնտըռելով
որ հետերնին հակաձառութե՛ ընէ : Մինչեւ
ելաւ (*) Բաբիլոն գնաց . հոն ալիր իմաս-
տութիւր յայտնեց , և Ակերոս թագաւորին
պալատը մտաւ :

Այն ժամանակի թագաւորները իմաս-
տութիւր վարվելով կորիւ չունէին , միշտ խա-
ղաղութե՛ մէջ էին . և ասով շատ անդամ
իրարու առակներ , և խրթին բաներ կը-
դրէին հարցմունք կընէին այս սպայմանով ,
որ երբոր մէկը չէր կրնար պատասխան տալ ,
իը պարտաւորէր տօւրք տալու մէկալին ,
ինչ կերպ որ դաշնք կընէին (**) :

Եղորոս ամմէն հարցմունքին և առակնե-
րուն գիւրին պատասխան կուտար , որ Ակ-
երոս թագաւորին կը դրէին , և ասով մէծ
համբաւ ունեցաւ թագաւորը : Բայց որով
հետեւ մէկալ թագաւորները չէին կրնար
Ակերոսին խնդիրներուն պատասխան տալ ,
կը պարտաւորէին գաշնադրութեան համար
տուրքէր տալ թագաւորին :

(*) Բաբիլոն կամ Պաղտաստ այն ժամանակը
ծառիած ըլլալ գիւրուններու յարդութիւն կար ,
մանաւանդ Ակերոս թագաւորին օրը . անոր հա-
մար Եղորոս հոն գնաց :

(**) Այս իերպ հարցմունքու մինչև հիմա իաց
Աբաբաբա մէջ . որ Դրսի առաջնորդը ըստ ան-
գայ Ըէյխերը և Տէրվիշները իերեւան մէծամէծ-

Գ.Լ. ԻՊ. .

Եղովոս որդեգրե ինքեան պահան :

Եղովոս տեսաւ որ զաւակ չունի . մէկ
ազնուականի մը զաւակ Եննոս անունով ի-
րեն որդի ըրաւ , տարաւ թագաւորին յանձ-
նեց իբր իր հարազատ զաւակը . բայց այս
ապերախտը շատ չանցաւ մէծ անկարգու-
թիներ ըրաւ Եղովոսին տանը մէջ : Եղովոս
հասկըցածին պէս տնեն դուրս ըրաւ : Իսկ
Եննոս ոխ պահեց , ու Եղովոսին վրէժիլն-
դիր ըլլալով թուղթ մը շինեց անոր բեր-
նէն , որ կըգրէ իշխաններուն . որոնք խրթին
առակներ կը խրկէին Լիգերոսին . և անոնց
կը հասկըցնէ , թէ ասկէ ետե ձեզի հետ
մէկ պիտի ըլլամ թագաւորին դէմ : Այս
թուղթը Եղովոսին մատնիովը կնքեց տա-
րաւ թագաւորին ցըցուց :

Թագաւորն որ տեսաւ Եղովոսին կնիքը
մւհիւը , կարծեց թէ անտարակոյս Եղո-
վոսն է գրեր այն թուղթը իրեն դէմ . ուս-
տի բարկութեր հետեւելով անանկ տաքցաւ ,
որ մէկէն հրամեց չերմիբռոսին (*), որ ա-

ներսան բան իւ հարցնէն . Է՛լէ լգիտնան , իւ
ուսբաւարին անոնց բան փալս :

(*) Հերմիքն էր թագաւորին մէկ հասագաւ-

ռանց քննելու մեռյղնէ Եզրոսը իբր մատ-
նիչ . Հերմիբոս Ճշմարիտ բարեկամ ըլլա-
լով Եզրոսին՝ իրեն բարեկամութեր յայտ-
նի ըրաւ այս կերպով : Առաւ Եզրոսը
տարաւ մէկ գերեզմանի մը մէջ սկահեց ա-
մենելին ծածուկ . և ինքը զգուշութեր բան
կը տանէր անոր մարդ չիմանալով : Իսկ Են-
նոս թագաւորին հրամանովը Եզրոսին ամ-
մէն բանը յափշտակեց :

Ժամանակ անցնելէն ետև Կեքդենաբոս
թագաւորը Եգիստացոց լսեց որ սպաններ
են Եզրոս , թուղթ մը գրեց Ախերոս թա-
գաւորին՝ կաղաչէր որ իրեն մէկ քանի սրա-
միս Ճարտարապետ գուշտ խրկէ . որպէս զի
շինեն իրեն անանեկ մէկ աշտարակ խռով մը ,
որ ոչ երկինքին դպչի , և ոչ գետինին : Կաւ
խրկէ իրեն անանեկ մէկ խելացի բարակ մարդ
մը , որ կարենայ սպատասիան տալ խրթին
առակներուն : Թէ որ ըստաց այս բանս կա-
րենաս ընել , ես տուրք կուտամ քեզի . թէ
չի կրնաս , գուն ինծի սլիտի տաս : Այս
թուղթն որ կարդաց թագաւորը տրտմու-
թեր պաշարվեցաւ . վո՞ զի մէկը չուներ քովին
որ կարենայ աշտարակին առակը մէկնել .
ուստի սասաիկ ցաւելով Եզրոսին մահուա-
նը վրա՝ կըսէր թէ անոր մեռնելով իմ տէ-
րութես գլխաւոր սիւնը կործանեցաւ :

Հերմիբոս աեւաւ թագաւորին կսկի-
ծը սրտանց է , եկաւ աւետիս տըւաւ , թէ
Եզրոս կենդանի է . վո՞ զի թագաւորիս

բիմ պաշտօնադերը իր Հասասպաշը . անոր հա-
յար իրէն պատիրէց , որ մէուշնէ Եպիսուս :

օգտին համար չի մեռցուցի . լաւ դիտէի ,
որ շատ սկսուի զվարած տըւած վճռիդ վրա :
Այս բարի լուրը լուսածին պէս թագաւորը
մեծապէս ուրախացաւ : Ուստի շուտով Եւ-
զոքուսը գերեզմանէն դուրս հանեցին , վրան
դլուխը խեղճաղտոտ հողոտ , մէկէն թագա-
ւորին գէմը հանեցին . որ զայն անանիկ խեղճ
տեսնելով այնպէս սիրաը ցաւեցաւ , որ
սկսաւ լալ : Հրամեց որ շուտով լուսն հագ-
ցընէն և ամմէն պակասութիւն հոգան : Եզո-
քոս Եննոսին ըրած անօրէնութիւն սուտ հա-
նեց , և իր մեծարտութիւն յայտնի ընելու
համար՝ ներում խնդրեց թագաւորէն , որ
չի մեռցնէ Եննոսը :

Լիգերոս թագաւորը հանեց եգիպտացոց
թագաւորին թուղթը ցըցուց Եզոքոսին , որ
հասկընալով առակին միոքը , սկսաւ ծիծա-
ղիւլ . Ետքը թագաւորին ըսաց , որ ասանիկ
պատասխան տայ : Երբոր ձմեռն անցնի՝ քե-
զի բանւորներ կրխրկեմ , որ շինէն ըսած
աշտարակդ : « Սակ կրխրկեմ մէկ դիտուն
մարդ մը , որ ամէն բանի պատասխան տայ
ինչ որ իրեն առարկեն : Անատենը Լիգերոս
ձամբայ դրաւ եգիպտոսի թագաւորին գեռ-
պանները , և նորէն տըւաւ Եզոքոսին ամէն
մեծութիւն , իրեն ծառայ տըւաւ Եննոսն
ամէն ունեցած բարիքովը :

ԳԼ. ԻԴ.

ԱՆՐԻՍԱՐԱՆՆԻԱՆ և ԽՐԱՉԻ ԵՎԱՀԲՈՒՅԻ :

Եղորոս նորէն առւնն առաւ Եննոսը . ամենելին անցած բաները չյիշելով իր զաւկին պէս կը նայէր , և շատ գեղեցիկ խրատներ կուտար , որ բարի ըլլայ : Որդեակ կըսէր , ամէն բանէն աւելի զած պաշտէ . թագաւորին հնազանդ եղիր . թշնամիներուդ առջին երեւելի եղիր , որ քեզ չի նախառէն . իսկ բարեկամներուդ հեզ և խոնարհ , որ միշտ գքեզ աւելի սիրեն : Ազօնքք ըրէ թշնամիներուդ երբոր խեղճկըլլան աղքատութք և հիւանդութք . որ ետքը քեզի տրտմութի չի բերեն : Շատ անդամ՝ ալ բարեկամներուդ առողջութէը համար ազօնքք ըրէ : Միշտ նայէ որ ընկերոջդ հետ աղէկ սիրով երթաս , որ ըրլայ թէ ցանկութք ուրիշ մարդու ետևէն ըլլայ . որովհետեւ կանայք բնապէս փոփոխական և թեթևամիտ են . երբոր կըշողքորթին , չար բան չեն մտածեր : Անխոհեմութք ամէն բանի մէկէն մի՛ հաւատար , քիչ խօսէ , և միշտ քու լեզուիդ որ եղիր . մի՛ նախանձիր ուրիշներուն բաղդին . առաւել ուրախացիր ուրիշին յաջողութէը վրա , վո՞զի նախանձը աւելի վնաս կը բերէ

քու անձիդ, քան թէ ուրիշին (*): Հոգա-
բարձութել ըրէ տանդ + արթուն կեցիր ծա-
ռաներուդ վրա, որ քեզմէ վախնան իբրև
իրենց մէծէն, և քեզսիրեն իբրև իրենց բա-
րերար: Մի ամբոխար միշտ աղէկ բաներ
սորվելու. մի յայտներ կնոջդ քու ծածուկ
բաներդ. վազ զի անդադար կըջանայ պատ-
ճառ գտնել, որ վրադ ելլէ, և քեզի հրամ-
մէ: Ամէն օր բան ժողվէ քեզի վաղւան հա-
մար, զի շատ աղէկէ ունեցած բարիդ թշնա-
մուդ ձգել մեռնելէդ ետեւ, քան թէ ողջու-
թել ատենդ բարեկամի կարօտ ըլլալ:

Որուն որ հանդիպիս բարեկէ ոլատուով
և քաղաքավարութե. շունը պոչը շարժելով
երբ կը շողոքորթէ տրը, պարտական կընէ
որ իրեն հաց տայ: Մի զղջար բարեպաշտ
ըլլալու. բամբասօղ մարդը տունդ մի հան-
դիպցըներ. վազ զի դուրս կը հանէ տանդ
բանը, և ամէն զուրցածներդ: Անանկ բան
չընես որ քեզ անտրդանիք և տրտմութիւնք-
րէ: Մի խռովիր աշխարհ.քիս սկասահմունք-
ներուն վրա: Ուրիշին չար խորհուրդ չի
տաս. և անօրէն մարդկանց չար վալքին չի
հետեխ:

Այս խրատներս անանկ դպան Եննոսին,
որ նետի օգի պէս սիրու խոցեցին. մինչեւ
խիղճմտանքին խոյթելովը, և Եղոքոսին

(*) Այս Եւբեռուին խրատը աւելի յարհար
ինադայ մէր Աւագանին սպուգուբանութել. իբր ուն-
նախանչ բառը այսպէս իշխագուբանի նախ
անձին չնասէ. Եւ ուն սիրու հաշելով նախ իրեն
չնաս ինադայ:

սուր խրատները մասմբալով շամ չանցաւ
մեռաւ :

ԳԼ. ԻԵ.

ԵՐԱԾՄ ԿՐԵԷ ԿՅԱԳԻ ԱՐԺՈՒՆՈՅ :

Եղոքոսկանչեց բոլոր հաւորաները և սկառ-
փրեց՝ որ չորս հատ արծիւի ձագ բռնեն ի-
րեն բերեն : Առաւ զանոնիք զարմանալի կեր-
պով անանկ կրթեց, որ մարդու հաւտա-
լիք չի գար (*) : Վասն զի կը պատմեն, թէ
թռչուններուն սորվեցուց . որ երբ պիտի
թռչեին՝ վիզերէն կախեց չուանուլ մէշմէկ
զամբիւղ չէ մոլիւ մէջը դրաւ պզաի տղաք-
անանկ սորվեցուցեր էր ձագերուն, որ տղա-
քը ուր ուզեն, հոն երթան . վերվար կը
թռչեին տղոցը ուղածին պէս : Երբոր ձմեռն
անցաւ, գարնան առենը Եզրբոսամէն հար-
կաւոր պատրաստուիը տեսաւ ճամբայ ելաւ.
արծիւներն ալ տղաքներով հետն առաւ ե-
գիպտոս գնաց : Անանկ զարմանալի բաներ
ըրաւ եգիպտացոց սուջին, որ աեմնողին
խելքը կերթար :

(*) Բանառսաք իւ գորակիւնոյ այս պապիւն-
նեանս վրա . վասն զի դժուար բան է . բայց հիմա
Եւրոպա իւնիտանին երան անանի իրեռութիւն-
քան, որ մարդ իւղաբանաց, միւլւ հասպալիւ-
նի գոր . եւղիետ այս պապիւնիւն աւ շուր դժու-
քան է :

Բայց Նեքդենաբոս թագաւորը Երբոր լսեց
Եզրբոսին գալը մէկ բարեկամէն, ըսաց, թէ
զիս կը խաբէ՞ս. ես լսեր եմ թէ շատոնց
մեռած է: Միւս օրը պատուիրեց իր պաղա-
տի մեծամեծներուն, որ ամէնքն ալ ճերմակ
հագնին. ինքը կարմիրներ հագաւ, գլուխն
ալ դրաւ թագ մը անգին քարերով զարդա-
րած, և այսպէս մեծուե փառքովնատեր էր
աթոռը՝ հրամեց որ Եզրբոսը բերեն. որ ներս
մոռածին պէս յանկարծ հարցուց թագաւո-
րը, թէ զիս ի՞նչ բանի կրնաս նմանցըներ, և
քովիններս ի՞նչ բանի: Պատասխանեց Եզր-
բոս. քեզ կը նմանցընեմ գարնան արեւու.
և քովի իշխաններդ հասած ցորենի: Թագաւ-
որը զըւարձանալով այս պատասխանին
վրա մեծամեծ պարզեներ տըւաւ Եզրբոսին:

Մէկալ օրը թագաւորը հագաւ ճերմակ
լսաթեր. և իշխաններուն ալ սրատուիրեց, որ
կարմիր հագնին. բերել տըւաւ Եզրբոս մէ-
կէն հարցուց: Վնալ պատասխան տըւաւ
թէ գուն կըլմանիս արեգական, և իշխան-
ներդ՝ ճառագայթին: Յետոյ ըսաւ Նեքդե-
նաբոս. թէ իմ տրուես առջին Ախերոս թա-
գաւորը բան մը չեմ սեպեր: Եզրբոս ինդա-
լով պատասխանեց. ովմեծ թագաւոր ասանկ
դիւրին դատաստան մի՛ կտրեր Ախերոսին
վրա. եթէ գուն քեզ քու ժողովուրդիդ հետ
բաղդատես, կրնաս արեւ ըսվիլ. բայց թէ
որ Ախերոս թագաւորին հետ բաղդատես,
քու ըսագ անոր. առջին խաւար կըլլայ:

Նեքդենաբոս զարմանալով ասոր համար-
ձակ պատասխանին վրա, հարցուց թէ բե-
րիր մեզի ճարտարապետներն, որ ուզեցի

աշտարակ շինելու համար : Պատրաստ է ըստ Եղոբոս + միայն պետք է որ տեղըցոյց տաս որ սկզբինք շինել : Ան ատենը թագաւորը քաղքէն դուրս ելու տարատ մէկ մէծ դաշտի մը մէջ՝ ցըցուց տեղն, որ պատրաստեր էր աշտարակին համար :

Եղոբոս հոն տարատ արծիւները, և չորս տղաքը դրաւ զամբիւղներուն մէջ գործիքներն ալ միատեղ, թռուց թաշունները, երբոր այս տղաքը վեր բարձրացան, սկսան միաբերան պօռալ, թէ բերեք մեզի քարու կիր, և փայտ, որ շինենք աշտարակը :

Նեքդենաբոս երբոր տեսաւ տղաքներն օդին մէջ կըսպօռան, արծիւներն անոնց հնագանդ՝ ուր ուզեն տղաքը, հոն կերթան։ Հարցուց Եղոբոսին, թէ ո՞ր աշխարհքէն այս թեաւոր տղաքը բերիր : Պատասխանեց Եղոբոս . Լիգերոս շատ ունի ասանկ տղաք, հապա դուն ինչպէս բաղդատեցիր անոր, որ ածներուն հաւասար մարդ է :

Յաղթըւեցայ ըստ Նեքդենաբոս . ուստի այլ բան չունիմընելու, բայց եթէ մէկ քանի տռակ զուրցեմ. նայինք կրնան շուտով քակել : Ես մէկ զարմանալի էք մի մը ունիմ, որ երբ կըլսէ բարիլընին արու ձիերուն ձայնը, հոս կըսկըսի շուտով յղանալ : Թէ որ այս կարգէ դուրս գիպւածին պատճառը կարենաս տալ, իմաստութիւն մեզի կըյայնես : Ո՞վ մէծ թագաւոր ըստ Եղոբոս . մինչեւ վաղըինձի ժամանակ տնիւր, պատասխան կուտամ հարցմունքիդ : Երբոր տեղը դարձաւ Եղոբոս բռնեց մէկ կատու մը արւաւ ծառաներուն, որ բոլոր քաղաքին մէջ

ծեծելով կը ալտըրցընեին։ Բայց եդիստա-
ցիք որովհէտեւ ասանկ կենդանիները կըսպաշ-
տէին (*), տեսան որ կատուն կըծեծեն
վրանին թափեցան բազմութեք քաշեցին ա-
ռին կատուն ձեռքերնուն որ չի ծեծեն։ և
գացին թագաւորին յայանեցին այս սոսկա-
լի մեղքը։ Թագաւորը կանչեց Եղոբոսն
ըստւ, թէ չլյատէիր որ մենք աստըծու պէս
կըսպատւենք կատուն։ ինչո՞ւ համար այս
բանս ըրիր։ Պատավաննեց Եղոբոս, թէ ես
անոր համար ըրի, վասնզի անիրաւութիւն
ըստւ Ախերոս թագաւորին։ ու այս գիշեր
խղդեց անոր աքաղաղը, որուն ձայնովը գի-
շերւան ժամանակը յայանի կըլսոր։ և խիստ
արթուն կտրիչ աքաղաղ էր։ Կրկնեց թա-
գաւորը, ի՞նչ կըխօսիս Եղոբոս, չ՞ո՞ւ ամըց-
նար շինած սուտերէդ։ ի՞նչպէս կրնայ ըւ-
լալ, որ կատուն մէկ գիշերւան մէջ Եգիսկ-
տոսէն Բաբիլոն երթայ :

Եղոբոս ծիծաղելովլրաց. եթէ քու ձիերդ
Բաբիլոնին ձիերուն ձայնը առնելով կը յլա-
նան, այս բանս ինչո՞ւ ըլլայ անհնարին։ Թա-
գաւորը բանը հասկընալով շատ զարմացաւ
Եղոբոսին դառւմին, և խելքին վրա :

(*) Ամեն լորժագանի իներանին եը հասարա-
կօրէն մէծ ուսուիւ ռանէին Եգիսկառուի մէջ։ Տա-
նաւանդ ի՞ւլը, ուլիսը, իսուսն, և այն ։ անոք
հայմաց Եգիսկառուիւ ծծմանդ իսուսկէին։ ասոնց
մէջ լէին իւնաբ սուրէւ։

ԳԼ. ԻԶ.

ԽՎԱՐԴԱՏԱՆՅԻ ԵՎԱՀԲԱՒԻ :

Վիշմը ժամանակէն ետև թագաւորը բերել արւաւ (։) Արեգ քաղքէն շատ խմաստուններ, և վիճաբանող գիտուններ, որ Եղոբոսին հետ հակածառուի ընեն. ուստի ամէնքը միատեղ Եղոբոսն ալ հետերնին կերակրի հրամցուց : Երբոր սեղան նստան, այն գիտուններուն մէկը դարձաւ Եղոբոսին ըստ, ով օսարական՝ ածն որ ես կըպաշտեմ, զիս խրկեց որ մէկ խնդիր մը զուրցեմ որ քակես : Պատասխանեց Եղոբոս թէ գունդէշ կըխօսիս . վասն զիս ած ամէն բան գիտէ և իրմէ ծածուկ բան չի կայ . ուստի մարդէ բան սորվելու կարօտ չէ, քեզի ինչու պիտի խրկէ . այս խօսքով չէ թէ միսյն գունդէշ կանարգես, այլև ածդդ ալ յիմար կընես :

Մէկ ուրիշն ալ ըստց, թէ մէկ մէծ տաճար մը կար, մէջը մէկ սիւն մը տասվերկու քա-

(*) Արեգ +աղա+՝ այսինքն արեգակիան +աղա+ յանաբէն իւսվէ հելիորոլիս . հին ադէնը արեգակին պաշտօնը հոն իւլլար, անոր համար այս ուես իւլլեցաս : Այս +աղա+ը նեղու գետին ու Արտիային մէջն է . որուն բնակիցները բաւր գուշէրն էին և գիտանները՝ որ իւրայէւացիտ շնուշին դարաւանին հըստանալը,

զաքով. ամէն մէկը երառւն գերան դիբէն
ունէր, որ երկու կնիկ կըստըտէին չորս գին:
Պատասխանեց Եղոբոս, թէ այս ի՞նչ գեղե-
ցիկ ինդիր է, որ մեր տղաքն ալդիտեն մեկ-
նել: Այս տաճարն աշխարհքս է. սիւնը
տարի է. քաղաքները՝ ամիսներն են. գերան-
ները ամսուն օրերն են. Երկու կնիկներն
ալ, որ սիւնին չորս դին կըստըտէին, գի-
շեր ցորեկն է, որ փոփոխ կըդառնան:

Միւս օրը Ներդենաբոս պատւիրեց, որ
իրեն իշխանները հոն գան. Ես շատ կըվախ-
նամ կըսէր, չըլլայ թէ պարտաւորինք տուրք
տալու Լիգերոսին Եղոբոսին պատճառաւ ը-
խորհուրդ ըրին, մէկը իշխաններէն ըսաց.
Թէ պէտք է մէնք ալ պարտաւորինք Եղո-
բոսն, որ մեզի անանկ ինդիր մը առաջար-
կէ, որ ոչ պատճառ ունենայ և ոչ ցուցում.
մինչեւ մոլորդուս անցած չըլլայ, ու լսած
ալ չըլլանիք (*): Եղոբոս խօսք տրւաւ, որ
վաղը հարցմունիք կընեմ: Ելաւ տուն գնաց
մէկ թուղթ մը շինեց. որուն մէջ գրած էր
որ Ներդենաբոս խօսք կուտայ թէ հաղար
տաղանդ Լիգերոսի տալիք եմ (**): Հետե-

(*) Որովհեք իարգն եխաւ որ Եղոբոս ալ
իշխան ինդիր հարցունէ, և գիրեին որ անոր ինդի-
րը չէ իշխան ոիդիք հասկընալ, անանի ինդիր իշ-
խութեցին, որ չէ իշխայ հասկընալ. և լսած բա-
նէնին չըլլայ: Ասով ինչ ինդիր որ ըլլար ոիդ-
իք չսկեին. թէ մէն+ այդ բանը լսած չն+, և գի-
րէն+, անդադառ բան չէ. ահա այս ճամբազ
դիդի յաշմէին Եղոբոսին:

(**) Եղոբոս ալ անոնց դիդէ հասկընալով ա-

եալ օրը բերաւ թուղթը թագաւորին իշխանները և խորհրդականները ուրիշ բան կարծելով թուղթը չի բացած միաբերան կանչեցին, թէ մենք գիտենք, և շատոնց հասկըցած ենք. այս բանը մեզի նոր չէ: Որովհետեւ գիտենք կրաքը, ըստ Եղորոս, ես ալ ձեզի մեծապէս շնորհակալ կըլլամ և խոնարհուք զիս սկարտական կըհամարիմ ձեզի:

Բայց Նեքդենաբոս երբոր կարդաց թուղթը, շատ նեղացաւ սիրտը սկարտքին համար որ գրած էր. մինչեւ չի համբերելով կանչեց, թէ ես Լիգերոսին սկարտը մը չունիմ. վը կայեցէք ամենքնիդ ես անոր սկարտական եմ: Ան ատենը փոխեցին իրենց միտքն ու ըստին թէ մենք ասանկ բան ոչ լսած ենք և ոչ գիտենք: Կրկնեց Եղորոս, թէ ահա այս էր իմ ինդիրս, որ մեկնեցիք:

Նաև ինունից մը դրաւ, որ հարիաւ պիտի պարպաւարին. վասն զի ենէ ըստն իրաւ և, և զի գննէն, պիտի պարպաւարին. ենէ վկայութ սուսպ հաննոն թուղթը, դարձեաւ իշ պարպաւարին. որովհետ իրենց բերնովը վկայեցին, և այս բանը չնուշած: Այս իւրականուարին-թիվ երկսայյրաբանութիւնը կը-պի. ինչպէս հին առենը մանուկ մարդունի մը ճարպասանի մը ուղարկ առինը մասս, և շապ բան իսոսպասաւ, և ու որ անանի սորվի, մինը իսորենայ յաղթել առջի դափասափանին մէջ որ իսօսի: Այն բան սորվը լուն երեւ լուսուց վարպետին բան մը դաւ. և ար դին դարձաւ նև վասպը իշտաւ. վասն զի ենէ յաղթեր վարպետին՝ իշ վասպը իշտաւ. ենէ յաղթելը, նոյնու դաշնուին ուժուշը իշ վասպին: Ասու նման է Սկսբոսին առարին-թիւն ու:

‘ԱեքդԵնաբոս անանկ զարմացաւ Եղոբո-
սին այս ըրած բանին վրա , որ չդիմացաւ կան-
չեց թէ պէտք է խոսառվանինք որ երջանիկ
է լիդերոս . որ այսպիսի խմաստուն մարդ-
ունի իր տրութել մէջ . որ է իրը անհատ-
նում աղբիւր մը գիտութե : Այս խօսքէս
ետև հանեց տրւաւ հազար տաղանդը Եղո-
բոսին , որ գաշինք ըրեր էին . և մէծ բարե-
կամական սիրով Բաբիլոն խրկեց : Եղոբոս
Բաբիլոն հաստաւ պատմեց Լիդերոս թագա-
ւորին ամէն բանն որ ըրաւ Եդիստոս . և տը-
ւաւ ուկիներն , որ ‘ԱեքդԵնաբոսէն առեր
էր : Լիդերոս այս ըրած երախտեացը համար
մէկ ուկիւ արձան մը կանգնել տրւաւ . ի
պատիւ Եղոբոսին (*) :

(*) Հին արենը շատ մէծ պատիւ եր նուն մէ-
կին անուանը արյան մը իանգնեին . իսկ ոսկին ար-
յան իանգնեւը շատ գերազանց պատիւ եր : Միւ-
շիտիւ զօրագույշ ամենաշոշ քը բռնընիւը ազա-
տէց , բայց ոսկին արյան լի ուրին . ասով կիմաց վը
Եղոբոսին մէծ համարուն որ ուներ Բաբիլոն :

ԳԼ. ԻԵ.

ԵՎԱՐՄԱՆ ԳԽԱՅ, 'Ի ՅՈՒՆԱ, և 'Ի ԴԵՂԱ :

Եղոբոս Բաբիլոն դառնալէն Ետե՛ շատ
չանցաւ միտքը դրաւ որ յունաստան երթայ
ժուռ գայ թագաւորին հրամանովը . բայց
մինչեւ որ երդում ջրաւ նորէն ետ դառնա-
լու՝ թագաւորը հրաման չի արւաւ . ուստի
խօսք արւաւ Եղոբոս թէ կը դառնամ մին-
չեւ 'ի մահ Բաբիլոն կը մնամ: Գնաց շատ
Երեելիքաղաքներ յունաստանին մէջքալեց,
և ամէն տեղ իրեն խմասառւն փորձերն ը-
րաւ. յետոյ ուզեց երթալ Դեղոս կղզին (*):
Այսքաղաքացիք երբ անոր խօսակցութիւն
կը լսէին , ուրախ կը լսային . սակայն իրենց
անշնորհք ըլլալովը մէկ յարգութիւն մը չը-
րին Եղոբոսին :

Իսկ Եղոբոս նայելով անոնց տմարդուեը
զուրցեց . ովկ դեղոսացիք ես ձեղ վասյախ կը-
տորի մը կընմանցընեմ, որ ծովուն վրա կեր-
թայ կուգայ . որո՞ւք որ հեռուեն կը տես-
նեն , կարծեն թէ Երեելի մեծ բան է . բայց

(*) Դեղոս իսմ դելոս կղզին հին ժամանակը
շատ երեւելի դեղէր . որ Աղուսն լածին ծնած
դեղն ըլլալով իսպառնաց հռն շինած էր շատ
ժամանակը , ամէն աշխարհի հռն իւրեմար :

Երբոր ցամաքին կուգայ կըմօտենայ , կը
հասկըցիլի ինչըլլալը : Ես երբոր ձեր քաղ-
քէն հեռու էի , շատ կըզարմանայի ձեր վը-
րան , մինչև իմ համարմանս արժանի դրեր
էի զձեզ . բայց երբոր հոս եկայ , շուտով
հասկըցայ թէ սխալ է եղեր իմ կարծիքս .
ուստի ես ալ միաքս փոխեցի . և հիմա ձեզ
կըտեսնեմ ամենէն անպիտան մարդիկ :

Դեղոսացիք այս խօսքերս լսելով վախցան
որ չըլլայ թէ ամէն գացած քաղաքները պատ-
մէ , ուղեցին զըսպարտելով մեռցընեն : Այս
բանը ապահով գլուխ տանելու համար (*).
Ապողոնին երևելի տաճարէն դողցան մէկ
ոսկիէ աման մը , և բերին գաղտուկ պահէ-
ցին Եզրոբոսին բաներուն մէջ . իսկ Եզրոբոս
ամենելին բան մը չգիտնալով միամիտ ելաւ
Դեղոս կղզիէն ֆօքիդա երթալու : Մէկէն
դեղոսացիք վասն թափեցան արգիլեցին ,
ամբաստանութիւննելով թէ դուն որբա-
սլըզութիւնը ըրիր : Եզրոբոս զինքն արդարա-
ցընելով համարձակ կըսէր , թէ այդպիսի
բան չէմ ըրած : Անոնք ալ բռնութիւն փըն-
ողուեցին բաներուն մէջ գտան ոսկիէ ամա-
նը , որ իրենք դրեր էին հոն : Առին ամանը
ձեռքերնին մէծ աղաղակով տարին բոլոր
ժողովուրդին ցըցուցին : Եզրոբոս հասկըցաւ

(*) Աշուշն էր Դիտոին ուրդին , լած նըս-
ծըշուշնեան և բանասակնեշուշնե . որ այն լած յար-
գէւի էր հէթանոսաց , մինչ ամենու ասոր դա-
ձարը իւրեային , որ իւրաք քառասոր շինոծ էր
Դեղոս իւրին . քաղաքացին այս քաճարը կըդու-
ծէին , և իւրիւ անպիտան մարդիկ էին :

անոնց անօրէնութիւր և յայտնելով իրեն ան-
մեղութիւնը ազացեց որ թող տան իրեն եր-
թալ: Խակ անօրէն ժողովուրդը բանտը դը-
նել տըւաւ զայն, և դատաւորները վճռե-
ցին, որ դատապարտութիւր մեռնի Եզրոս
իրը օրինազանց: Եզրոս տեսաւ որ տեղէ
մը ձար չի կայ, անանկ վատնդի մէջընկեր
էր որ ազատում չուներ այն թշուառու-
թէն, ոկսաւ իր անբաղդութիւնը լալբան-
տին մէջ:

Դամաս անունով մէկ բարեկամը բանտը
գնաց: տեսնելով Եզրոսին խեղճութիւնը
սիրտը ցաւեցաւ, և հարցուց, թէ ինչո՞ւ
համար կըվշտանաս կուլաս: Պատասխան
տըւաւ Եզրոս, թէ մէկ կին մը նոր թա-
ղէր էր էրիկը գնաց գերեզմանին վսա բոլոր
օրը լսց կըսէր. հոն մօտ տեղը էրկրագործ
մը կաշխատէր, որ տեսնելով ասոր լացը՝
թողուց եզնեցն ու եկաւ ինքն տլ գերեզ-
մանին քով կուլար: Կինը հարցուց, թէ ին-
չո՞ւ համար կուլաս: անալ ըսաց, թէ ես
ալ իմ կինս թաղեցի, եկայ որ լալով սիրտս
պազի: Ինձի ալ ըսաց կինիկը, այս խեղճու-
թիւր պատահեցաւ: Կրկնեց էրկրագործը.
ուրեմն երբոր էրկուքիս պատահածն ալ նոյն
է ինչո՞ւ համար մէկզմէկ չենք առներ, որ
էրկուքիս կսկիծն ալ անցնի, ես ինչ սէր
ունէի ընկերոջս վրա, քեզի կըդարձնեմ,
դուն ալ անանկ ըրէ՝ կըմըննայ կերթայ:
Երբոր մէկմէկու հաւանուի տալով ասանկ
կըխօսէին, դող մը եկաւ եզները դողցաւ.
Էրկրագործ արան որ դարձաւ տեսաւ թէ
եզները չի կան. ոկսաւ անանկ դաւն լալ,

որ չի կրնար ըլլուլ: Իսկ կնիկը գերեզմանն նոցէն դարձաւ արտը՝ նայեցաւ որ մարդը կուլոյ: ո՞հ ըստւ հիմայ ալ կուլաս: Պատասխանեց մարդը, թէ ահա հիմա ունիմ ճշմարիտ պատճառ լոլու:

Ասոր նման է կրաքը Եղոբոս, իմ խեղ Ճութիս և վիճակս. վասն զի շատ վտանգ ներէ ազտտելէս եաւ եկայ հոս ընկայ. հիմա ճար մը չեմ կրնար գտնել, որ մեռնելէս ազատիմ, որով դատապարտեցին զիս. ահա այս է պատճառն որ կուլամ:

ԳԼ. ԻԼ.

Մահ Եպիկոսի:

Կեղոսացիք բազմութե՛ եկան բանտը մը տան բոնութե՛ քաշեցին դուրս հանեցին Եղոբոսն, որ տանին մէկ բարձր ապառաժ լեռան մը վրա հանեն, ու անկէ վար նետին: Եղոբոս սկսաւ առակներ զուրցել այսպէս: Երբոր կենդանիներն իրարու հետ կը խօսեին, մուկը գորտին հետ բարեկամ եղաւ. աղացեց, որ երթայ հետը կերակուր ուտէ. ուստի առաւ տարաւ մեծատան մը տուն, ուր լեցուն բարիք ըլլալով համբարանոցը +ի լուս, կրաքը թէ ո՞լ բարեկամ գորտ՝ հրամէ: Գորտաը լաւ մը կշտանալէն եաւ հրամցուց մուկն, որ անոր հարկիքն երթայ. բայց ճամբան չի յոդնելու համար ուզեց որ ուքը թելով մը անոր ուաքին կա-

ալէ . որպէս զի գորտին հետ լողալով անցնի
ջրէն երթայ հոն : Ասանկ կապելէն ետե
գորտը ցաթկեց ջրին մէջ սկսաւ լողալ . իսկ
մուկը ջրին մէջ խղղըլեցաւ . որ մեռնելու
առենը կըսէր գորտին , թէ դուն եղար իմ
մահուանս պատճառը , բայց դուն ալօք մը
սիխի գտնես քեզմէ մեծէն : Այս խօսքս
շատ չանցաւ կատարվեցաւ . վո՞զ զի մէկ ար-
ծիւ մը տեսաւ որ ջրին երեսը սատկած մուկ
մը կայ , վասն ինջաւ խլեց . բայց գորտն ալ
անոր հետ կասկած ըլլալով միատեղ յափրշ-
տակեց երկուքն ալ կերաւ :

Այսպէս դուք որ զիս անիրաւութք կը
մեռցընէք , ասանկ ոտքի տակ առնելով , որ
կուգայ որ կը գանէք , և ձեզմէ իմ վրէժս
առնօղ մը կըլլայ : Բարիլոն և բոլոր յու-
նայտան իմ արիւնիս վրէժը ձեզմէ սիխի
հանեն : Այսչափ խօսքերը ամենենին անոնց
սիրտը չի չարժեց , որ ողորմին իրեն :

Տեսաւ որ այլ ձար չի կայ , փախաւ Ապո-
ղոնին (*) տաճարը . բայց բոնութք անկէ
ալ հանեցին . և կատաղութք կը տանէին

(*) Ավել աղջի և իրօնի մէջ գաճարին պատիւ-
ըլլալու համար , հոն քախւցու իսպափէր հին ա-
րենէն ի վեր . ինչպէս Սպարտացի + հայրնենեաց
հագնիւը գաճարէն էի իրօն հանէլ , դուռը լե-
ցացին : Ապահայ աղջին , որ ծառ իըպաշտէ , այն
ծառին գախւ քախւցու գերին աղադ իըսեպէ :
Բայց Դեղուացի + որոշնեպէ Եւրիսուը որբա-
ղինք համարէցան , որ գաճարին անիրաւութի
ըրտ իըսէին , անոր համար բոնութք իրօն դուրս
հանէլ :

բարձր լեռան ծայրը : Երթալու առևնը կը-
սէր Եղոբոս , մտիք ըրէք ինձի ովլ ժողո-
վուրդ Դեղօսի : Մէկ նապաստակ մը ար-
ծիւեն փախչէ լով չկյանէր թէ ուր սլահվի ,
որ թշնամուն ձեռքը չկյնի . գնաց բղէզին
ծակը մտաւ , աղաչեց որ իրեն աեղ տայ .
բղէզն ալ աղաչեց արծիւին , որ խնայէ խեղճ
նապաստակին՝ չի մեռցընէ . երդում ըրաւ
Դիոսին անուանը վրան , որ իր փոքր մար-
մինին չի նայի , աղաչանքն ընդունի : Իսկ
արծիւը անոր խօսքը բանի մը տեղ չի սեպե-
լով թեռովը զարկաւ բղէզին , և յափշտակեց
նապաստակը կերաւ :

Բղէզը բարկանալով անոր անարդանացը
վրա՝ թռաւ ետևէն գնաց գտաւ արծիւին
բունը , մտաւ մէջն ու ծակ մը բացաւ . յե-
տոյ արծիւին հաւկիթները վար թափեց կո-
տրրտեց : Արծիւը տաքնալով այս յանդըգ-
նութեր վրա ուղեց աւելի բարձր տեղ մը
շնորհ իր բունը : Բղէզը հոն ալ ելաւ , և
առ ջինին պէս իխաս տըւաւ : Արծիւը չկ-
տէր թէ ինչ ընէ , որ այս անծանօթ թշնա-
մուն ձեռքէն աղատի , գնաց Դիոսին (*) ո-
րովհետեւ այս թռչունը անոր նրւիրած ըլ-
լալով իրեն պաշտպանուելը տակին է . ուստի
դրաւ Դիոսին դոգը իր հաւկիթները , և
անոր յանձնելով աղաչեց , որ հոգ տանի :

(*) Ուշադիր Դիոս էր լածներան թագա-
բը , և արծիւն է թագաններան թագա-բը .
առաջի հեթանոսները իւսէին , թէ արծիւը Դիո-
սին նշանած է . առաջ համար Դիոսին արյանին
դակը արծիւ հը իւրեւին :

Բայց բզեզը աղք առաւ կըրակներ շինեց ,
ու թռաւ երկնքը տարաւ Դիսմին դոգը
ձգեց : Դիսմ երբոր հոտն առաւ նեղանա-
լով վեր ելաւ . որ վար ձգէ . բայց թոթւե-
լով հաւիթներն ալ վար թափեցան կտոր
կտոր եղան :

Իսկ Դիսմ հասկըցաւ բզեզէն , թէ այս
բանս արծիւէն վրէժ առնելու համար կը-
նէր . որ ոչ միտյն բզեզին ըրաւ անիրաւու-
թի , այլ և Դիսմին , որ երդումը ցնդունե-
ցաւ երբոր բզեզն ըրաւ Դիսմին անուանը
վրա :

Արծիւն որ դարձաւ եկաւ , Դիսմ անար-
դելով զայն երեսը զարկաւ , թէ ահա բզե-
զը վրէժինդիր ըլլալով քեզ կըտրտմեցընէ .
և իրաւունք ունի քեզի այսակէս վրէժինդիր
ըլլալու : Սակայն Դիսմ չի կամեցաւ , որ
արծիւն ցեզը կորսըվի . համոզեց խօսք հաս-
կըցուց բզեզին որ հետը հաշտըվի : Բզեզը
չուղեց ամեննեին հաշտըվիլ : Ուստի Դիսմ
ինելք բանեցընելով վոխեց ժամանակն , որ
երբ բզեզը չէ ելած դուրս , անատենը հաւ-
իթ կածէ արծիւը :

Ո՞վ ժողովուրդ Դեղոսի , մի անարդէք
տաճարը , ուր ես ապաւինեցայ . թէսկէտ և
անոր մեծութեր նայելով ես ոչինչ եմ , բայց
դիանակ ճշմարտութեր որ հարկաւ կըպատ-
ժէ չարագործներուն անօրէնութել : Դե-
ղոսացիք իրենց կատաղութէն ամեննեին ետ
չի կեցան . այլ միշտ տռաջ կըտանեին Եզո-
րոսը , մեռցընելու տեղն , որ սպատրաստեր
էին :

Եզորոս տեսաւ թէ ինչ բան որ խօսեցաւ ,

ամենելին անոնց տկանթը չի մռաւ, և կարօղ չեղաւ մոքերնին փոխելու, սկսաւ այսպէս խօսիլ: Մտիկը ըրէք ով անօրէն խստա սիրո ժողովուրդ, մէկ երկրագործ գեղացի մը գեղը ծերացեր էր, և ամենելին քաղաքը ոտք չէր կոխած, աղացեց մարդիկներուն, որ զինքը քաղաք տանին տեսնելու համար: Անոնք ալ էշերը սայլին կապեցին, և ծերը վրան դրին, թող տըւին, որ քաղաք երթայ մինակ: Քիչ մը անցաւ մէկ տասախիկ փոթորիկ մը ելաւ, որ անանկ օդը մթնեցուց հովով անձրեսով, մինչեւ էշերը ճամբան կորարնցուցին մոլորեցան չիյտէին, թէ ուր կերթան, խեղճ ծերը տարին լեռանը ծայրը հանեցին, որ վար պիտի ճգելին, ողորմելին զինքն այն մեծ վտանգին մէջ տեսնելով, վայ ափսոնինձի, կըկանչէր Դիտուն: արդեօք քու մեծութեղ գէմ ինչ ըրած ունէի, որ զիս աւսանկ ողորմելի մահուամբ կըմեռցընես: զօրաւոր ձիերէ, և կտրիճ ջորիներէ չեւմ մեռնիր, հասկա անտարդ էշերէն ահա կըկորսըլիմ, որ ամէն կենդանիներէն ցած են:

Ահա իմ վիճակս ալ այս խեղճ ծերուն նման է: որ շատ կըցաւիմ իմ անբաղդութես վրա, վայ զի չէ թէ իմաստուն և երեւլի մարդկանց դատապարտվեցայ մեռնելու, այլ անսկիտան անտրժան չարագործներէն: Նրբոր վար պիտի նետէին զինքը լեռանը վրայէն, այս ետքի առակս ըստաւ: Մէկ մարդ մը ուզեց անիրաւութիւննել իր զաւկին: իսկ զաւակը լալով կըկանչէր, թէ շատ աւլի կուզէի այս անիրաւութիւնը քաշել ուրիշ մարդիկներէն, քան թէ քեղմէ, որ իմ

ծնողս ես : Ահա ես ալ նոյն բանը կըսեմ
ձեզի ով անօրէններ . շատ աւելի կուզէի
իյնիւ խորիսորատը Սկիզբայի (*) կամ գա-
րիպտեսի , և կամ ապառաժը Ափրիկէին .
քան թէ ձեր անօրէն ձեռքովը մեռնիլ : Ա-
նիւծած ըլլա ձեր հայրենիքը . վկայ կըկան-
չեմ ածներն , որ իմ մահուանս համար վրէժ-
խնդիր ըլլան ձեզի , և պատուհասեն , որ
զիս այսպէս անպարտ կը մեռցընէք :

Խակ Դեզոսացիք առանց ուշացընելու ա-
պառաժին ծայրէն վարնետեցին՝ խեղճ Եզր-
բար մեռաւ : Քիչ ատենէն ետե բոլոր քա-
ղաքը անսապատ գարձաւ ժանտամահէն . մին-
չե գացին հարցուցին պատճառը Պատդա-
մաւորին . (**) որ պատասխան արւաւ թէ
այս պատիժու իրենց անօրէնութել համար
եղաւ , որ ըրին Եղբօսին . և պէտք է այս
յանցանիքը ջնջել պատիժէն ալ ազատիլ .

(*) Բանասադեղները իշխէն , ու Սիւզա էր
մէծ գաղան մը Սիւիլեայ ծովան մէջ , որ առաջ
յաւէր քահարը էր . երբոր մասւ առաջանը լըստ-
վէլու՝ ջուրը տէղած ըլլալով , ինիւ վշշաւ գաղան
եղաւ , որ իր այլանդակ իւրաքանչին սարսափէ-
լով բարյը վառանը սաբէն պինչը ծովը ներեց-
ահա այս է խորիսորատը Սիւզայի : Այսպէս է
խորիսորատը Գարէիդէնին , իսմ ապառաժը Ա-
ժրիիէն :

(**) Այս պատգամասուրն էր Աղողանին + + -
մը իամ + + մա - հին . երբոր գացին իսպանին հար-
շացին ժանտամահին պատճառաւ , + + - մը իսպա-
նին բէրնեն պատճառիսան դըսաւ , ինչու սպա-
բանին էր իսպանիցներան :

որ անոր մահօւանը համոր կըքաշեին։ Խ-
րենց խիղճմտանիքն ալ ստիպեց զիրենիք, ո՛ռ
մէկ արձան մը կանգնեցին Եղոբոսին հա-
մար :

Երբոր Յունաստանի երեւելի մարդիկ և
մէծամեծ վիլիսովիաները լսեցին այս անօրե-
նութին որ Եղաւ Եղոբոսին։ շուտ մը Դե-
ղոս կղզին Եկան, քննեցին դտան Եղոբոս
մէռցընողները, և բոլորը չարաչար պատու-
հասեցին :





Ա. Աքաղաղ և Մարգարիտ: Հ. Գայլ և Գառն:



Հ. Գորտ և Մուկն: Ե. Ծուն և Ստուեր:



Հ. Գայլ և Կոռունկն: Ը. Երկրագործ և Օձ:

Ա Բ Ա Կ Ք

Ե Զ Ա Վ Բ Ո Ս Ի

Ա Բ Ա Վ Ա Տ Ա Ր Ի Տ

Զ ա ն ա ր դ վ ա ս տ ա կ ա յ ր ա ն ի մ ա ս տ
Յ ա ր դ ո յ դ ն է ք ա ն զ ա լ ե ր ճ ի մ ա ս տ :

Ո ւ ո ր բ ա ն ի ա բ ժ ե ւ ւ ե ր ե ն
Գ ե ւ ո ւ ս ս ո ւ ն ե ի ի շ տ ն է :

Թ . Ա բ ա ղ ա ղ մ ը ա ղ բ ա ն ո ց ը փ ո ր ե լ ո վ յ ա ն ։
Կ ա ր ծ կ ը գ տ ն է մ ա ր դ ը ր ի տ մ ը , մ է կ դ ի կ ը
ն ե տ է ը ս ե լ ո վ լ , թ է ո ր մ ա ր դ ո ր տ ա ծ ա խ ը ա յ ս
բ ա ղ դ ի ս հ ա ն դ ի պ է ր՝ վ ա ս ք կ ու տ ա ր ո յ ։ բ ա յ ց
ի մ ա ռ ջ ի ս ա ն ա ն կ ո չ ի ն չ է , ո ր ա ւ ե լ ի ե ր ջ ա ւ
ն ի կ ը լ լ ա յ ի ե թ է հ ա տ ա մ ը գ ա ր ի գ ա ն է ի , ք ա ն
թ է զ ա յ ս մ ա ր դ ը ր ի տ ը :

Ա չ ա շ ա լ ի շ ա վ ն ի ս օ ր օ զ ը , ո ր ա շ բ ա ն ո ց ի ն մ է ն
Ճ ա ս ս գ ա լ ո ւ ն ի շ ա պ է լ ո ւ բ ա ն ի շ տ ն ո ւ լ ո ւ ն ։ և
է ն է գ ա ր ի մ ը գ ա ն է՝ ա մ է ն բ ա ն է ն ա ւ ե լ ւ ն ի ւ

Դը-արձանաց . ո՞ւ օքինակ է առաջի մարդիանց ,
որոնց առջին գիտութիւն յարգ լսանի , և գի-
տուն մարդն ու անխելք մարդը մէկ է . ենէ ան-
խելքն շահ մշտեսնեն , հաղար իմաստունի հետ
չեն գոխեր :

Ահա անխմաստ բերմունք անբանի ,
Զակինթ ՚ի գարւոյ որոշել չունի .
Դու մարդ բանական ընտրեա զբարի ,
Զառաքինութիւն նման մարդարաի :
Բարին յանարդէ այնչափ տարբերի ,
Որչափ բանականն յոդւոյ անբանի .
Մարդոյ է ընտրել զիմաստ դանձ բանին ,
Խակ աքսղաղին զիւր անարդ գարին :

ԳԱՅՆ ԵՒ ԳԱՌՆ

Յանդութ դաժան սիրտ դաղանին
Ոչինչ ազդէ ձայն անմեղին :

Անիւառ մարդն երբ լար իշնէ
Առափ մուփ պատճառ շուփ իշտփնէ :

Ե . ♪ Ճայլն ու դառը վաղած ջրէ մը ջուր
կըխլմէին . բայց դայլը շատ վերն էր քան
զգառը , և ալատճառ կըփնտըռէր որ կեր-
պով մը յափշտակէ զգառը . ուստի տեսա-
ծին պէս մէկէն քովը վաղեց , ու սկսաւ մէ-
դադրէլ , թէ ինչո՞ւ համար իմ ջուրս պղտո-

ըեցիր։ Պատասխան տըւաւ գառը դողաւ-
լով, ես ի՞նչպէս քու ջուրդ կրնամ պղտո-
րեւ որ խմած աեղէդ շատ վարեն կըխմեմ։
Հաւատացիր, մոքէս ալ չէ անցած որ քեզի
ամենելին վնաս մը տամ։ Կրկնեց գոյլը, թէ
երեկ քու հայրդ տեսայ, որ իր ձայնովը կը-
յորդորեր չները որ զիս հալածեն։

Գառն ալ ըաց թէ ամիսէն աւելի է, որ
զիս հայրս մօրթեց մաածախը։ Աւրեմն այն
քու մայրդ էր, ըստ գաղանը։ Պատասխա-
նեց, թէ իմ մայրս վիս ծնած ատենը մե-
ռաւ։ Գայլը ակռանեցը կրծըսելով ըսաց։
մեռաւ չի մեռաւ ես գիտեմ դուն և քու
աղդդ ի՞նչպէս կատեք զիս։ պէտք է որ ես
ալ վրէժինդիր ըլլամ։ Զայս ըսելով ցախ-
կեց գառին վրա, ու պատուեց կերաւ։

Գայլը վայրենի գաղան ըլլալով շարագործ
հարդառ պէս միշտ նեղանելի և հալածանաց մէջ է։
ու անիբառանելի իւ ջանայ յափշրաիէլ անմէո
գառները։ ուստի օրինակ է զբիօղ մէծագանց,
որոնք սուսպ պատճառաներով իսուզէն զբիէլ ան-
մէջները։

Բարիք է այս անգութ պատառող գոյլի,

Պատառել զանմեղն՝ չսել ձայնի։

Հզօր չարագործք զարդարն և խոնարհ,

Խոշտանդեալ ձեշեն նման դաղանի։

Սակայն հատուցումն 'ի դատասխանի,

Արդարոց չարաց կըռի և պահի։

Մարդ քաղաքական մի՛ զերթ առեհ հին,

Խած ատեր զընկերն ատեր զընարին։

ԳՈՐՏ ԵՒ ՄՈՒԿՆ

Ըղվաշեմ քինու կռուասիրաց
Լուծցեն արագ ձեռք թշնամեաց :

Կ-ի- սիրու ի-ո-ու ի-ը-ն-այ ,

Ինչ որ ընէ պայն ի-ը-դ-ն-այ :

Պ. Պորտն ու մուկը հակառակութիւն կը-
նէին . գորար կըսէր՝ թէ իրաւունք է որ
ջրուա տեղերը ևս ժառանգեմ, և ընդհատկա-
ռակն՝ մուկն ալ ոտք կըկոխէր, թէ ինձի
կըլայլէ ժառանգել, այնչափ որ գորար
սլիտի ելլէր ժառանգութէ, և բան չուզեց
անոր ընել : Բայց վիճաբանութեր շուտամը
տաքցաւ, անանկ որ սլիտի սկըսէին կռւիլ :
Սակայն շատ լաւ կըլար թէ որ իրենց մէջ
միաբանէին . վազ զի երբոր տաքցած կըծեծ
կըսէին, ու ամենելին թշնամին չէին մտա-
ծեր . ահա ուրուրը լաւախը հեռուէն գի-
տելով յանկարծ վրա հասաւ, բռնեց կռւօլ
նէրը երկուան ալ յափշտակեց :

Օքինակ է ի-ո-ուարար մարդիանց . որ հակառա-
կն-ութիւն ընէլով պիրեն + ի-ը-դ-ա-ց-ը-ն-էն, և անուշ-
ուշ ի-ը-ւ-ն-ի . ինչու որ մէկ դադար-ութիւն մէ դա-
դար գրած էր, թէ մարդ մարդու հետ մաք-
նութիւն ընէլուն համար՝ արք ու ի-ը-ւ-ն-ի հա-
բան է ըստ :

Այսպէս և փոքրիկ իշխանաց դիսլի .
 Երբ կռուին վեճեն ՚ի վերայ գեանի .
 Բայց հզօրագոյնն որ մերձ գտանի .
 Յափշտակէ զայն , կռիւն եզերի :
 Այս արդար օրէնք է դատաստանի .
 Երկոքին կռուին երրորդըն շահի .
 Որչափ դատախաղը ՚ի պայքար մատչին .
 Այնչափ դատաւորք փաստաբանք հրանուին :

ԵՆԴԵՐՈՒ ԵՒ ՈՉԽԵՄ

Ո՛՛ ոք ընկեր լինի չարին ,
 Փոյթ ուսանի զգործըս նորին :

Ո՛՛ ո՛՛ ընկեր լուին իւլւայ ,
 Ըստականի իւնին իւլւայ :

Ք . **Ճ**զնիկն ընկեր ըլլալով գայլին կըստա
 հանջէ ոչխարէն , թէ ինծի չափ մը գարի
 տալիք ես , որ փոխ տըւի քեզի՝ տուր . իսկ
 ոչխարը գայլին առջին վախնալուն չուրա-
 ցաւ . սլարտքս է ըսաց կուտամ , թէսլէտ
 անկէ բան մը չէր առած . և ժամանակ ու-
 զեց հատուցանելու : Ժամանակն որ եկաւ՝
 եղնիկը կերթար անպակաս ոչխարէն կու-
 զէր գարին , որ ինչպէս խօսք տըւաւ վճարէ
 սլարտքը : Բայց ոչխարը երբոր տեսաւ զայն
 մինակ , ոկսաւ ծաղը ընելով ըսել . ես չեմ
 սլարտական խոստմունքս սլահելու . որով
 հետեւ նեղը մնալու , և գայլին վախուն

խօսք աղւի, որ քեզընկեր էր եղեր . գնա
բանդ քեզի պարտք չունիմ :

Եւնին է կէյլի, օբինաի՝ շար օբինաի առնա-
շին . այս խրատովն պէտ է անպահներն հե-
տո ժախտիւ . վասն զի առեւի դիրին է բարի
մարտը լար օբինաիով գեւըւայ, առն թէ գեւ
մարտը բարի օբինաիով լար ըււայ :

Ահա անիրաւ պահանջմանք եղին,
Որ զրկէ զրցւարն ահիւ գաղանին .
Այսպէս անիրաւք ցասմամբ իշխանաց
Կողոպտեն զարդարն զրկեն տնանկին :
Արդ մի՛ նմանիր մի՛ անիրաւին ,
Մի՛ ընկերանար ակնառու չարին .
Բարիք ՚ի չարաց ՚ի չար փոխարկին ,
Եւ բարք անմեղաց փոյթ ասկականին :

ՇՈՒՆ ԵՒ ՍՏՈՒԵՐ

Արդար պատիժ է ադահին
Անյագ վաղելզհետ ոչնչին :

Ագահն որւսի շարին շանիայ ,
Այնլատ աշխատ ինչշաք իւ ճայ :

Է . Ը ուն մը լողալով գետէն կանցներ՝ կը-
տոր մը միս բերանիը . ջրին մէջ կըտեսնե-
մին շուքը կարծէ թէ ուրիշ որս է . շուտ

մը կը ձգէ բերնին միսն ու կը վաղէ չքին ե-
տեւն , որ իրեն մէկ պատուական կերակուր
մը կերևնար . բայց ի՞նչ չլէս յուսահատեցաւ ,
երբոր տեսաւ թէ իր ադահութիւն փուժ է-
լաւ : Վայ ինձ կը կանչէր ցաւելով իր ձգած
մօխն վրա . ես չգիտցայ պահել զայն որ ու-
նէի , ահա ունեցածս ալ կորսլնցուցի :

Ըստ գոտարիւն իւնդանէ ըլլալով շուպով իւ
ժուտիւն , որ օրինակ է շահասէր մարդու . որ վաս-
տակի սիրով մէկ բանը իւլիգէ մէկալին երեւէն իւ-
լազէ . և անովյէտի եղածն աւ իւրացնոցնէ :
Հարցուցին Բիստ ժիշտութարին , Աւազը մէծա-
դաւն . պատասխաննէց նէ այս՝ որ բանի մը ւի-
շանիար :

Քանի՞ շահասէրք նման Են սմին ,

Թողովուն զբաւականն յանչափս ձկտին .

Կալ զոր ինչ ունիս , շատ է քում սնձին .

Մի իբրև զանբան ցանկար ստուերին :
Ախտ է մոլեկան այս ախտ ագտահին ,

Յոչինչ շատանալ , ոչ հանգչիլ սրտին .

Յանկայ հանապաղ նորանոր որսին ,

Զգէ զոր օւնի , մաշի առ վատին :

ԱՌԻՒԾՆ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՔ

Մի յաճախեր առ պետ իշխան ,
Յաշ նորա լինիս խոսան :

Թէ ժաբնամին + վագագ նընաս ,
Անուդ և շած ապջին իւլւս :

Ղ. Առիւծն ու ոչխարը , և այլ կենդանիներ
միաբան կերթան որս ընելու . առիւծն եր
դում կընէ , թէ դառնալու ատեննիս ամմե-
նուդ հաւասար կըբաժնեմ ովոր ինչ բըռ-
նէ : Նայիս որ ոչխարին որոգոյթին մէջ
ընկաւ եղնիկ մը , վազեց ոչխարը շուտով
իմացուց առիւծին , որ մէկէն հասաւ բըռ-
նեց եղնիկը չորս բաժին ըրտւ ընկերներուն
առջին : Առջի բաժինն ըստց ինձի կիյնի ,
վասն զի ես առիւծ կըկոչվիմ . Երկրորդ բա-
ժինն ալ ինձի կըլսոյլէ , վասն զի ամմենէն
քաջասիրտ ես եմ . Երրորդ բաժինն ալ
պէտք է որ ես առնեմ , որովհետեւ ամենէն
զօրաւոր եմ . իսկ չորրորդ բաժինին համար
ով որ ձեզմէ ինձի հետ հակառակութիւն
կընէ , մեկէն կըխղղեմ : Եւ այսպէս առիւ-
ծը բոլոր եղնիկը յափշտակեց , ու մէկը ըն-
կերներէն չի համարձակեցաւ արտունջ մը
ընելու :

Ըստ մարդի երեսութիւնի ընելով մեծամեծ
ներսոն էպուան իշխան , որ օգոստի հը պեսնեն .
Բայց անոնց մինչև որ բաներնին լմւնայ՝ անին է
պատրիարքին աշխան նարիր : Դիմուգինես գիւղառ
ժան իշխան , թէ իշխանները իրակի նման են . ոչ
շատ ոճագու է օօգինուալ , և աշ հեռանաւ :

Խվանիք մեծատունք նման առիւծին ,
Ինքեանց գրաւեն զշահ օտարին .
Խոկ ուսմիթիք նոցուն ընկերել կամին ,
Կարծեն թէ ինքեանց ելտնէ բաժին :
Մի լինիր ընկեր հզօրագունին ,
Մի շողոքորթեր զարարս նորին .
Զի երբեւ գործի լինիս 'ի ձեռին ,
Եւ յաւարտ գործոյն մնաս անբաժին :

ԳԱՅՆ ԵՒ ԿՈՌԻՆԿՆ

Մի նպաստեր գործոց չարին ,
Զի մի չարիք 'ի քեզ հասցին :

Ինչ որ ընես ազերախափին ,
Բան լէրենաւը իր ծակ ալին :

Է . Պայլը երբեմն ոչխար մը կուտէ անանկ
որկըամոլութք , որ մէկ ոսկոր մը որկորին
ուօղազին մէջ կըմնայ . շատ ջանիք ըրաւ որ
օգնութի մը դանէ հանէ , չի կըցաւ . ուս
տի որչափ որ աղաչեց ուրիշ կենդանիներուն
փուռ ելաւ . վասն զի տմէնիքը կըթողուկին
անանկ՝ որ կանչէ , և մէկը ցաւակից չեղաւ

իրեն ցաւին . օխ եղաւ կըսէին , թող տահ .
 ջրվի իր անյագութքը : Միայն կտունկը ա-
 նոր անոյշ խօսքերուն խաբւելով ուզեց օգ-
 նութիւն ընել . և իր երկան կտունցքը խօթեց
 գայլին բերանն , ու որկորին մէջէն քաշեց
 հանեց ոսկորը , որ կըսպդէր զգայլը : Յե-
 տոյ կուռնկը հատուցում ուզեց սյս մէծ
 բարերարութես , որ գայլը իրեն խօստացէր
 էր հատուցանելու : Այս բանիս պատաս-
 խան տրւաւ գայլը խնդալով . բարեկամ
 դուն չե՞ս մոտածերինձի հատուցում ընելու ,
 որովհետեւ կեանքդ ինձի սլաքտական ես .
 Երբոր կտունցքդ իմ բերանս էր՝ կրնայի վի-
 զըդ փրցընել : Գնա ապերախտ , շատ երա-
 բանելի ես , որ իմ բերնէս դուրս հանեցիր
 կտունցքդ :

Առակ իշխանութեամ մարդէն հեռաւ ին-
 նաւ , և շարունակ օգնութիւն ընել . չո՞ չի ինչ
 որ ընես ացին վերեւար . ու վերջը ըստհախու-
 շւաւաւ պես ուղիւ ըստհախութիւն իսպակ :

Տեսե՞ր նոզտկալի գործ զապերախտին ,
 Որ չարիս խորհի խւր բարերարին .
 Զի փոխան բարեաց՝ որ պարտ է նմին ,
 Անտի պահանջէ զգարձ փոխարինին :
 Անմտութիւն է նպաստել չարին ,
 Կամ յապերախտէն յուսալ զբարին .
 Ըատ է անիշաս մնալ կոնկան ,
 Յորժամ նպաստեաց ասլիրատ գայլին :

ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ 02

Բարեբարին խորհիլըզար ,
կ դառն օձի բարեք չարաչար :

Ուշաւ ի-ուե բարեբարին ,
Անսաւ իւնե իւ լաւ անյին :

Ե. Երկրագործ մը կըգտնէ ձիւնին մէջ
պաղած օձ մը իրը կիսամեռ , կըխղճայ վրան
ու կտոնէ կըտանի իր խուցը , կրակ վառէ
կըտաքցընէ օձը , և այնչափ կըխնամէ , որ
քիչ քիչ օձը հոգի կտոնէ , և իւր բնական
ուժը կըտանայ : Բայց առջի բանը այս
կըլայ , որ իր բարեբարին դեմ կելլէ , և
կըցաթկէ որ խոյթէ : Զարմանալով ասոր
ապերախտութեր վրա կըսէ երկրագործը .
ով ապերախտ , այս է երախտիք Ճանչնալդ ,
որ քեզի ըրի . Ես քու կեանքդ քեզի տրւի .
դուն կուզես իմա առնուլ չարագործ : Զայս
ըսաց , և զարկաւ փայտով մեռցուց :

Ուշաւ աղեկունի ընես օյին՝ պէղն որ գայ իւ
խայնէ իր բարեբարը . ասանի աւ ապերախտ մար-
տուն ինչ ու ընես , շատ իւ կըմոռնայ , և լար
հագուստում ընելու իւ զանայ :

Այս է դժնդակ բերմունք ժանտ օձի ,
կեսյ ՚ի կըասել երախտաւորի .

Զածէ զմտաւ գործս հիանալի ,
Բառնալ՚ի կենաց զնա նկրտի :
Արդար հասուցումն է ապերախտին ,
Զրկիլ՚ի կենաց վատանալ յանձին .
Որ ոք չկամի վայելելքարին ,
Ազդ առաջիկայ հանդիալիլ չարին :

ԽՈՉ ԵՒ ԷՇ

Քաջ յաղթանակ է վեհանձին ,
Մերժել խոտել զբան վատին :

Մէծամէծաց չայէն այս է ,
Որ շած մարդէն վրէծ չառնէ :

Ծ. ()րմը էն արհամարհելով ծաղը կընէ
զիսողը . իսկ խոզը անանկ կըբարկանայ , որ
մէկէն սիտի պատուհասէր զայն . բայց եր
բարկուիր բռնեց , ու խոժոռ աչքով ըստաւ .
չարագործ՝ ինձի դժւար չէ սորվեցընելքէ .
զի քու անխելքութիւնդ , բայց հաճոյ բան
չէ , որ ես մէկ ծոյլ անշահ անասունի մը
հետ կռւիմ . վասն զի աշխատանքս չաժէր :

Մէծ խռհէմունին է պապասիստ չի դաւ շած
մարդու խօսին ու պապժէլ . վասն զի առնուածիա
նունին չի վայւէր , որ իյնի անանին հէտ : Սովոր
իւլիսութան չեց որ մէկը իրեն գէւ իւսէր իւնի-
ծէր , մայն այսլադ ըստաց , թէ որովհետ օրհնէլ
լէ սուլած , անոր համար իանիծէ :

ԶԵ ՎԵՀԱՆԱՑՈՒԹԵ չար առնել վատին ,
 Եւ պատասխանել անխմաստ բանին .
 Առաքինեաց է չարել ձայնին ,
 Եւ վրէժառու լինել տկարին :
 Քանի անխորհուրդ բան աւանտկին ,
 Թողեալզիւր հեղդ անձն անգոսնէ խողին .
 Յիմար է այս որ ընդ հզօլին ,
 Եւ ընդ վեհքան զինքն՝ ի սլայքար մատչին ,

ԸՆՏԱՆԻ ՄՈՒԿՆ ԵՒ ԴԱՇՏԱՅԻ ՄՈՒԿՆ

Խորտկանաշին կայ ՚ի սեղան ,
 Խառն ընդ խորտիկ երկիւղ մահուան :

Անկան ու պէն է շաք համուն
 Քան մէջ հարինին ահուն դողուն :

Ճ. Երբեմն քաղաքացի մուկն ու գեղացի
 մուկը՝ իրարու հարկիթ կընեն . գեղացին
 կըսկըսի իր հարկիթը դուրան ընել հեռու
 տեղ մը . և ծակէն գուրս կըհանէ իր սլատ
 ւական կերակուրները . քիչ մը բակլայ , կը-
 տոր մը պանիր , և քիչ մը խոզի եղ . վազ զի
 աղքատ ըլլալով որչափ որ ձեռքէն եկաւ
 այնչափ ըրաւ ծառայելու համար իր բարե-
 կամին . որ աւելի գոհ եղաւ անօր լաւ մէ-
 ծարանքին վրա , քան թէ անհամ պաղ կե-
 րակուրներուն . ուստի քաղաքացի մուկը զը-
 ւարճանալով միայն ակռային ծայրովը կը

դպչեր կերակուրներուն, և չեր կընար ու-
տել: Խնչ իցէ՝ և կերակուրը լմբնցաւ. անալ
հրաւիրեց գդեղացի մուկն, որ մէկալ օրը
երթայ իրեն տունը կերակուր ուտելու. և
պարծեցաւ, թէ շատ փափուկ կերակուր-
ներ անոր համար ըրեր է.քաղքին մէջ. ուս-
տի գեղացին քաղաք գնաց անոր հարկիքը.
և մէկ գեղեցիկ սրահի մը մէջ տեսաւ պատ-
րաստած՝ պաստառի վրա լեցուն պատուա-
կան մաեղէն կերակուրներ. բայց հտզիւ թէ
ոկսաւ ուտել յանկարծ մէկ ծառայ մը բա-
ցաւ սաստիկ դուռը այն տեղին, ուր որ ա-
նոնք էին, և վերիվար ըրաւ ուրախութին
այս երկու բարեկամներուն. որ բոլորովին
վախցած փախան մէկը ասդին մէկալն ան-
դին: Ծառան գնաց անկէ. քաղաքացի մու-
կը իր ընկերը կերակըի կանչեց, որ կիսա-
մեռ կրդովար վախուն. և հարցուց անոր
գեղացին, թէ շատ անդամ քեզի կրպատա-
հի՞ ասանիկ վախեր: Անալ պատասխան տը-
ւաւ թէ ամէն անդամ կըհանդիպի, վո՞զ զի
առանց նեղութէ ուրախութի ըըլար: Գե-
ղացի մուկը ետ գարձաւ ըսաւ. քուկիններդ-
ինչ որ ըլլան, հանդիսա վայելում չունին,
և անոր համար նորէն զիս փորձուե մէջ չեն
կընար ձգել: Մնաս բալավ, ևս յառաջնա-
խանձեցայ քու հարուստ կերակրիդ. բայց
դիսնաս որ հիմա շատ մեծ կըհամարիմ իմ
աղքատութիս, քան թէ քու բոլոր մէծու-
թիւնդ:



ԺԱ. Արծիւ և Ազուն. ԺԵ. Ազունիւ և Ազուն.



ԺԵ. Ազունիւ և Արծիւ. ԺԴ. Արփած և Խոչեւ.



ԺԸ. Գորսաք թաշ և նողը են. ԺԵ. Ազանիք և Աւըուր.

Օրինակ է հարսուս և միշտ յարդիանց : Այսը
ամեն մէծութիւնի առնի հանգստաւթիւննի , մէկա-
ւը հանգստաւթիւն առնի մէծութիւննի լուսնի . բայց ա-
սոր վիճակը մէկալին շատ լաւ է . որովհետեւ յար-
դուս ամբողջ թագուհին է յարմինքն . երբոք հան-
գիստ իւլլայ առանց սըստադուզի , անիէ առեւլի
մէծութիւն լւլլաւ :

Զի՞նչ օդուտ դործեաց մեծութիւն ճաշին ,
Երբ երկիւղ կասկած նմա լծակցին .
Եւ քանի բերկրանիք աղքատ կերակրին ,
Երբ անհոգ զուարթ ուտեն , ի դաշտին :
Մի՛ ցանկար ընչից մի՛ խորտկաճաշին ,
Եւ մի՛ երաներ զբաղդ ընչեղին .
Զի՞ տագնապ և վիշտ յամէն վայրկենի ,
Ուտեն և մաշեն զսիրտ և հոգի :

ԱՐԾԻՒ ԵՒ ԱԳԻՍԻ

Դիւրահաւան միաք զաղփաղփուն ,
Յամէն հողմոց կայ երերուն :

Անիւն յարդիւն իւնիսական ,
Ամէն հովհան իւրեւան իւնգան :

Ճամ . Պարծիւն իր ճանկին մէջ մէկ ոստրէ
սուլութեայ մը բռնէր կըսխմէր որ կեղեց կոտ-
րէ , մէջի միտն ուտէ . բայց ճար չեղաւ կոտ-
րելու . զայն տեսնելով ագռաւ մը կըմարիր
որ ձեռքէն առնու անոր որսը . ուստի ըսաց

խորամանկութեք։ Ահա շատ աշխատած կը
տեսնեմ զքեզ։ Թռիր բարձրացիր երկինքը
որչափ որ կլնառ, և վերէն ձգէ վար ոստ-
րէն այս քարերուն վրա։ որչափ ամսւը ըլ-
լոյ՝ կըկոտրի կեղել։ Արծիւը մէկ զարմա-
նալի դիւրութիւն մը գտնելով հետեւցաւ
ագռաւին խորհուրդին, ու ըրաւ։ Բայց
խորհուրդ տըւողը միայն իր շահին համար
կըսէր զայն։ վասն զի ոստրէն վար ընկաւ-
ծին պէս կոտրեցաւ և ագռաւը մէջի միօր
հանեց կերառ, ու խնդալով անոր դիւրա-
հաւանութել վրա վիախաւ։

Ագռաւը խորամանի մարդու օրինակ է, որ
մայն իր օգռափը իշխայի։ ուստի զգոյշ իշխալու-
ն անանի խաբէբայէն, և խօսին հաւափալուն է։
Ճշ զի ուղածն ընելուն ետև ծաղր իշխէ։ Դի-
գինէն ժիլսութային հարցուցին, թէ որ գաղաւը
շատ չնախակար է։ պատասխան պըսաւ, թէ վայրե-
նին երէն օյը։ իսկ ընդունին երէն խաբէբայ մարդը։

Երբ խորամանկ ոք քեզ խորհրդակցի,
Մի՛ կարծեր թէ նա սակս քո խորհի-
ջամենայն օգուտ յինքեան վերքերեալ,
Կերակրի նովաւ ծաղրէ զինի։
Արդ մի՛ հեշտալուր լինիր խարդախին,
Որ միթին գունով ծածկէ զնենդ սրտին։
Որչափ շողոմէ ՚ի սկզբան իրին,
Այնչափ զղանաս ծաղրիս զերթ արծուին։

ԱՂԱՊԻԿԱՆ ԵՒ ԱԳԹԱՆԻ

Ունայնասէրն բանիւ ունայն ,
Խարի ծաղրի միշտ է ունայն :

Փառապահէր Տաբդին Երբեր գովազն ,
Ըստագն խաւագայ ամէն խօստի :

ԺՇ . Ագռաւը բերանն ունէր կտոր մը պա-
նիր . աղուէսը հոտն որ առաւ վաղեց ագ-
ռաւին առջին և ըստց զարմանալով . ի՞նչ
բան է որ կըտեսնեմ . Ես լսեր էի թէ քու-
փետուրներդ մեւ են . բէ՛ առ ած , այս ի՞նչ-
պէս ձերմակ են , որ կարապ թօյ թռչունը
քեզմէ ձերմակ չի կընար ըլլալ : Կաղաչեմ
պարոն ագռաւ ինձի ներէ որ քիչմը վրադ
նայիս ուզածիս պէս . ճշմարիտ կըսեմ , որ
դուն ինձի անանկ աղւոր կերենաս , որ չեմ
գիտեր ի՞նչպէս զմայլիս քու վրադ : Նորէն
կըսէր աւելի անոյշ խօսքերով . Ես հաւա-
ներ եմ թէ միայն գեղեցկութելը չէ քու յա-
տուկ կատարելութիւնդ . այլ բնութենին որ
կամեցաւ զքեզ ուրիշ թռչուններէն աւելի
կատարեալ ընել , առանց կարծեաց քեզի
տըւաւ հրեշտակային ձայն մը . երդում կը-
նեմ , որ այնպէս գեղեցիկ երգող չի կայ մեր
անտառներուն մէջ , ինչպէս դուն և սոխա-
կը պիւլիւլ : Այս խօսքերովս բոլորովին
զըւարձացաւ ագռաւը , և ուզեց իմացընել ,
թէ աղուէսին ըսածը սուտ չէր , բացաւ

բԵրանն որ երգէ , բանալովը ձգեց բերնէն
պանիրը : Իսկ աղուէսը յափշտակեց զայն ,
ու շուտմը երթալու հրաման ուղեց ագռաւ-
էն , և ծաղը ընելով ըստւ . շատ համառի
պանիրիդ անուշութենէն , քանի թէ ձայնիդ
գեղեցկութէն :

Առախ օրինակ է ունայնասիրութէ , որ անանէ
իւ իսւրացընէ յարդուս միտքն , որ սուսպ գովասան-
ուշիւաբնէն իւ հուարդանայ , միւլւ ամէնցը վրան
իւ խնդան :

Ահա կուրութի ունայնասիրի ,
'Տ պատիր բանից այլ յայլմէ լինի .
Որով յիմարեալ ձգէ զոր ունի ,
Մին պաճուճանօք հրճուի զոր չունի :
Միտք փառասիրաց հեշտութք պատրի ,
Մինչ չասել զանձնէ զի՞նչ եմ զի՞նչ էի .
Կարծէ թէ բանիւ բնութի փոփոխի ,
Անդէն յիւր յատկէ փոյթ խայտառակի :

ԱՂԱԽԵՍ ԵՒ ԱՐԾԻՒ

Որ ոք առնէ բան անօրէն ,
Փոյթ գտանէ յԵրկնաւորէն :

Ոչ անօրէն բան ո՛չ ընէ ,
Երինաւորէն շուդ իւ գոնէ :

Ժդ . Արծիւն իր բունը շիներ էր կաղնի մէ-
ն ծառին վրա . ծառին տակն ալ աղուէս
մը իր ձագերը կընայէր . այս երկուքը իրա-
րու հետ սիրական կերւնային : Օրմը աղուէ-
սը գնաց կերակուր գտնելու + արծիւն ին-
չատ յանկարծ յափշտակեց աղուէսին ձա-
գերն ու տարաւ բունը իր ձագերուն կեր-
ցուց : Երբօր աղուէսը գարձաւ բունը , և
հասկընալով դրացինին ըրած անօրէնութիւն
շատ տաստիկ բարկացաւ . բայց որովհետեւ
յոյս չունէր հասնելու իր թշնամուն , որ
կարենայ վրէժինդիր ըլլալ , ինչ որ կրցաւ
զայն ըրաւ . իբր զի՞ իր բոլոր վրէժինդրու-
թէ հոգը Այթողողուց . իսկ Ած շատ չանցաւ
անոր չարագործութիւն պատճեց . վասն զի՞
քանի մը օրէն ետև արծիւը կըդիտէր , որ
Երկրագործները զոհ զարդան կընէին մէկ
այծմը իրենց կուռքին սեղանին վրա . վազեց
եկաւ կտոր մը միտ յափշտակեց . որուն վրա
մէկ քանի կրակ փակած էին , և անանկ տա-
րաւ իր բունը : Եւ որովհետեւ բունը շինած

Եր յարդով սահմանվել . և ուրիշ դիւրավառ
բաներով , մէկէն բոլնկեցաւ . և արծիւին
ձագերը վար թափեցան : Անատեներ աղուէսն ,
որ կըսպասէր ծառին տակը՝ ընկաւ ձողե-
րուն վրա . և ինչպէս որ արծիւն իրեն ըրաւ ,
ինքն ալ անոր անանկ ըրաւ , մէկիկ մէկիկ
զամմէնը կերաւ :

Աշունէն է Թիւքի , և արծիւն է խարդար
օրինակ անիւրաւ հարդառ . որ մէստը իւրիւնէ նէ օ-
դարին լոր ընեւը զէն չունի . բայց ԱՃ արդար
դարեւը՝ ուրիւն ինչ որ ընէ , զայն իւրիւնէ ,
նէ բարի և նէ լար :

Տեսե՞ր պատուհաս նենդամիտ արծուին ,
Որ ոչ խնայի իւր մերձաւորին .
Չածէ զմառաւ վճիռ տէրունին ,
Թէ որով չափես չափի քեզ նովին :
Արդ մի՛ ոտնակոխ լինիր տկարին ,
Թէ և ՚ի բարձունս ճախրես յեթերին .
Քանզի վրէժինդիր լինի քեզ երկին ,
Հուրբ հատուցանէ պատուհաս կրկին :

ԾԵՐ ԱՐԻՒԹՅ

Ծանր է և գառն հզօր պետաց ,
Անկեալ խոտիլ' վատթարաց :

Ըստ դժաւը է մեծամեծաց ,
Երբ իանաբանն յանաբանը մարդիանը :

ՃՌ . Առիւծը ծերութք խոջելով սյրի մա-
շարայի մեջ ընկած կըտանջըմիքը . անանկ որ
հոգին բերանն եկեր էր . իսկ անասունները
որովհետեւ այն աստիճանին մեջ չեն վախ-
նար անկե , ամեն կողմէն վաղեցին եկան .
որ սիրով ծակելով նախատեն զայն . ուստի
էշն ալ եկաւ , և խրոխատալով կից ւիգու-
նեաց , որ զարնէ անոր : Ան ատենը ոհ ը-
րաւ առիւծն ու դարձաւ գայլին և խողին
ըսաւ . ձեր ամեն նախատինքը որչափ կծու-
ըլան համբերութք կըքաշեմ . բայց էշն ալ
կը համարձակի զիս նախատել ահ ահա ա-
սոր չեմ կրնար դիմանալ :

ԾԵՐ ԱԿԻՆԾԵՇ օրինակ է մեծամել ընկած և
ծերացած մարդու , որ իր ծառաներն և թռա-
ներն նախադին + իշլէ ծերամել պատճառա-
բայց ան ապէնը պէտք է առելի պատիւ ընել և
օրհնելու առնել , և նէ նախադէլ ծառ
ընել :

Այս է տարացոյց հզօր իշխանին ,
 Երբ թափի յուժոյ ւի փառաց նախկին .
 Ոչ ոք ակնածէ յերեսաց վեհին ,
 Բնաւ կենգանիք նախատել բերին :
 Ցորչափ զօրութիւնիս 'ի ձեռին ,
 Մի թշնամանօդ լինիր օտարին .
 Զի գայ ժամանակ տեղի տալ բաղդին ,
 Վեզ ամենեքեան նախատիչ լինին :

ԷՇ. ԵՒ ՓՈՎՐԻԿ ԸՆԻԿ

Իւրաքանչիւր յատուկ բնութե ,
 Են պատշաճեալ իրք զանազան :

Ամէն ճարտու մէյ մէկ բան իայ ,
 Ու սիրելի անոնց ըլլայ :

ԺԵ . **Պ**արոն մը երբեմն իր պղտի շունը սիրելով հետը կրխաղար իշուն առջին . Եշը զայն տեսնելով նախանձեցաւ անոր Երջանկութեը վրա , և ինքիրեն ըսաց . ի՞նչ կընէ այս շունս , որ մեր տիրոջը այսչափ սիրելուն արժանի եղած է . բայց քծնելով երբեմն թաթիկներն անոր կուտայ . հէ՞ թէ որ տառվ սիրելի եղած է , ես ալ կընեմ ու քանի զայն սրգաի անասունը շուտ սիրելի կրնամը ըլլալ : Զայս ըսելով ելաւ ետքի երկու ոտքին վրա կեցաւ , և տիրոջն առջին կոշտութեք անոր պէս ըրաւ : Խակ տէրը շատ զարմանալով մերժեց անոր կոշտ սէրը . և կան-

չեց ծառաներուն, որ վազեցին եկան տղեկ
փայտ մը քաշելով հատուցում ըրին քաղա-
քալարութեղ աւանակին :

Այս ամէն մարդու մէջ մէկ բնակել և վաճակ աւ-
ներ է իրենց արմար . Ան ու մէկին վաճակ գու-
նար մէկալին երեար, այս մարդն աղջի լէր ըւ-
տար . ապա ամէնքն աւպէտ + է իրենց առնեցածին
վրա գոհ ըւտան, և իրարու լի նախանյին, լի
նէ իշտն ջրութ իւ ւշացվին :

Մի ցանկար փոխել վիճակ բնածին
գործեալ 'ի բնէ անստեղծ մատին .
Քանզի և բնութիւն անցնիւր էակաց
Ետ զանազան գործութիւրեանց յատկին :
Իսկ քեզ որ տէրդ ես անսամնոց սեռին,
Ետ 'ի կատարել վիճակ քո նախակին .
Զի ոչ 'ի բնութիւն բնութիւն փոխարկի ,
Ոչ յատկութիւն շան յէշ այլափոխի :

ԱՌԻՒԾ ԵՒ ՄՈՒԿՆ

Որչափ վողբրիկ առնես բարի ,
Գացես յետոյ զայն պաղալի :

ԵՌԵ պատի բարի + մ' չնէս ,
Ըստու մեծած զայն իշտանէս :

ԺՂ. Երբեմն առխւծը պառկեր կըքնանոր .
մուկ մը մօտեցաւ քովին ու հարիւր անդամ
բոլորէն անցաւ դարձաւ . յետոյ համար-
ձակեցաւ մինչեւ ցաթկել գլխուն վրայէն :
Առիւծը արթընցաւ բոնեց մուկը . քիչ մնաց
սղիտի տրորէր . բայց այս բանս անարժան
սեպելով իր բարկութէը , թողոց որ Եր-
թայ . իսկ մուկն որ անոր սկարտական էր
իր կեանքը , շատ չանցաւ միջոց մը դտաւ
փոխարէնն ըրտաւ իրեն . վասն դիքանին ըդու-
եաւ առնելու ընկաւ որտրդներուն ցանցը
պատահը . և անոր մուրնչալէն պօռալու ձայ-
նէն բոլոր անտառը թնդաց . մուկը լսածին
պէս այս ձայնս վազեց եկաւ սկսաւ կրծել
ցանցին օղակները , որով փաթթընքած էր
իր բարերարը . և այսպէս դիւրին մը ազա-
աւց զառիւծը :

Ուշադ մեծ ճարտ ըլլաս , ջանա որ ամենուն Հետ-
աւու շարդիւ ու պատիին մեծին աղեիսունի ը-

ՆԵՐ . Հասն դի օք իշլայ ու պղտի աղեհութի մը
Ած բան իշնէ :

ՉԵ փոքր փոքուն առնել զբարի ,
Երբ հարկն բերէ նպաստել այլում .
Թէ և թագաւոր իցես յաշխարհի ,
Կարօտիս երբէք նպաստից փոքուն :
Քան զատիւծ հզօր զի՞նչ հզօրագոյն ,
Եւ զի՞նչ քան զմուկն անզօր փանաքի .
Արդ հզօրն ահա կասլի պնդագոյն ,
Ազատէ անզօրն զհզօր ամեհի :

ԾԻԾԱՌՆ ԵՒ ԹՌՉՈՒՆ

Ա՛ռ քեզ խրատ խորհուրդ ծիծռան ,
Կշռեա զանցեալն և զապագայն :

Բարեկամին խօսէը մուն ,
Երբ ուն բարի խրատ իշնէ :

ԺԷ . Ծիծռեռիկը տեսաւ որ երկրագործ
Մը կանեփ կամ քթանի հունտ կըցանէր ,
Վազեց գնաց ուրիշ թռչուններուն իմացընե-
լու : Օր կուգայ որ կըսէր այս ցանած հա-
տերը ձեր գլխուն բան կըբանան . վասն զի
կանեփը կըհանի , և հաւորաը կերպ կերպ
որոգայթներ կըշինէ ու զամէնքդ կըբռնէ :
Իմ խօսքս մտիկ ըրէք . ամէնքդ այս արտին
վրայէն թռչելով կերէք բոլոր հունտերը :
Գուճ տեղը խրատ կուտար անոնց , որ ամե-
նեին չուզեցին լսել . և մահաւանդ մէկ ան-

պետ ձայն մը եկաւ իրենց, և ոչ թէ խոհեմ
նախագիտութիւն: Ինչեկցէ՝ կանեփը բուսաւ
ծիծեռնիկը նորէն ըսաւ անոնց . թէ Եկէք
հանեցէք այս գեշ խոտը . թէ որ թողուք
զասոնք, շատ պիտի զղջաք: Պատասխան
տըւին թէ կուզես դուն հանէ . մենք ատեն
չունինք հանելու: Վերջապէս կանեփը հա-
սաւ . նորէն վաղեց ծիծեռնիկն ըսաց թըռ-
չուններուն, թէ ինչ մարդարէութիւն որ ձե-
զի ըրի, շատ չանցնիր պիտի կատարիլի . Եթէ
կուզեք ձեր ազատութիւն, վախիք այս կող
մէն հեռացիք: Անոնք ալ ըսին . գնա բանդ
շատախօս . գլուխնիս ճաթեցուցիր, Երբ պի-
տի ըլլայ որ ձայնդ կարես, գնա մենք բանէ մը
վախ չունինք: Զայս որ լսեց ծիծեռնիկը
թողուց անոնց ընկերութիւն ու հեռացաւ .
իսկ թռչուններն անոր խօսքին չաւտալինուն
համար շատ զղջացան . բայց ինչ օդուտ՝ բա-
նը բանէն անցաւ . վասն զի քիչմը ատենէն
ետեւ հաւորաը հանեց իր կանեփը, և ոլլրէց
որոգայթ շնորհ, ու լարեց՝ զամէնը բռնեց :

Օքնակ է խռհէմուն, որ նպաէ գալիքները
մդածէլով բարեկամի խօսքին մդին ընելով պէտ
է արնուն իւնաւ արենով յեւուէ եկածն ընել
վասնգին ժակւիւ . նէ չէ նոյն վասնգին մէջ իւ
իրաւով այն թաւաններուն պէտ՝ որ խռհէմ բա-
րեկամին մդին ըլլին ու իւրան :

Նախատես լինել ապագայ չարին,
Մէծ խմաստութիւն յիմաստնոց դասի .

Քանզի նախատեսն հանապաղ շահի ,
Արտաքոյ եղեալ չարեաց բնաւին :
Զի՞նչ մեծագոյն դանձ դիտունք ասացին
Քան հաւատարիմ խորհուրդ մտերմի .
Արդ մի լքաներ զիրատ սլիտանի
Նման անիմաստ թռչնոց երամին :

ԳՈՐԾՎ. ԹԱԳԱԼՈՒ ԽԵԴՐԵՆ

Տըանջողին ոչ պակասին
Ցաւք և վաստակք զոր տայ երկին :

Տժգոհ ճարդու ինչ ո՛ւ ընէն ,
Միւս իւ գոնդոի սնէշածէն :

ՃՇ. Պորտերը կը ձանձրանան անանկ մնալ
առանց թագաւորի . օր մը միաձայն կը պո-
ռան , թէ ովլ Դիոս , դուն մեղի թագաւոր
մը տնուր , որ գիտայ մեղ կառավարել : Իսկ
Դիոս ինդաց անոնց անխոհեմութելը վրա ,
և երկար ժամանակ չի կատարեց իրենց խըն-
դիքը . բայց հուսկ յետոյ ձանձրանալով
անոնց ալպաղակէն , որոշեց ակամայ կամքով
կամքերնին կատարելու . և ձգեց իրենց լճին
մէջ գերան մը . անանկ մեծ ձայն ելաւ գե-
րանին իյնելովն , որ գորտերը ահերնուն
զարհուրեցան , և ջրին աակը մտան , կիսա-
մեռ կը դողային : Բայց քիչմը ժամանակէն
ետև իրենց մէջէն մէկ աւելի սրտոտ մը
պլուխը ջրէն դուրս հանեց , և առջի բերա

Նը չի համարձակելուն հեռուէն նայեցաւ
նոր թագաւորին . յետոյ այնչափ զօրացաւ
որ մօտեցաւ գերանին , և ապա աեսնելով
թէ անշարժ է՝ սկսաւ ցաթկել վրան ելլով
ինչնել : Ասոր հետեւեցաւ ուրիշ գորտ մը .
անոր ալ ուրիշը հետեւեցաւ , և այսպէս բո-
լոր գորտերն ելան թագաւորին վրա . բայց
շատ տրտնջացին այս իրենց անշարժ իշխա-
նին համար , մինչև բողոքեցին Դիտուին , որ
ուրիշ թագաւոր մը ասայ , որ կարենայ շար-
ժիլ . իսկ Դիտոս իրկեց անոնց թագաւոր
արտգիլը ֆայէլը . որ քիչ ժամանակին մէջ
կէսը հատցուց ուտելով : Իսկ գորտերը պօ-
ոացին կանչեցին ահագին ձայնով , և ինդրե-
ցին որ զիրենք այն բռնաւորէն ազատէ : Բայց
Դիտոս այլ չուղեց լսելըսելով թէ որովհետեւ
դուք չուղեցեք քաշել ձեր բարի թագաւո-
րը , հիմա համբերեցելք չարագործին , և վախ-
ցեք որ աւելի գէցը չի դայ ձեզի :

Դիտոս մէր գորո մէջ Արամազդ իւսչի , որ իւսա-
պալուստէ ապէնը երինիշ մէծ ած իւսչիւր . որ լադ
առէիւր որ իւլլայ , Բաւրը Դիտոս իւսապայ իւսչին .
անոր համար գորդերն աւ ասոր իւսչին որ իրենց
բագաւոր պայ . ասոպի երբոր գորդերը գիւնեանց
իւս ուսուն՝ հիները իւսեին Աւ իրենց Բագաւորէն
գորդար իւսչին Դիտոսին : Օրինակ է գանգագը
նօղներուն . որ ինւընէն իւս պրատիճան , և այ չնորհու
իւս լին ըլլար . անոր համար գէւ իւլլայ իրենց
բանը :

Երբ զիշխան և տէր տայ ումեք երկին ,
Չէ սլարտ տրտնջալ վորիւրը ըստ կամի .

Քանդի սկատուհաս է տրանջողին ,
Թողուլ զբարին հանգիսկիլ չարի :
Արդ մի՛ տրանջար ըստ առակողին ,
Երբ առաջնորդիս 'ի կամաց վերին .
Որինչ անհաճոյ 'ի քէն գատեսցի ,
Յօդուտ ւ'ի խրատ այն քեզ սկատրաստի :

ԱՂԱԽԵՒԻՔ ԵՒ ՈՒՐՈՒՄ

Համբերողին ամենայն փուշ
Լինի անխայթ բանջար անոյշ :

Համբերոշ ակրտն ամեն մեղի ,
Անոյշ իշնէ նման մեղրի :

ԺՇ . Արժւրը սոսկալի սկատերազմ կըներ
աղաւնիներուն հետ , որ իրեն գրացի էին :
Խակ աղաւնիներն այս թշնամուեց աղատ ըլ-
լալու համար կարծեցին թէ ուրիշ ճար չի-
կըրնայ ըլլալ . բայց եթէ թռչուններուն մե-
ջէն թագաւոր մ' ընտրել , որ կարենայ ի-
րենց թշնամուն դէմ դնել . բաղէն շահինը
եղաւ թագաւոր . որ մտաւ աղաւնոցին մէջ
սկատճառաւ հասկընալու անոնց միաբանու-
թեան ուժը . և մէկէն ցաթկեց աղաւնինե-
րուն վրա բոլորը խղզեց :

Ըստ անգամ ճարդ անհամբերութիւն մէջ նեղու-
թէն աղաւուն համար անանի բան իշնէ . որ ա-

Եւէ մէծ նեղութէ մէջ իլյնի . նուև թշնամուն
յէտքէն աղապէլս-համար , ա-եւէի շարին յէտքը
իլյապնը լի :

Այս է վատ բնութի գմնեայ ուրուրին ,
Ցանդ թշնամանել զիւր հեզ գրացին .
Որչափ քաղցրակեաց լինի աղաւնին ,
Այնչափ գառնանայ գաղան թշնամին :
Սակայն համբերել է դարման նորին ,
Ոչ մատնիլ 'ի ձեռս հզօրագունին .
Չի սակաւ լինաս ուրուրն դործէ ,
Վան արեանարբու սատակիչ բազէ :

ԳՈԴ ԵՒ ՇՈՒՆ

Եթէ իցես հաւատարիմ ,
Հաց նենդողաց քեզ ոչ հաճին :

Բարի ծառան հաւատարիմ
Չի իտւուեր արծուն սովին :

Ե. Կող մը կըջանար մէկ տուն մը մոննել
դիշերվան մէջ , որ բաները թալլէ . բայց
ալահապան շունը թողչէր իտար , անդադար
կըհաջէր . իսկ գողը կտոր մը հաց ցըցուց
շանը՝ կարծելով թէ անով կըպարտաւորէ
զըունն որ լոէ : Բայց շունը մերժելով բաւ
գողին . այ չարագործ ես կըխաբւէի , ու
կառնէի քու տըւածդ , թէ որ չգիտմայի
թէ ինչ մըտքով կուտաս ինձի : Գնա կորիք

ասկէ . վեց զի բան մը չի կրնար աւրել զիմ
հաւասարմութիւն :

Օքինավէ հաւատարիմ ծառաներան , որ շա-
հի համար հաւատարմութէ ուն բան չեն ըներ ի-
րենց պիրջը . կան ո՞ի խաւան իւ իւրացնէ
հարդար աւագ :

Արդ ուր են ծառայք սլահառան մանկալին,
խոհեմ մաերիմ շան հետևեցին .
Տես զիարդ մերժէ զիաշառ նենդողին .
Յանարաստ սլահել զիւը գանձ քնածին :
Քանի անարդանիք նենդօղ ծառայի ,
Երբ քան զօրինակն զատթար գտանի .
Անբանն ի սէր տեառն ինքնադրաւ մրցի ,
Բանականն անփոյթ խորդայ ի մահճի :

ԷԳ ԽՈԶ ԵՒ ԳԱՅԼ.

Խորհուրդ և կամք նենդաւորին ,
Ե չար առնել մերձաւորին :


Չարն երբ ուշի խորհուրդ իսպայ ,
Աշխայիր գլուհու բան իւբանայ :

Իս . **Վայլը** կըտեսնէ քած խող մը ծոցւոր
և ծանրած , մօտենալով քովը քաղաքավար
ձանուլ մը կըսէ : **Մայրիկ** թէ որ կամե-
նան՝ ես քեզի օգնութիւն կընեմ , որ զաւակ-

ՆԵՐԴ ծնիս . Եթէ կուզես ձագերուդ ալ
հոգը ինձի յանձնէ որ աղահեմ . գիտնաս որ
իմ քովս շատ ապահով կըմնան : Պատաս-
խան տըւաւ խոզը . կնքահայր՝ ես լաւ գի-
տեմ զայդ . բայց թէ որ գուն իմ եղած տե-
զէս ուզենայիր շատ հեռուն երթալ , ինձի
կերենայ թէ ձագերս ալ մայրն ալ ասանկ
խիստ ապահով կըմնային :

Հարի է միւս հեռաւ քախլիւ անսփամ չարէն
ու լարութե սորչը մարտը աղեկութիւն չի իւր-
նար ընել . ինչ որ ընէ՝ իր շահաւն համար իւնէ , և
անոյւ լէպսուկ բարեկամին պատը իտրէ :

Զեարդ ոճրագործն խորհի ըզբարին ,
Ո՛չ մերձաւորի այլ յատուկ անձին .
Մանկածու լինել տենչայ ընկերին ,
Զի մանկունքն ինքեան կերակուր լիցին :
Գայլակերպ նենդօղք որչափ քեզ մերձին ,
Զանա հեռանալ 'ի ստուերէ նոցին .
Զի խորհուրդք նոցա 'ի չարիս բերին ,
Թէ և բարեկամ քեզ երեւեցին :





ԲԵ. Արսորդ և Ծուն իջ. Նապաստակը:



իջ. Աւե Գայլ իե. Աշխար և Ծուն:



իե. Ազուհե Ազագիլ օԵ. Գայլ Կիսարձան:

ՈՐՍՈՐԴԻ ԵՒ ՇՈՒՆ

Ուլինչ յանցանք ծեր զինուորի ,
Երբ բնական յուժոյ թափի :

Թէ շանդարի ծեր ծեր ծառան ,
Յանցանքն իւ չէ այւ ծերութե :

ԵՌ . Արսորդ մը վազեց եղնիկին վրա , և կը ջանար թէ իր ձայնովը , և թէ փողին պօ-
ստին ձայնովը սիրտ տալ շանը , որ ծերու-
թը թօշնած անկար էր : Խակ շունն որ ա-
ւելի ուժէ ընկած էր , քան թէ քաջութէ .
Ետքի ջանքն ըրաւ , ու անանկ արագութք
վազեց , որ հասաւ եղնիկին , և խածաւ
զայն . բայց պակասութիւն ակռաներուն ե-
ղաւ , որ չի կրցաւ բռնել արգելել : Անա-
տենը որսորդը տեսաւ , թէ որսը ձեռքին
ելաւ փախաւ , վազեց շանը վրան և սկսաւ
զարնելնախատել . թէ բանի մը պէտք չեւ
Պատասխան տըւաւ շունը , թէ ես որ առ-
ջինը չեմ , պատճառը ծերութիս է : Արդ
ես կըխոստովանիմ որ հիմա զօրութիւնը
նիմ . բայց ապերախա , դուն ալ միոքդ բեր
զիմ քաջութիներս որ կարըճութե առենո
ըրեր եմ :

Մէծ անիշտութիւն է ծեր աշխատաւընեն

Երեսէ յգեւ, և լի իշնաւ աշխատելու համար
նախադեւ, վաճառ պէտու ապէն-վիշնու դաշտուն
ըրեւ էն. անոնց մէ թայն բան սորվէլու է, ու
աշը ըրած աշխատանին յառնալու լի:

Քանի վշտաբեր փորձառու ծերոյն,
Երբ թափեալ յուժոյ նախատի յայլոց.
Կամքն ՚ի նա ամբողջ և միտքն է արթուն,
Խրբե անապիտան ծաղրի ՚ի յեանոց:
Արդ զի՞նչ վրիպանք զի՞նչ յանցանք նորուն,
Զի տայ և բառնայ երբ կամի բնութիւն.
Շատ է զոր արար յառոյդ հասակի:
Այժմեան զօրութի ՚ի խելսն սղահի:

ՆԱՊԱՍՏԱԿՐ

Երկիւղ կասկած զգորտ չնչին,
Ահեղ դործեն հանգոյն փղին:

Վախն ամէն բան ահեղ իշնէ,
Լէտն ու յորեն այն իւ պահէ:

Եղ. Անտառ մը սաստիկ շարժելու հովեն՝
սովորականէն աւելի ձայն կըհանէր. իսկ
հօն եղած նասպատակները վախերնուն գող
կելլեն. անանկ որ մէկը անոնցմէ կըսէ.
Փախչինք աղատինք ահա կըլսեմ որսորդի
ձայն. և շներու ոռնալ: Ուստի բոլորը մէ-
կէն ամէն կողմէն շուտմը սկսան փախչիլ:
Ասոնց առջին ելաւ ջրոտ աեղ մը, որ զի-

ըԵնք արդիլեց փախչելու . վազ զի գորտերը
դրսէն ջրին մէջ ցաթկեցին . և այս ձայնով
այնչափ եւեցաւ նապաստակներուն առաջ
նորդին վախը , մինչեւ չի կրցաւ առաջ վա-
զել , և չի համարձակեցաւ ալետ դառնալ .
ուստի անանկ պաշտրվեցաւ մնաց , որ չէր
գիտեր ինչընէ : Բայց անոնց մէջէն մէկը
սկսաւ մտմրտալ այս վախուն վրա , որ զի-
րենք այնալէս սաստիկ գողցուցերէր . և մէ-
կալոնց ըստ թէ ահա կը փախչինք հովին ,
ու գորտերուն վախուն . ամօթ մեզի : Այս
խօսքովս նապաստակները սիրտ առին , դար-
ձան իրենց անտառը :

Նապաստակն է թաւշան . որ սաստիկ հայ-
կակ ըլլալով օրինակ է անոնքա հարդիանց , որ
ժամանակ մեծ բանի ունեց տնելով առաջի-
նանդ իւ հանեն :

Զի՞նչը ըռնական կիրք իրրեւ երկիւղին ,
Վիթխարի գործէ զառարկայս չնչին .
Զինուոր ցուցանէ զոցխարս ՚ի գաւտին ,
Երինք ծով անտառ այնու պահպանին :
Արդ մի՛ հետեւիր վատ նապաստակին ,
Որում անցնիւր գորտք որաորդ երեխին .
Մի՛ յետս ընկրկիր ՚ի տե՛ս ստուերին ,
Զի միշտ երկնչիլ է պատիժ վատին :

ԱԽՆԱԿԱՅԱ

Չարն ՚ի բարին կերպարանի ,
Ցորսալ զանմեղն յիւր ծուղակի :

Չորս բարի իւլյանայ ,
Ու շանմեղներն իրեն որսայ :

Եղ . Այս կը փակէ իր ուլը կամ ձադը
գոմին մէջ , և կերթայ դաշտը արծելու .
Իսկ գայլը կիմանայ , ու մայրը գացածին
ալէս կը վազէ կուգայ գոմին գուռը կը զար-
նէ . ձայնը փոխելով այծու ալէս կըսէ ու-
լն : Զադուկս երթալու ատենս մոռցայ
քեզ սիրելու . շուտ ըրէ գուռը բաց որ իմ
սէրս քեզի յայտնեմ . բաց գուռը սիրական
մօրդ : Իսկ ուլը գուանը ծակէն նայելով
ճանցաւ , ու սկատասխան տըւաւ , թէ չէմ
կրնար բանալ . իրաւ գուն այծու ձայն ու-
նիս , բայց չարն այն է որ ես քու մարմինդ
բոլորովին գոյլ կըտեսնեմ :

Այս առավել թողարկին ծնօղս , ու իրենց
առանիւ լար ընկերի յեւ + լի յգին . և իրենցիւ
լի պարեն . իսկ պարկներն աւ թշնամուն յայնէն
լի իսպէն , ու լարալար իրացչին :

Տեսե՞ր զօրինակ ոճրագործ չարին ,
Խնդրէ միայնակ զծնունդ այծին .

Յեղյեղէ զձայն իբր յուշկասպարկին ,
Խարդախել զանմեղն ծախել յորկորին :
Մանկին խոհական մի լսեր ձայնին ,
Մի քեզ քաղցրացի բան անզգամին .
Փախիր 'ի նմանէ զի գայլէ նեղըն ,
Քոյ քաղցր ծնողաց հանգիր 'ի բազկին :

ՈՉԻԱՄ ԵՒ ՇՈՒՆ

Զրաբարտողին մերձ գտանին ,
Կաշառակուրծ վկայք կրկին :

Զորին շատաշ լարեր իռադան ,
Ու լար գործին օգնիւ ըլլան :

ԷԼ . Ըսնը դատաստան կըկանչէ զըմա-
րը մէկ քանի կենդանիներու առջին , որ ի-
րեն հաց մը տալիք է տայ , և անիրաւութե-
կը հաստատէր , թէ փոխ եւմ աըւէր : Իսկ
ոչխարը դատաւորներուն ցըցուց հաստա-
տեց , թէ շունը անիրաւութ կը պահանջէր
զայն . զի ինքը ամենելին անկէ բան մը չէր
առած . բայց որչափ ջանաց հաստատել .
կորսընցուց իր իրաւունքը . վասն զի շունը
մըկայ բերաւ անդզը ախողապան և ուրուրը .
անանկ որ անոնց վկայութ այն կետին ոչխա-
րը պարտաւորեցաւ հատուցանելու զայն ,
որ ոչ երբէք անկէ բան առած էր :

Անիւաւ հարդաւ հետ գլուխ լեռընիք . ունիւ
է ուղածը պաւ , և հետաւ իսկը լիւանիք . որ ու-
րիւ բան մ' աւ լի հանէ :

Վ կայք անիւրաւ անիրաւ դատին ,
Մատըն ՚ի հանդէս առ դատաւորին .
Որով զպատճառ թիւրեալ արդարոյն ,
Վ ճուեն հաստատեն բան զրապարտողին :
Վայ որ ստութիւ փոխան ճշմարտին ,
Դնեն և սինդեն լոյս ընդ խաւարին .
Խաւարին է այս մութնոցա բաժին ,
Ծնունդ ստութեն ժառանգ գեհենին :

ՕՉ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐԾ

Տարապարտուց բարկացողի ,
Զեղջ ապաշաւ կայ առաջի :

Ու որ իսում պէջ իւբարկանայ ,
Լըած բանէն ըստ իւմընայ :

Եղ . Երկրագործ մը կը բարկանայ օձիմը
վրա , որ իր տանը քով կը բնակէր , և այնչափ
կը տաքնայ , որ կացինը ձեռքը վրան կը վաղէ ,
որ սպաննէ : Բայց օձը կը փախւը մօտաւոր
անտառին մէջ անանկ արագութեր , որ մար-
դը չի կրնար հասնիլ : Ճամանակէ մը ետե
երկրագործը կը տեսնէ , որ կարկուտը բոլոր
իր ցորենը ջարդուբուրդ ըրեր է , կը հաս-
կընայ թէ օձին իր ըրած չարութեանը սկա-

տիմն է, որ ած զայն փոթորիկը խրկեց երկւ
ըին վրա : Ուստի այս պատիժս հանդարտե-
ցընելու համար սկսաւ մինտըռել օձն, որ
հետը հաշորվի . և երբոր դտաւ՝ խօսք տը-
ւաւ, [թէ անկէ ետե ամենելին անորմէ վախ
մը չունենայ, և աղաջեց որ դառնայ իր առ-
ջի բունը : Բայց փուռ աելը կաղաջէր, ու
կըսախիկէր զայն . վեց զի օձն ամենելին մասիկ
ըրբաւ, և շուտ մը անկէ հեռանալով կան-
չեց, [թէ մեծ սիրով կըդառնայի քու տունդ,
[թէ որ չգիտնայի, [թէ դուն գեռ կացինդ
սկահեր ես, և [թէ որ կարենայի մոռանալ
[թէ դուն ի՞նչ մոքով օր մը զայն ինձի գէմ
վերցուցիր :

Բարիս-թին է իբր մէկ բաց մը, որ երեսակարա-
նեամբ պահեալ իւստակ բարիացողին սիրու,
որ վրեժինութիւ ըւսաւ . սսուի ունից իւստիւնի,
և բալբարդին իւստակ ըւսած լիւրե . սսու հա-
մար Պահապան իւստապեւ . որ բարիացող մարտը՝
հայլին նայի, բարիս-թիք բաւ լշնե . որ եպու լի-
ռու զայ ինչպէս երիբագործին եղաւ :

Ահա ապաժոյժ կիրք դաղանային,
Որ զհուր բարկութէ վառէ 'ի սրախն .
'Եեղէ զմերձաւորն այլ և զընտանին,
'Ի աանէ 'ի տուն վարէ զդրացին :
Արդ մի հաւատար դու բարկասրախն ,
Թէ և գառն անոնց քեղ երկեսցի .
Եթէ մի անգամ վշտացար անտի ,
Փախիր 'ի նմանէ . շատ է փորձառուին :

ԱՂԱԽԵՍ ԵՒ ԱՐԱԳԻԼ

Որչափ խարօղն է խորամանել ,
Խորամանկին լինի կատակ :

Դառն ուշադ որ խարդախ ըւլսա ,
Քեզէ օսծին ծառը իւլսա :

Եէ . Ո՞ւ էկ որ մը աղուէսը կը հրամցընէ զա-
րագիլը թէ իսմ տունս հրամմէ կերակուր
ուտելու . կը փափաքիմ որ քեզի լաւ հար-
կիքմ' ընեմ : Արագիլը դէմ չի կեցաւ սի-
րով ընդունեց անոր պատիւն , ու խօսք գը-
րած ատենը գնաց : Բայց պատիւը շատ քա-
ղաքավար եղաւ և հարկեքը անքաղաքավար .
վո զի բոլոր կերակուրներն որ առաջ բերաւ
կաթէ շինած ջրի ապուր էին՝ տափակ ա-
մանի մէջ լեցած . անանկ որ արագիլը սե-
ղանին վրա ուրիշ բան չի կրցաւ ընել , բայց
եթէ ամանը քըցըցելով գրեթէ բան մը չի
կերաւ . հազիւ թէ կերակրին համն առաւ:
Խսկ աղուէսը բոլորը լափելով բան չի թո-
ղուց . ու կը խնդար արագիլին վրա , որ իր
բարկութիլը բանելով չէր յայտնէր . որով
հետեւ աւելի նեղացած էր . քանի թէ անօթի:
Այս ուրախութիլը աղուէսին շատ չի քշեց .
վո զի այն օրը արագիլն ալ հրամցուց զաղ-
ւէն , որ երթայ անոր առւնը կերակուր
ուտելու . և իրեն հանեց մէկ աման մը եր-
կան ու նեղ վիզով , և մէջը մանրած միա

լեցուն . ինքը դիւրին կերպով երկան բա-
րակ կտունցը ամանին մէջ երկընցուց ըս-
կըսաւ ուտել հանգստառւք , և խնդալ խա-
բօղ աղուէսին վրա անոր ըրածին դէմ . որ
բոլոր հարկիբին մէջ ուրիշ բան չի կրցաւ ը-
նել , միայն թէ ամանը լզեց : Ապա թողուց
հարկիբին , ու անօթի մարած դարձաւ ամը-
նալով գնաց :

Առանք խորայանի ըլւալու օրէնակ է խաբէ-
բա , հարդան , որ մշտ իշնայի ուրիշ խաբէւ-
բայի ւիշտէ նէ ինչ որ ընէ , ույն իշտանէ :

Զիա՞րդ անվայել քաղաքականին
Խարդախել զընկերն ըստ խորամանկին .
Որպիսի պատրանս նիւթէ օտարի ,
Նովին պատրանօք փոյթ խոյտառակի :
Աղուիսու է բարք ոչ բանականի ,
Խաբէլ և ծաղքել զընկեր բարեկամ .
Կեղծաւորելով իբրև սիրելի ,
Զընկել և լափել զօտարին սեղան :

ԳԱՅԼ ԵՒ ԿԻՍԱՐՁԱՅ


ԳԵՂԵցկութիւն բանականին ,
Ո՛չ մարմնականն այլ է ներքին :

Ի՞նչ ասե է ին ու մին է աղօսք ,
Գլուխն անիւնը պարագ իշտ :

ԵՇ . ()ը մը գոյլը կըսմանէ արձան շինողին
խանութը , և կըտեսնէ հոն մէկ կիսարձան
մը շատ գեղեցիկ շինած . առջի բերանը կը¹
զարմանայ անոր աղւորութելը վրա . բայց
երբոր կըտեսնէ ու կըհասկընայ , թէ քարե
շինած անզգայ գլուխ մ' է , և բան չիմա-
նար , Ո՞հ ի՞նչ գեղեցիկ գլուխ է , կըսէր ,
բայց մեղք որ խելք չունի :

Ի՞մայուղութիւն ըշեռվել իւլայ , Ան որ ըշեռվին
բարակ երաները , և գիւղ լաւ ըլսան , իւշադի
իւլայ : Ասոր համար մշտ պէտք է մարդուն
իւշին նայել , Ան Ան ուրի իւրապանուին :

Զ Ե՞նչ գեղեցկութիւն անիմաստ գլխոյն ,
Երբ զուրկ ՚ի խելաց սկանծայ գերագոյն .
Իմաստունք միայն գեղով գիտութեան ,
Հրձուխն գեղապանծ ըստներքին մարդոյն :
Քանիք կան սկարծին իբր անզոյդ ասուն ,
Այլզուրկ յիմաստից են զերթ անաստն .





Եթ. Կաչաղակ և Սիրամարդ Հեթապիկ և Ազուհա.



Հեթ. Գորս և Կով Հեթ. Աշաւնի և Բազե.



Հեթ. Ազուհա և Գայլ Հեթ. Փայտահատ և Վատա.

Արտաքուստ միայն գեղեցիկ վառուն ,
Բայց անիսէլյաւէտ արձանըստներքնոյն :

ԿԱԶԱՆԱԿ ԵՒ ՍԻՐԱՄՄԱԴ

Որ ոչ գիտէ զստի անձին ,
Նախատանօք չտի տան նմին :

Նայէ ըլլաս հիբուն ինչպահ .
Չես աշուրնար օդար աշրդակ :

Եթ . Աիրամարդ մը փետուր փոխելու աւ-
սւնը՝ իր փետուրները կըթափէ . իսկ կա-
չաղակը սահառածնը զտնոնք կըժողվի , ու վը-
րան կառնէ կըզարդարվի . և զինքը գեղեց-
կութեք շատ վեր կըդնէ քան զսիրամարդը .
մինչեւ հապարտութ փքաննալով կըթողու իր
ընկերներն , ու կուգայ սիրամարդներուն ըն-
կեր կըլսայ : Բայց սյս հապարտութենը շուտ
մը խայտառակ եղաւ . վազ զի սիրամարդները
ճանցան անոր կեղծաւորութին , ու սուտ
փետուրները վրայէն փեթտեցին , և շատ
քըցըցելով վարնտեցին իրենց ընկերուէն :
Իսկ կաչաղակը փեթտած և ծեծը կերած՝
չի կրցաւ մէկալ կաչաղակներէն ալցաւակ-
ցութեա արժանի ըլլալ , որովհետեւ զանոնք
անարդեր էր առաջուց :

Առասի օրինակ է քառամուշին . որ ուրիշին
բանով էլ իշխառագանայ , և իշպարծի . մշտ իշ-
նայի որ դրսէն աւրդար ված ըլլայ . բայց ներսի
ինչ եղածը ըստպահ իշմանը առիշեց :

Ահա տեսարան աղջնօղ հաղարտին ,
ՊՃնի զարդարի զարդու օտարին ,
Որով թեկին ածէ հանգոյն չքնաղին ,
Պանծալ զընկերօք անցեալ 'ի կարգին :
Արդ զի՞նչ շահ բերէ այն փառասիրին ,
Օտարին է զարդ ոչ յատուկ անձին .
Երբ իւրաքանչիւր զիւրն առնու ՚ի բաց ,
Մնայ խայտառակ մերժեալ յընկերաց :

ՃԱՆՃ ԵՒ ԿԱՌԻՔ

Յիսիար Ճանճիկն կարծէ զինքն ինչ ,
Սակայն յինքեան է սին ոչինչ :

Պուտի ճարդի է մէծ իշխօսին ,
Կարծէն լշուներն իրեն+ ըշին :

Լ. Կառավար մը երբեմն իր կառքը արագան
կըտանէր մէկ աւազոտ տեղ մը , որ երկու
զօրաւոր ձիեր կըքաշէին արագութք . Ճանճ
մը կըտեսնէ զայն , և բղզալով կուգայ կը-
նատի կտոքին վրա , ու միտքը կըդնէ թէ ինքը
մինակ կըքալցընէ զայն . հօ տեսէք , կըսէր ,
որչափ փոշի կըհանեմ ահա :

Ըստ մարդիկի կան որ յեռվաշխառ բան լի գուը,
ու մէծ մէծ կըլիօսին . և սուրիւնին ըրած բանը
իրեն + ըրածի պէս կըպարմէն ճառամին նյան . ա
սանին էրառն իըսնէն , որ պայտի մարդիկ մէծ երազ
կըդեսնէն : Արիստուքէլ անսաւ հոգարդ ողաց մը,
որ մէծ կըլիօսէր՝ ըստաց երանի թէ մաքէր ան-
ցած բաները եւ սանէնայի :

ՏԵս զանմիտ արարս անպետ տկարին ,
Պանծայ թէ իցէ կառավար մեկին .
Ոչինչ հայելովլ յիւր անձն ընչին ,
Հոլովել կարծէ զանիւս աշխարհին :
Առ քեզ ՚ի խրատ զառակին իմաստ ,
Ծանիր զքեզ կըռեա զինչ ես և ուր կաս .
Մի համեմատեր զքեզ կարողաց ,
Զի մի ծաղրեսցիս յաջ տեսողաց :

ՃԱՆԱՇ ԵՒ ՄՐՁԻՒՆ

Ար զինկըն վեհ դնէ այլոց :
Մերժի խոսի և ՚ի փոքունց :

Քեզ մէ տներ կարգը մէծին ,
Ծառար կըլլաս մէծին գուրին :

Էտ . **Ճ**անճը կըջանար մէծութեն իրաւունք
ունենալ , որ իր աստիճանը մըջունին շատ
վեր դնէ . ուստի հպարտութեն կըսէր մըր-
ջունին , թէ ես առանց պատճառի չեմ ու-
ղեր քեզմէ վեր ըլլալ : Մտածէ ինչ վիճա-

կի առ եմ ես . ո՞ր առեղծւած ինձի պէս աղ-
 նուական է : Ո՞չ երբէք կաշխատիմ . ուր որ
 ուզեմ կը մտնեմ սլալաաներու մէջ ըլլայ՝
 տաճարներու մէջ ըլլայ . և թէ ինչպիսի՝
 կերակուրներով ես կը անահիմ , տէրը դի-
 աէ . ի՞նչ պոկունքներու և դէմքերու վրա
 կըհանգչիմ : Խոկ դուն , ովորմելի , զատնք
 աեսնելով կը նաև զքեզ ինձի նմանցըներ ,
 դուն որ ծակի մը մէջ կը բնակիս , ուրիշ
 ապրուստ մը չունիս , բայց հաղիւ թէ փըթ-
 տած հատիկներով կապրիս . և անալ ուրիշ
 կերպ չես կը նար ունենալ բայց եթէ մէծ
 աշխատանքով և յոգնելով : Պատասխան ուր-
 ւաւ մը ջունը . ճշմարիտ է թէ դուն պա-
 լատներուն մէջ կը բնակիս . բայց ձանձրա-
 ցուցիչ ես ամմենուն առջին : Այն դեղեց-
 կուհիները՝ որոնցմէ իբր թէ անուշութիւն
 կը գողնաս , քեզ կըհալածեն և կանիծեն :
 Ես կը նդունիմ թէ դուն ամառը քան զիս
 լաւ կեանք կը վարես . բայց ձմեռն ի՞նչպէս
 կապրիս դիտես : Երբոր ցրտէն հալածւած
 պատին մէջ իսեղք կը սատկիս անօթի ծա-
 րաւ , ես հողին տակը իմ կերակուրներովս
 կապրիմ . և այն դժւար եղանակին մէջ իմ
 աշխատանքիս պառողը կը վոյլէմու կուրա-
 խանամ : Ուրեմն պատահձէ ծոյլ , այլ զիս
 մի անարդեր . թէ որ քու ապրելուդ կեր-
 պը ազնուական է , իմինս ալ առանց ծան-
 րութէ շատ ապահով է :

Անդր թեծագուններն իրենց հարսագունը նայէ-
 լով բանարները մարդու դէղ չեն դներ . ապիսյն

Տարդուսս մէծութիւն հագուստ վըստ ըւծւկ շաբ
աղջապ իայ , որ մէծապուծնեն շաբ վէր և յարդ
իւնիք :

Ամուրիցտ պարծանք սնապարծ վատին ,
Պանձայ իբր ունակ բարեաց բոլորին .
Ճգնի վերադաս լինել ընկերին ,
Եւ դատարկութե ուտէ զօտարին :
Գնա առ մըջիւնն ասի ՚ի զրին ,
Ուսի՞ր անտեսնել զպիտոյս անձին .
Մի՞ զերթ ճանձն անմիտ սովամահ լինիր ,
Մի՞ անմտութե զծոյլն երաներ :

ԿԱՊԻԿ ԵՒ ԱՂՈՒԵՍ

Թագաւորաց ոյժ զօրութիւն ,
Արուեստ հանձար իմաստութիւն :

Խեց և իմաստ նէ որ չունիս ,
Արայ ըլլաս ուին և ունիս :

Ե՞ . (Օր մը կենդանիները ժողվեցան , որ
իրենց մէջէն թագաւոր ընտրեն . կապիկը
կըմարիր որ ինքն ըլլայ թագաւոր . ուստի
անոնց առջին մէկ զարմանալի խաղ մ' ըրաւ ,
և անանկ թեթևութեց ցաթկրուեց խաղաց .
որ իր ճարտարութեց բոլոր ժողովքին սիր-
ուը շահելէն ետև վլաճակն ալ իրեն ելաւ ,
թագաւոր կոչվեցաւ : Սակայն աղուեսը չի
քաշեց , որ խաբեբայ հնարքով արժանի ե-
ղաւ կապիկն այս մէծութեց . ուզեց որո-

գոյթ մը լարել կապիկին , և անոր ցըցուց
մէկ փոս մը , որուն մէջ որոգայթ մը պատ-
րաստեր էր , վրանալ տերեւներով դոցեր էր :
Տէր ըստ՝ դուն գիտես որ անցած օրեւ
այս ծակին մէջ մէկ անպատմելի դանձ մը
գտայ : Արդ ինչպէս տրութիւղ լաւ գիտէ ,
օրէնքով ամէն դանձ թագաւորին կիշնի .
դուն ես մեր թագաւորը . այս գանձին տր
որ ըլլաս ամենեին բան մը չի պակսիր քու-
կին մեծնալուն : Ասանկ խօսքերով կապի-
կը խարսխեցաւ ցաթկեց փոսին մէջ . բայց
չէ թէ միայն չխտեսաւ զայն՝ որ կըխնդրէր ,
այլ և աղուէսին որոգայթին մէջ բռնըլիւ-
ցաւ : Իսկ աղուէսը ծիծաղելով կանչեց ա-
նոր . խեղճ յիմար ի՞նչ խելքով միաբդ դրեր
որ ուրիշները կառավարես , երբոր դուն ըզ-
քեղ չխտես կառավարել :

Օրէնակ է անդա մարդիանց , որ թագաւորի
պէս հանգստութիւն աւնին , ու գանց գունէլ-
եպտէ իշլան , և աւնեցածնին ի՞րունցնելէն
եպտ խեղճ խայգառակ իշնան :

Իմաստութին է տիրօղ աշխարհաց ,
Եւ ոչ արութիւն իշխանաց զօրաց .
Ուսի՛ր զիմաստից գտանել զգանձ ,
Եւ մի՛ աղուիսուն թակարթիր ՚ի ցանց :
Ոչինչ շահ գործէ մեծութիւն փառաց ,
Երբ աթոռակից չեն հանձար իմաստ .
Զի իմաստնոց է նախ տիրելինքւանց ,
Ապա թագաւոր գոլ ազգաց ազանց :

ԳԱՐՏ ԵՒ ԿՈՎ,

Որչափ հպարտն ուռնուլ ջանայ ,
Պայթի հողմով ոչ մեծանայ :

Մէծ ըւաշու շառ մէ ջանաբ ,
Թէ լէ պագուիս ու լէ մէծանաբ :

Ը. Կորար երբեմն կովմը տեսաւ, որ խոս
կուտէր ջրոտ տեղի մօտ, սկսաւ ուռենալ
բոլոր ուժովը ; և ուռելով կանչեց ձագին,
թէ որդեակ այս բանը չի կրնար ըլլալ, և
չեմ կրնար քաշել, որ ես կովէն պզախիկ մը-
նամ . լաւ նայէ ինձի կըուր ես ինչպէս կը
կարծեմ, ահա անոր պիտի հաւասարիմ մե-
ծութե : Պատասխանեց ձագը, թէ գուն
անոր չես կրնար հասնիր, հանգիստ կեցիր :
Ուրեմն ըսաց ահա տես ի՞նչպէս կրնամ :
Անալըսաւ . պարապ տեղը կաշխատիս : Իսկ
գորար միշտ ուռելով կըուր . ոհ կամ անոր
կըհասնիմ . կամ թէ . . . Անխելք գորոք
այս խօսքս չի կըցաւ լինցընել . վասն զի
ուռելով այնչափ մեծցաւ, որ մինչև ճաթե-
ցաւ :

Ու որ իւնէ մէծին նայելով իսունէ վնասէ
իւնիւլ, և մէծերուն նմանին գորդին ուն իւլ-
լա, չո ուն ամենասն իւնն յարմար վնասէ աւսե-
է ած :

Վանի՝ այլանդակ, գիտունք ասացին,
Հոդի վրացեալ ՚ի փոքրիկ մարմին.
Որ ջանայ լինել նման վիթխարին,
Ոչինչ խորհելով թէ գորտ է չնչին:
Այս գժնդակ կիրք ուղարկ հալարտին,
Խորհի հանապազ վեհ լինել յանձին.
Աբքայից սկետաց նմանիլ տենչայ,
Սակայն սկայթուցեալ նանրանայ ինքնին:

ԶՆԴԻԱՆ ԵՒ ԹՌՉՈՒՆԻՑ

Այր անհաւատ՝ զերթ չղջիկան,
Զուրկ ՚ի լուսոյ կայ ՚ի մթան:

Թէ չեւ մեծիդ՝ հաւաքարիմ,
Աւարդ իշւսա՝ ամէն աշգին:

ԵՐ. • (0) Խռուններն ու չորբոտանիները իրարու հետ կոիւ ունենալով պատերազմբացին, երբոր երկու դաս բաժնը վեցան, և սկսան ծեծկը վել չղջիկը կամ գիշերահաւը իւմ գործն անոնց կողմէն ելաւ, թշնամիներուն կողմն անցաւ, որ թռչունները աղկար մնան. վասն զի անոնց կորուսոր կուզեր: Բայց երբոր տեսաւ, թէ յաղթութելը թռչուններն ըրին, որ զանոնք թռողուցեր էր, շատ զղջացաւ: Իսկ յաղթօղ թռչունները, և յաղթը ված կենդանիները իրաւամբ բարկացան անոր անշահ անհաւատարմութեանը վրա, ու հալածելով սկատիրեցին որ կէ

նացը մէջ անոնց առջին չերենայ : Ասկէ եւ¹
զաւ որ չգծեկը չի համարձակիր ցորեկն եւ²
ըւնալու , գիշերը միայն կըթռչի :

Խըսաք թուղ առանեն անհաւապարի մարդիկ ,
ու պիտի շահան . վասն պի առանին եւը մէկան
չոչ հաւապարմանի շահին , և ամենեն իշխա-
խագլին :

Տեսէ՞ր զօրինակ խաւարասիրաց ,
Որ ատեան զլոյս դնան խարխափած .
Չի չեն արժանի անհաւատարիմք ,
Վայելել 'ի լոյս ընդ առաքինեաց :
Արդ չքնաղզաշխարհս զի՞նչինչ տապալեաց :
Անհաւատարիմ այս ընկերատեաց .
Որ ատեայ զիւր աղդ խառնի ընդ օտարաց ,
Յօտարաց մերժեալ մնայ խաւարած :

ԱՂԱԲԵՏԻ ԵՒ ԲԱՋԵ

Որ արդարոյն չարիս խորհի ,
Չարադունին ինքն հանդիպի :

Երբ անմեղին դուն լար իտին ,
Վիշպէ լարին յետուը իիյնին :

Ե . Ճաղէն երկար ժամանակ աղտոնիին
Ետեւէն ընկաւ , բայց չի կրցաւ բոնել . վեր-
ջապէս խելքը դարձած եկաւ ընկաւ հա-
ւորսին որոգայթին մէջ . իսկ հաւորսն բըու-

Նածին պէս պատրաստվեցաւ որ սպաննե :
 Բազեն կըսէր անոր . ովլ անողորմ ես քեզի
 ի՞նչ գէշութի ըրած եմ, որ դիս մեռցնել
 կուզես : Պատասխան արւաւ հաւորալ . թէ
 ի՞նչ գէշութի ըրեր էր քեզի այն աղամին ,
 որ այնչափ ետևէն ընկար . և տեսայ որ կը¹
 հալսծէիր . մեռնելու արժանի ես դուն ը-
 սելով խղդեց :

Երբէն ած նոյլ իսպայ անդամաց , որ անմէ-
 լը հաւածէն . բայց յէտոյ անոնց դէմ ու մէկ-
 իւ հանէ , որ անդամները անդամուն իւ իրաւ-
 չին . մայն անմէդին համբէրութիւն իւղասիւլ :

Այս տարացոյց է անզգամ չարին ,
 Պնդի հանապազ ըզհետ անմեղին .
 'Ի կեղեքել զայն յիւրում ձիրանին ,
 Ինքն կեղեքի ձեռամբ որսողին :

Մի անիրաւիր երբ թոյլ տայ երկին ,
 Եւ մի հանդիսիլ քեզ լիցի չարին .
 Քանզի չարքն յաւէտ չարաւ կորնչին ,
 Եւ անօրինօք անօրէնք պատժին :

ԱՐԱԿԵՍ ԵՒ ԳԱՅՆ,

Ուր խորիսորատ փորէ այլում,
Ինքն անկանի չարեօք ՚ի նոյն :

Ուշը ճապնիւ իւլւայ նորոք,
Իւեն գլխուն իւսդայ ու օք :

Էլ. Կայլ մը բունին մէջ նստած իրեն կե-
րակութներովը կապրէր, որ հոն ժողվէր
սպահէր էր: Խակ աղուէսն խմացաւ, վաղեց
եկաւ անոր հետ տեսութիւն ընելու+ այս
մոլքով որ սատանութենով ձեռքէն կերա-
կուրը յափշտակէ: Բայց գայլը շատ զգու-
շութք նայելուն համար, աղուէսը չի կըր-
ցաւ բան մը ձեռք ձգել: Մտմըտաց որ այս
չեղաւ նէ, ուրիշ ճամբայ մը գտնէ: Գնաց
հովիւնին տունը, և անոր խմացուց գայլին
կեցած տեղն ու առաջն ընկաւ տարաւ հոն.
Խորհուրդ տըւաւ որ այն չար գազանը մեռ-
ցընէ. վասն զի կըսէր շատ անդամ քու լաւ
ոչխարներդ կերեր է: Խակ հովիւը հետեւ-
ցաւ աղուէսին խորհուրդին, ու գնաց հոն.
Նախ զարկաւ գայլը մեռցուց, յետոյ աղուէսն
ալ սպաննեց. որ իր շահին համար ուրիշին
մատնիչ եղաւ:

Հ-Ա-Յ-Ա- արծանառէս սապինցուց ճապնիւը .
-Շ ուրիւը ճապնեւը իարծեց նէ յետուց բան ո՞ի-

Դի իւնի : Աստանի աւ օր Տը սապանան պիտի ընէ
մագնի ընէ բան . որ ուրիւշ մէկայի յգելու մէ-
ռայ պապաման իւլւան :

Ազուխաթարոյ նենգամիտ քառւն ,
Տքնի խալոդախսել զընկերին զտուն .
Խուովէ ձգէ զեղբայր ընդ եղօր ,
Զի կերակրեսցէ ՚ի նոցունց զեւր փոր :
Արդ մի խարդախսին լսեր ձայն քաղցրիկ ,
Թէ և զերթ թովիչ սուլեսցէ հեղիկ .
Քանզի նա միայն սակս խւր խորհի ,
Մատնէ զմերձաւորն ՚ի սէր գոյզն օգտի :

ԳԱՅԼ ԵՒ ՈՉԽԱՐԴ

Թէ հաւատաս ոխակալին ,
Փոյթ ՚ի ժանեաց ծախիս չարին :

Մէ ուր վեն+ըդ լարին յեւ+ը ,
Վեւ իւյգէ մահին ճանիւ :

Լ . Ըներն անանկ լաւ սկահապանութիւն
կընէին ոչխարներուն բոլորտիքն , որ գոյ-
լերը չէին համարձակեր մօտենալ անոնց .
որոնք ուրիշ բան չէին մօմըտար , բայց թէ
ի՞նչպէս կըլլայ որ ուտեն զանոնք : Որով-
հետեւ առանց մեծ վտանգի չէին կրնար դայ-
լերը յայտնի բռնութիւն գլուխ տանելքանը ,
պէտք եղաւ որ խորսամանկութիւնը ընեն . տէս
թէ ի՞նչ սատանութիւն բանեցուցին : Աչխար-

ներուն առջին դրին որ հաշտութիւննեն ի-
րաբու հետ անոնք ալ ընդունեցան . և ամ-
մենուն ապահովութել համար կամեցան որ
երկու կողմէն ալ պատանդ ըստ հին տան ի-
րաբու : Ըստը պատանդ գայլին գայլերուն
դին . և գայլին լակոտներն ալ ոչխարներուն
դին գայլին : Ոչխարները կարծեցին թէ ա-
սանկ խիստ ապահովեղան . բայց շատ գէշ
եղաւ իրենց բանը . վազ զի քանի մը օրէն ե-
տի . գայլերը լակոտներուն աղաղա-
կը , որ իրենց մօրմէն զատվալնուն համար
կը պոռայլին . այս բանն իրենց պատճառ ա-
ռին , ու խղդեցին շները քնիրնուն մէջ .
յետոյ վաղեցին եկան ոչխարներուն վրան
ընկան պատճառելով , թէ ինչու համար գա-
շինքն աւքեցիք . ու մեր լակոտներուն նեղու-
թի տըւիք : Եւ որովհետեւ շները չի կացին
որ ազատմն ոչխարները . թշնամիներուն ձեռ-
քը մասնըվեցան , որ դիւրութք յափշտա-
կեցին զամմէնիքը :

Օրինակ է մասմաս մարդիանց , որ նշանուն
խօսին հասարաւը բարեկամներէն հեռառ իշխ-
նան , և իրենց զէնուց անոնց իստան , ու լորա-
ւոր իւ մարդունքն անպահներան չէնուց . ասոնի-
նէրն միշտ հեռառն ժախվէլու է , և ունէ բա-
րեկամունք ընել :

Ահա բունութիւն անդութ գազանին
Ճգնի կլանել զերամն ոչխարին .
Զիարդ քաղցրութք գաշնակցի նոցին .
Մինչև որսասցէ զսիրա անմեղին :

Եւ զի՞ պիտոյ էր հաւատալ նոցին ,
Կամ զի՞ ապահով հաշտիլ ընդ գայլին .
Քանզի թշնամին գայլ է մարդախանձ ,
Դժնեայ քանասար գժրօղ անմեղաց :


ՓԱՅՏԱՀԱՏ ԵՒ ԱՆՏԱՌ

Զոր ինչ գործես կշռեա զվախճան ,
Չունի ինչ շահ զեղջն անագան :

ՄԻ բար լարին յաջուռնիւն ,
Գեղի իւնէ նախ լարունիւն :

ԼԷ . Ո՞էկ փայտ կտրօղ մը աղաչեց անտառին , որ իր փայտերէն անոր փայտ մը տայ կացինին կոթը շինելու համար . իսկ անտառը խիստ աղէկ ըսաց գլխուս վրա . բայց յետոյ շատ զղացաւ երբոր հասկըցաւ թէ այս ըրած բարերարութիւնը իրեն կործանմանը պատճառ պիտի ըլլայ : Որովհետև փայտ կըտրօղը կացինին կոթն անցուցածին պէս սկսաւ անտառին ծառերը ջարդել . օր մը մէկը կտրեց օր մը մէկալը . և այսպէս բոլոր անտառը կործանեց :

Պէտք է մշտ պայշ ինառաւ շնառ նիսծ բանն ,
և լար մարդուն յէտէը պէտք լի դաւ . որ դաւն
աւըւաւ էրեւէ է . անոնի մարդուն ով ոգնուի





ՀՅ. Ազուեհս և Խաղող ին. Գայլ և Ծուշ.



Ի՞՞ Կապիկ և Ազուեհս ինդ Զի և Էշ.



Ի՞՞ Եղնայինի ջուր ինդ Աքիս և Ազուեհս

շնուրականութե իւսպայ՝ իր ժաման աւ պար
ճառ իւլլայ :

Այսպէս անխոհեմք նման անտառին
Կապաստեն չարեաց զէն տան ՚ի ձեռին .
Որով և ինքեանք ինքեանց կործանման ,
Օտարաց համայն պատճառօղ լինին :
Սակայն իմաստունք գիտօղ վախճանին ,
Զոր ինչ գործեսցեն կշռեն նախ խորհին .
Զգաստ գով ընդդեմ վիսասաբերին ,
Զգեն զամենայն յօգուտ շահ անձին :

ԱՆԱՒԻՍ ԵՒ ԽԱՆՈՂ

Յորժամ չունի վասն զբարին ,
Անգոսնէ զայն իբրև շնչին :

Յած հարդն երբ լս բան սորված լէ ,
Աւա բարին կա իւ սորնէ :

Ովթ . **Պ**ատէս մը երբոր անօթի կըմարիր ,
կը տեսնէ խաղողին կուզերը կախւած բարձր
փայտերու վրա , և բոլորը հասած . խորա
գէտը կըբազձայ որ ձեռք ձգէ . բայց որչափ
որ վեր կըցաթիէ , չի կրնար համնիլ որ ու-
տէ : Ուստի ահսաւ թէ իր կարողութիւնը
չպիտի համնի , ետ գառնալով գլուխը վեր-
ցուց ըստց . Այս խաղողները ես ուզենայի
հեշտ կրնայի առնել ուտել . բայց ինձի ա-
նանի կամանչ չի հասած կերենան , որ չէն

արժեր այնչափ տշխատանք ինծի տալով զա-
նոնք վրցընեմ:

Կայականի մարդը նըբար բան իւ իւ պէանէ ,
-- լիւնար առանէւ , իւսիւնի վար պարնեւայն բա-
նը . Բայց նե որ յէադ յգեց , իւսպէս իւսպախա-
նար : Այսպէս են այնար ասմինեւը , որոնց իւնէւ
+ը իւրճ ըլլալ գիտութեան լի համեիր . անոր
հայար գիտութիւն և գիտութ մարդը վար իւսպ-
նէն :

Դմասա առակիս խոտէ զնոսին ,

Որոց այլ է միաք այլ ինչ 'ի լեզուին .

Տենչան 'ի սրտէ ունել զբարին ,

Ապա զայն մերժեն Երբ յուսահատին :

Մի ատեր զլաւն հանգոյն խարդախին ,

Յորժամ չէ 'ի քեզ այլ կայ յօտարին .

Նախանձու է բերք այս ախտ մոլեզին ,

Երբ չունի մերժէ զամէն ցանկալին :

ԳԱՅԼ ԵՒ ՇՈՒՆ

Աղասութիւնն է ձիրք բնութեան ,

Կա և անբանք այնու պանծան :

Աշակերտիւնն է գանյ բնական ,

Մի սուր ծախէր պայն դու ածան :

Ի սայլը խօսակցութիւն կընէր շան մը
հետ աղէկ ասլրելու վրա , և անոր Երանի

կուտար գիրութել համար : Բարեկամ, կը
 սէր, քեզ առանկ գէր և գեղեցիկ աւսնելով
 պէտք է ըսել թէ քուկին վիճակն իմինէն
 շատ վեր է : Պատասխան արւաւ շունը, թէ
 ամենելին մի տարակուսիր ասոր վրան : Ի-
 րաւոր, սիրելի՝ Երբոր միտքս կըբերեմ, թն
 դուն ուրիշ տեղ չես պառկիր, բայց միայէ
 անսառնի մէջ միշտ բաց տեղէր, և շատ ան-
 դամ ալ անօթի կըմեռնիս, ամէն աշխարհք
 քեզ կառեն կըվարնատեն ու կըհալածեն,
 իմ միտքս չի հանիր թէ դուն ի՞նչպէս կը
 տանիս ասանկ խեղճ կեանիքը : Իսկ ես ամե-
 նէն լաւ կերպով կապրիմ. աղէկ կըպառ-
 կիմ. աղէկ կուտեմ պարոնի մը առւն, որ
 զիս շատ անգամ կըսիրէ : Ուրեմն դուն
 մտմրտա իրաւունք չունիմ որ զիս ամենէն
 երջանիկ համարիմ : Սակայն հաւատա ին-
 ձի, և որոշէ որ հիմա իմ հետա դաս, ես
 ինչոր ընեմ՝ դուն ալըրէ գացած տեղս, ա-
 հա առանց դժւարութե իմ երջանկութես
 մասնակից կըլսաս : Պատասխանեց գայլը թէ
 ի՞նչքան պէտք է ընել գրեթէ ոչինչ, ըստ,
 շունը . միայն թէ աւազակութիդ մէկ դի-
 գիր, և ատեն ատեն շողոքորթէ զմեր տէ-
 րը . այլ ուրիշ բան չի մնար քեզի ընելու,
 բայց եթէ ուտել խմել հանգիստ քնանալ:
 Կրկնեց գայլը բոլորովին զըւարճանալով,
 բարեկամ, թէ որ ուրիշ բան չի կայ, միայն
 այս բաներով երջանիկ կրնամ ըլսալ, բոլորը
 կընեմ քեզմէ լաւ : Զայս ըստ ու գնաց
 շանը ետևէն. Ճամբան երթալու ատենը գայ-
 լը աեսաւ որ շանը վզին մազերը թափած
 էին, հարցուց պատճառը : Պատասխանեց

շունը թէ այդ տեսածդ կըպատճառի օղա-
կէն թառայէն , որ զիս կըկապէ : Կըկապէ՝
ըսաւ գայլը . ուրեմն գուն ուր որ ուզես
չես կընար երթալ : Միշտ չէ ըսաց , բայց
գրեթէ ամմէն ուզածս ունիմ , Շէն մնաս
ըսաւ գայլը՝ ճամբայէն ետ դառնալով . ես
քու վիճակիդ այլ չեմ ցանկար . զի իմ ա-
խորժակս այն է . որ քիչ բարիք ունենամ
ու շատ ազատութի : Զայս ըսելով առաւ
քալեց :

Բնական է , որ ամէն իննուանի իսուսէ ազատ
ըւլաւ . բայց բուն հարդառապութիւնն է ինքն
իր բնութեց հրամէւ , ու անիւրդ բան ւընեւ և
մշտ ազատ ըւլաւի իրի :

Ուսիր յառակէս չթողուլ հեշտին ,
Զիրս ազատութէ օժիտ բնածին .
Ազատ կալ յախտէ ազատ 'ի կրից ,
աչքը վարել արուի :

“Եւ այս աշխատանքում մարդու անառնի է և ինը պահապահ, որ
դայուն է և նայում ընկերություն չեն և գոյացած են Ան-
գուստ իրեն ըլլայ հագուստ է, չափ ու սարդարություն-
ն ըստ այս պահապահ է առաջ բերած է:

Ահա կոյր բերմունք կոյք նախանձողին ,
Նախանձու վնաս բերէ նախ անձին .
Յանձն առնու հանել զակըն իւր անգին ,
Զի բարձցէ զարև յաշաց ընկերին :
Զի՞նչ դժնդակ կիրք քան զայս մահածին ,
Որ մահ և չարիս ծնաւ յաշխարհին .
Մի քեզ մերձեացի այս կիրք մոլեգին ,
Զի մի պատժեացիս 'ի շանթէ վերին .

ՄԱՐԴԻ ՈՐ ՇՆշելու ԶՑՈՒԹՅ ԵՒ ԶՀԵՐՄ

Զի՞նչ դառնաշունչքան զայն բերան,
Ար ցուրտ և ջերմ շնչէ համայն :

Անձած է անսնի բերան,

մա . Այստեղ ձմեռվան մէջ մէկ ճամբարդ մը ցըտէն պաղելով կը մանեէ գեղացիի մը տուն, և կազաչէ որ իրեն տեղ տայ ընդունի : Գեղացին սիրով ընդունեց զինքն , ու տարաւ իր խուցը հանգչեցուց . մէկէն շատ կրակ վառեց , յետոյ սեղան դրաւ և տաք տաք ապօւր մը հանեց իրեն : Բայց կրակ վառելու ատենը երբոր կերթար կուգար , անսաւ որ ճամ-

բորդը մատվըներուն վրան շունչ կուտար .
հարցուց իրեն թէ ի՞նչ կը նշանակէ ըրածդգ :
Պատասխանեց , թէ մատվըներս ցրտէն պա-
զեր են , տաքնալու համար վրայէն կը շնչեմ
ինչպէս որ կը աեսնես : Քիչ մը անցնելէն
ետև տեսաւ , որ ապուրին վրան ալ անանկէ
կը փչէր , ըսաց թէ ապուրը տաքցընելու
համար կը փչես : Չէ ըսաւ , հապա պաղե-
ցընելու համար : Կրկնեց գեղացին զարմա-
նալով , թէ այ գէմ կըլլայ՝ թէ որ երկար
ժամանակ իմ տունս պահեմ ասանկ մէկ
մարդ մը , որուն բերնէն թէ տաք կելէ թէ
պաղ : Զայս ըսելով գուրս ըրաւ խուցէն ,
շուտ մը դուռը գոցեց :

Օ՛ինո՞ի է խաբէբայ մարդիանց , որո՞նց բեր-
նէն միշտ ներհակ բան իւլլէ՝ սուպ իւսու-
նած . երբէն մէկ բանին լսուիւնն երբէն գել .
երբէն հա երբէն լի , որ նշան է անհաւագար-
ճաւլէն և անհաւագարնիլէ :

Այս յաւէտ պատկան հակասաբանին ,
Որ սուտ ճշմարիտ կրէ ՚ի լեզուին .
՚ զի ջերմե ցուրու և է քաղցր լեղին ,
Ընչէ միապէս յո՞ր և գէպ բերին :
Ո վլքանի անգէպ քեզ բանականին ,
Տիրական պատկեր գրելոյդ էին .
Արդ մի ներհականն այլբարի բարին :
Ընչեա ընդ բերան քաղցր սէր ջերմին :

ՆԱԽՈՐԴԻՔ ԵՒ ՆԱԽԱՊԵՏ

Զանայ յաղթել ալեաց բաղդին,
Զի քեզ հասցէ աջ հզօրին:

Փորյան+ի մէջ դուն աւխապէ,
Ու ասպուած ու+էւի օգնէ:

Մք. Ակ նաւ մը կը բռնադատի ալեկո-
ծութէ, մինչև կուգոյ ցամաքը կը զարնէ.
և հոն տակը բացվելով երբոր ծովուն ալիք-
ներէն սիխալ ընկղմէր, մէջի եղած ճամբորդ-
ներն սկսան առուալով յուսահատիլ. որոնք
կրնային իրենց աղատութէն ճամբան մտա-
ծել. ստկայն վախը զիրենք անանկ շփոթեց,
որ ամմէն բան թողուցին, ու միայն թեւերնին
բացած երկինքէն օդիութիւն կըխնդրէին:
Կակ նաւապետը լաթերը հանելով կըպօռար
անոնց. թէ ուլ բարեկամք դէշ բան չէ
թեւերնիդ Դիոսին վերցընել բայց այս վուն-
դիս մէջ աւելի աղեկ կըլլար, որ ծովուն
վըա շարժէիք թեւերնիդ: Զայս ըսելով ծո-
վը նետվեցաւ, ու լողալով ցամաքն ելաւ.
և անասենը նայեցաւ, որ ծովուն մէջ ընկը-
մեցան ճամբորդները նաւուն հետ միատեղ.
որոնք ուխտ ընելէն 'ի զատ՝ ուրիշ ճար չու-
զեցին փնտըռել:

Խըապ է անոնց, որ հարկաւոր գործ+էւնին իւ

չգնա, ու աղօթիկ էպես իշլան, ու իրենց բանը.
ած յաջողէ առանց աշխատանի ։ առիտյն մինը
ու մարդուաւ լաւիտաի, ած ւի յաջողնէ :

Աղուլ պաղատանք անդործ պղերգաց,
Ոչնչ ժամանեն կին լսելեաց.
Զի թէ ոչ շարժին ձեռք վաստակողաց,
Մի ակնկալցին նալաստ ՚ի բարձանց :
Ահա հատուցումն հեղդասիրտ վատաց,
Որ անշարժ գնան ՚ի մահու արկած .
Զանա յարաժամ մինչ ՚ի շունչ կենաց,
Ընդդեմ կալուժոյ բալզին կոհակաց :

ՉԱՐ ԴԻՆՑԻ

Իժ չարաթոյն կին անզդամ,
Խայթէ քնաւից որպէս դաղան :

Չար ինիւս խայթու օյ է ,
Ամէն մարդու վեպ իւ բերէ :

Մէ . Անզդամ կնիկ մը միշտ բան կը վնտը-
ռէր, որ փուճ տեղը դրացիներուն հետ
կռիւ ընէ : Անոնք ալ դացին երկանը գան-
դատ ընելուրաին, թէ այս ինչպէս ամբա-
րիշտ կնիկ ունիս, որ միշտ կը կըռւի կը պօ-
ռայ առտըռւանց մինչւ իրիկուն խռովութէ
մէջ է, երանի թէ մեղի մէկ ճար մը դտնէիր,
որ կարենայինք այս չար կնկանը հետ վար-
միլ : Ո՞հ ըստաւ երիկը խմէ ճար կուղէք վար-

մելու . Ես անանկ չարաչար կապվեր եմ ,
որ չէ միայն ցորեկը , այլև գիշեր ցորեկ ու
զեմ չուզեմ պիտի քաշեմ :

Խըսափ է անոնց , որ ենէ անդգամ ինիան , և
այս որոշի հանդիպին , կամ ուեցի է համբերեւ
և իամ հեռաւ ժախէւիւ : Փիւիսուայ , իւ պեսա-
բարիսախօս ինին մը , որ իւսի իւ պանէը՝ ըստյա-
նամ իւ պեսնէմ իւսի , որ առնի յեւուը իւսի . Բայց
առնւի իւսէ պանօղիւակը , առն թէ յեւուի իւսի :

Զե՞նչ այլ դժնդակ քան զանզպամ կին ,
Ընտանի գաղան իւրոց և օտարին .
Մերժէ հալածէ զընկեր դրացին ,
՚ի ասնէ ՚ի առն լեռնէ ՚ի լերին :
Փախիր յերեսաց այն չարալեզուին ,
Մի պատասխաներ կռուարար բանին .
Սա միակ պատկեր է բելմարին ,
Որ հեղու զլթոյն ՚ի սիրտ բոլորին :

ԶԿՆԱՐՄՎ ԵՒ ԶԿՈՒՆՔ

Խոնարհք յաղբից վաղ ճողովրին ,
Եղուակ մեծաց եթէ անկցին :

Փուրին բանը խիստ դիւրին է ,
Մեծն որ իյնի բանը գէւնէ :

Մդ : **Զ**կնորս մը իր թօռը ծովը նետածին
պէս շատ ձկներ մէկէն բռնըլեցան մէծ ու

սլղատիկ միատեղ . և ամմէն մէկը կը ջանային
որ թօռին ծակերէն ելլէն փախչին . բայց
ամմէնքը չի կրցան աղատիլ , միայն մանտը
ձկները դիւրին կերպով մը ծակերէն անցան
փախան . որովհեաև թօռին ծակերը մանտ
րերուն համար լայն էին . իսկ մեծերուն հա-
մար նեղ , որ ամմէն դի ասանկ նեղ ծակ ը-
լալով ի կրցան անցնիլ . ուստի մնացին թօ-
ռին մէջ , բոլորը ձկնորսին ձեռքն ընկան :

Առահիս իշ սորվեցնէ , թէ խոնարհ և աշխագ
մարտը աւխարհին քորյառն մէջ ու իյնի , շ-
աբակ իւնայ աղատիլ . իսկ հոգարփ և մէծ մարտին
ներան կործանուած լարալար իշլայ . ևս առա-
հել հոգարփ ռասունուականներան և զարդարեա-
ներուն :

ՏԵս զիանրդ խոնարհք անցանեն հեշտին ,
Ընդ անցս խոնարհ մահաբեր ցանցին .
Փարթամք մեծամեծք ոչ փոյթ ճողոսկրին ,
Որսօղ թշնամոյն կերպուր սկահին :
Մի ցանկար վեհից և մեծագունին ,
Որոց կեանք արև մերձ կայ օրհասին .
Թէ ոչինչ անձկաս կենաց փարթամին ,
Փութով աեղի տան արկածք աշխարհին .

ԳԱՅԼ. ԵՒ ՈՉԻՆԱՐ

'Ի չար արկած թող զանզբամն,
'Ի բաց փախիր զի է գաղան :

Անզգամին օգնիւ հըլլար,
Կընէ ուշի իրեն պաշար :

ԺԷ . Մէկ դայլ մը երկար ժամանակ շնե-
րէն հալածվելով կը հոգնիւ և կը թուլնայ,
մինչեւ կը յնի մէկ տեղ մը հոգնութիւ առնե-
լու համար, որ հեռու էր դետէն, ուր տե-
ղէն մէկ ոչխար մը ջուր կը խմէր: Որովհետեւ
դայլը ծարաւ և անօթի կը մարէր, ուժի
ու հատեր էր, որ կարենայ առաջ երթալ,
և ուզածը գտնել. ուստի կանչեց ոչխարին
ու աղաչեց, որ իրեն քիչ մը խմելու ջուր
բերէ: Միաքը դրեր էր, որ ջուրը խմածին
ակէս ոչխարն ալ ուտէ. և ասով երկու ու-
զածն ալ պիտի գտնէր. բայց ոչխարն անկէ
կասկած ունենալուն համար խիստ զգուշա-
նալով տեղէն ալ չի շարժեցաւ, ու կանչեց
դայլին հեռուեն, ով բարեկամ, ևս յօժար
կամքով քեզի օդնութիւ կընէի. բայց որով
հետեւ դուն դայլ ես, կընայիմ որ աւելի
մսի կարօտութիւ ունիսքան թէ ջրի. ուրեմն
քեզի աղէկութիւ ընելու համար կը մտածեմ
զիս քեզմէ հեռացընել քան թէ մօտ դալ:
Զայս ըսելով շուտմը փախաւ, և թողուց
անանկ դայլին որ ուզածին չափ ունայ :

Անդամ հարդիկ նեղն որ իյնին անոցը լուս
նախելով կաղաղակին որ ուրիշը խաբէն . բայց
ինչը ին որէստ է հեռու քախւիլ . զան զի ու
պայծին գոնելուն երե՝ վայն՚ի վրան ից բերեն :

Արժանի պատիժ այն նենդաւորին :
Հիւծիլ և մաշլ առ ցաւոց սրտին .
Զի որ չար առնել փութայ անմեղին ,
Չարեաց հանդիպի այսպէս վշտագին :
Արդ մի մերձենար ՚ի չար թշնամին ,
Եւ մի նպաստեր այն չարաօիրին .
Որ ՚ի չար արկած գուշ լարագին ,
Տես զի՞նչ արասցէ երբ լինի յուժին :

ԱՌԻՒԾ ԵՒ ՃԱՆՃ

Թէ և յաղթես վեհ առիւծին ,
Երկի՞ր յուժոյ փոքրագունին :

Ըստ մէ պէսներ մէծ մէծ երազ ,
Պկանի բանէ ամօլ իշլան :

Մի. **Դ**անճը առիւծին հետ պատերազմ
բացաւ , ու խելքովը յաղթեց անոր . վո զի
երբեմն կռնակը խածաւ երբեմն կուշար .
մինչեւ համարձակեցաւ ամմէն դին խածնել .
յիսոյ մտաւ ականջն ու քիթը , և այնչափ
նեղութե արւաւ առիւծին , որ կատաղու-
թէն ինք զինքը պատռեց , թէ ինչո՞ւ համար
մէկ պղտի կենդանի մը զիս ասանկ կը չար-

չարէ, որ ես անոր բան մը չեմ կրնար ընել:
 Իսկ ճանճը այս յաղթութին որ ըրաւ, ոկտաւ
 քզզալով վեր ելլել, և ոստայնին սարդին թռչե
 լովիմօցընելըրած յաղթութիր. մինչեւ խո-
 տորելով գնաց անխելքը սարդին վրա ընկաւ
 փակաւ. տեսաւ որ վրան կը վաղէ թշնա-
 մին. վայ ինձ կը կանչէր, կը վայլէ որ սար-
 դին ոտքերը ճզմեն զիս, ես որ առիւծին
 ճանկերէն ազատեր եմ:

Ահքարդաւան ճորդը վէրջ լունի, բնւ ու ընեւ,
 վէրջառէն իւ իւրծանի մէկ պայտ ուստածակ իւ
 որ ինչ ըլլաւ հասկընայ. ուրւժ մէծամէծ ճար-
 տին աշխարհին պիրեւով հոգարդացէր են, մէկ
 ժում բանե իւ իւրծանէր են:

Արդ սկերճ յաղթութի, ունայն պարծողին,
 Զիանրդ ՚ի փոքուէ ջրեցաւ հեշտին.
 Զի որ զինքն վեհ դնէ հզօրին,
 Կոր ՚ի դլուխ պարտի յանզօրէ չնցին:
 Քանի՞ վէսք յեցեալ ՚ի սահուն բաղդին,
 Միշտ յաղթող լինել հանուրց կարծէին,
 Բայց ՚ի սկզբան անդ երբ պերճանային,
 ՚ի փոքրիկ առթէ ՚ի չեք սուզանին:

ՄՈՒԿՆ ԵՒ ԶԱԳ ԻՒՐ

Թէ վորձ սրակն ոչ տեսանէ ,
Զիաղոդ անվորձ ակն տեսցէ :

Փարք մէծերան դռնն հէպելէ ,
Չի գաբ չըս դռն նէպելէ :

Մէկ մշակ մը մուկը կը տեսնէ , ու
ետևէն կիյնի , որ սպաննէ . իսկ մուկը աչ-
քին սպատիկութէն չէր կրնար ծակը գտնել
փախչիլ , թէալէտ որչափ որ կարելի էր կը
վազէր գէպ 'ի ծակը : Ուստի ձագը կանչեց
իրեն , մարիկ անկարելի է , որ դուն ազա-
տիս , մինչև որ մէկը քեզի առաջնորդ ըրլայ-
ուրեմն իմ ետևէս եկո՞ , ես քեզ կը տանիմ
հօն , ուսկից որ ելար : Ընդ ձագուկս ըսաց
մայրը . ի՞նչպէս կրնամ քեզ առաջնորդ ը-
նելինձի . երբոր գիտեմ , թէ դուն իսմէ
աղէկ չես կրնար տեսնել :

Պէտք է , որ առաջնորդին մէպէն ալ բաց ըւ-
լայ ացն ալ , որ իարէնայ նախ ինչը շիպակ եր-
եւալ , և աւրիններան ալ շիպակ ճամբայ սորվե-
տնել . թէ էն իր աւիներաց իրեն առաջնորդու-
թի ընելով բան իւր վեցնէ , որ իշխափ մէծ ա-
յօն բան է :

Այս են թերակիրթ դատմունք անվորձին ,
իշխէ առաջնորդ լինել վորձառուին .

Ուղղէ զգնացս իւր առաջնորդին ,
Այլ ոչ գիտէ ինքն ուր յանդի ուղին :
Արդ մի խոտորիր յաջ և յահեկին ,
Ուղիղ ընթացիր ըստ ուղիղ կարգին :
Զի ամօթ մեծ է գիտուն ուսուցչին ,
Երբ յայլոց ուղի յանապյափ ուղին :

ԵՐԿՈՒ ՇԱԽՆՔ ՊԱՅԹԻՆ

Վայ որ անյագ տենչայ ուտել ,
Մահու պատժի անդ ՚ի խնդրել :

Ուշի որ շապ ստափէլ ջանաս ,
Անշի շտափակ լին իւլլաս :

Մը . Երկու շուն գետի մը քովէն կերթային ,
տեսան որ ջրին երեսը կըտոր մը միս
կայ իրենցմէ հեռու . մէկը մէկալին ըստւ ,
թէ բարեկամ , ջանք ընենք , որ այս որսը
չի կորաընցընենք . ես շատ լաւ հնարք մը
մտածեցի զայն ձեռք ձգելու համար . մէր
կեցած տեղէն մինչեւ հոն եղած ջուրն՝ որ
կը տեսնես , կընանք խմել . և այս ջուրը
խմածնուս պէս լաւ գիտես , որ կը ցամքի
մնին եղած տեղը , և այսպէս մեղի շատ գիւ-
րին կըլսյ երթալ պատուական միսն ու-
տել . գիտնաս սիրելի որ ասանկ մէր ձեռքէն
չելլէր միսը : Այս խօսքով սկսան երկուսն
ալ խմել գետին ջուրը . և սաստիկ ուռե-
նալով շուտմը շունչերնին կտրեցաւ , հոն
մէկէն ճամթեցան :

Մուլսանի իւ իշխաղընէ մարդուս
քայժն, ու իւնտի բանէր իշնէ ու լիմանար . հին
ապէնը թագաւոր իւ իար այնշատ որիրամուսանի-
սորշած էր, ու մինչ իւրականին մէջ +ինը բե-
րանը ւի իսօնէր ւեր իշխանար :

Յայտ յանդի վախճան ծառայից ախտին,
Սովին կորնչիլ յոր անյագ բերին .
Այնչափ կուրացելք յանկրդ բերկրալին,
Մինչ պայթիլ 'ի ջուր յանկար առնելին :
Արդ մի հետեիր բերմանց մոլեգին .
Որ անչափ տենչմանը յանլուրը ձգին .
Սահմեա զապստամբն եղեալ 'ի կարգին,
Զի մի կորուսցէ ըզքեզ յանտեղին :

ԱՆՈՒԿՍ ԵՒ ՆՈԽԱԶ

Մի ընկերեր խորամաննին,
Զու զքեզ յանել դըին :

Խաբէբային ւըւսս ընինը .
Վիեւ իւ յգէ ւեշծ դուեր :

ԺՂԴ . Ազգուէմն ու այծը միառուղ ճամբոր-
դութիւննին . օր մը սաստիկ ծարուելով
պապակեր էին, դտան մէկ հոր մը, մէկէն
մտան մէջը ջուր խմեցին . բայց դժուարու-
թիւն եղաւ անկէ գուրս ելլելը . որովհե-
տեւ հորը խորունկ էր, այծը չէր գիտէր,
թէ ինչպէս պիտի վեր ելլէ: Ազուէսն ը-

սաց իրեն։ թէ Եղբայր մի վախնար, շատ
դիւրին է երկուքիս ալ ասկէ ելլել։ քեզի
ուրիշբան ալէտք չէ ընել, միայն երկու ուր-
քի վրա ել շիտակ ազատին կրթընէ, որքափ
որ կրնաս վեր բարձրացնւր զքեզ, ես ալ
թաթիկներովս կռնակէդ վեր կելլեմ եղ-
ջուրներուդ վրա։ յետոյ դիւրին մը կը ցաթ-
կեմ հորին բերանը։ անկէ ետե քեզի օդ-
նութիւն ընելով մէկէն վեր կելլես։ Այծը
հաւնեցաւ պյո հնարգիս, և անամնկ լաւ կե-
ցաւ, որ աղուէսը ցաթկեց ելաւ հորէն, ու
փախչելէն 'ի զատ ուրիշ բան չի նայեցաւ։
Բւատի թողուց անանկ ընկերն ու ծիծաղէ-
լով կըսէր։ մօրուքք երկնցընելու տեղը
խելքդ երկնցընւր ։ որ գլխուդ ճարը դրտ-
նէս, և միտք բանեցընելով ատկէ ազատիս։

Խարդախ ճարդը մինւս որ բանը լմշնայ բա-
րէխամանի իշնէ։ անիէ եպե ծառը ընեւն էր
ճամբան իշընայ։

Այսչափ է նսրաստ խարդախ մտերմին։
Այս և հատուցումն չարաց ընկերին։
Նա ընկերանայ ձգել 'ի գրին։
Սա յուշի լինի երբ կայ 'ի նմին։
Այս քեզ է խրատ ո՞ կանանցածին։
Մի խարիր փութով բանիւ նենդողին։
Մինչ յամբուկ դործոյն քեզ է մտերիմ։
Ապա ծաղը առնէ գնայ խնդադին։

ՈՒՐՈՒՐ ԵՒ ԹՌՉՈՒՆՔ

Մի ուտեր հաց ընդ թշնամին ,
Զի կերակուր լինիս նմին :

Թշնամիդ պատիւն ու հաց ,
Քեռ իւ իւնէ պատառ յը հաց :

ՄԵ . ()ր մը ուրուրը կը հրամցընէ սլզտի
թռչուններն , որ հարկիքը գան . իբր թէ
մեծ պատրաստութի ունէր իր տօնախըմ-
բութիլ կատարելու համար : Խոկ անխելք
թռչունները բան մը չի մատծելով վաղեցին
եկան , որ հարկիք տեսնեն : Սակայն յիմա-
րութիւրուրին ճանկն ընկան , որ զանոնք
ժողված տեսածին պէս յանկարծակի վրա-
նին ընկաւ՝ մէկիկ մէկիկ ջարդեց կերաւ :

ՆԵՆԳԱՎԱՐ մարդիկ մէլք երեսանց պատուելով
սորիւնին պառակ իաւըն . ուրիշն ոյնու չէ ամեն
ճարդու հասաւաւ , ևս առանձիւննան : Ըստ
մարդիկ պատիւ գոնելու համար , և հարիկիւ գեռ-
նէլու համար իսրան գացին :

ՏԵ՛Ս յիմարութիւրունոց երամին ,
Որ վստահ գնան առ բուն թշնամին .
Քանզի ոչ փախեան յաղթից փորձողին ,
Անկան ծախեցան ՚ի ժանա որկորին :

ԱՎՐ մի՛ վստահիր յանհաշու ոխերիմ,
ՄԵ՛ քեզ քաղցրասցի հաց նենգաւորին.
Բազումք ցանկութե՛պատուոյ կերակրին,
'Ի չար թշնամոյն որովայն մտին :

ՄԱՐԴ ԵՒ ԶԻ

Վայ որ դիմէ 'ի գիրկ մարդկան,
Ընկճեն առնեն ոտից կոխան :

Վայ ուն մարդու նե յեռուն իցնաս,
Շառու հը անոր գերի կըլլաս :

ԹՇ. Երբեմն ձին բարկանալով եղնիկին
վրա , որ անոր ջուրը պղտորեր էր՝ սկսաւ
ծեծկըւիլ . բայց յաղթը վեցաւ . երբոր յոյսը
հատաւ՝ գնաց մարդուն ընկաւ աղաչեց , որ
իրեն օքնութեն ընէ : Խոկ մարդը խոստացաւ
վրէժինդիր ըլլալու թշնամուն դէմ . միայն
թէ թող տայ , օր սանձ իւմ դնէ բերանը ,
որով կարենայ առաջ տանել , և կայնեցընել
զինքը ինչպէս պէտք ըլլայ : Ձին սիրով
յանձն առաւ սանձ դնել . ուստի մարդը
տանձ դրաւ ու հեծաւ վրան , և եղնիկին ե-
տեէն ընկաւ բունեց մեռցուց : Յետոյ ձին
շնորհակալ ըլլալով մարդուն՝ ուզեց երթալ .
բայց մարդը տեսնելով անոր շահը՝ ամենենին
մտիկ չըրաւ ըսելով . ած չընէ որ ես թող
տամ ասանկ մէկ կենդանի մը , որ այսպէս
Հաւ ծառայութեն կընէ : Զայս ըսաւ , ու

լաւ մը քաշեց սանձը և ստիպեց, որ կամայ
ակամայ երթայ քաղքին ճամբան . և այսպիս
ձին կամքը կուրելով բռնադատեցաւ հնա-
զանդիլ մարդուն, որունմէ յիմարութե՛ օգ-
նութե՛ խնդրեր էր :

Խըստ է անոնց, որ կամակառաբ ռաբիւն
Քրեծիւնութե՛ ըլլալու համար իւրեն+ ուրեն+ գերե
իւնեն, աղստ և նշանակախն իւլլուն :

Այս օրինակ է ըմբռստ յիմարին,
Կ տիրել այլոց նուածի ինքնին.
Առ ՚ի լուծանել վրէժս ընկերին,
Սանձի կաշկանդի ձեռամք մարդկային:
Դու ազատ ծնեալդ ըստ տիրականին,
Մի ընկճեր դիւրաւ յախտից ափրովին.
Սանձեա զապստամբն անսալ իշխանին,
Հրահանդ և կրթեալ հսկատակ բանին :

ԱՆՈՒԻՍ ԵՒ ԳԱՅԼ.

Աւսիր կըռել զժամանակ,
Քննեա զալիտոյսն որ քեզ է անկ :

Ան բանի ծամանակ իւս,
Հարցուր գննէ գեզն որ իսոգայ :

Ի՞ւ զըռեւս մը գիշերանց կելլէ իր բու-
նէն կը մտնէ արտին մէջ բան ուաելու հա-

մար . Երբոր ասդին անդին կը պարտէր՝ ընկաւ հորին մէջ , որ չորս գիւղն փորած էր : Այս բանն եղած ատենը անկէ գայլ մը կանցնէր . ազուէսը կանչեց իրեն , բարեկամ , ո՞հ օգնութիւն ըրէ ինձի . կաղաչեմ շուտով ասկէ հանէ : Գայլն ալ հանգիստ ձայնովմ' ըսաւ , համբերուի . բայց կուզեմ իմանալ թէ ի՞նչ պատճառով հորին մէջին ջնելու պարտաւորեցար . կաղաչեմ , որչափ կարելի է ինձի տեղն ՚ի տեղը պատմէ ինչպէս ըլլալը : Ո՞վքարեկամ , ըսաւ աղուէսը . Երբոր զիս ասկէ հանես քեզ կը պատմեմ , որ հետպարզութեղ կատարվի . հիմա ատենն է իսմէ պատմութե ինդրելու , Երբ կը տեսնես որ ահա կը խզդըլիմ :

Օրինակ է անոնց , որ սարիւնին ինչպատճէ շատակից ըլլալու պեղը հետագա բարձր կուզեն պատճառն իմանալ , և մէլլարեւէ ծաղը ընել :

Ո՞վ ապարասան մտաց գաղանին ,
Որ ոչ կարեկից լինին ընկերին .
Տենչայ իմանալ պատճառ արկածին ,
Զի ծիծաղեսցի ընդ վիշտ անբաղդին .
Արդ մի՛ հետեւիր դու օրինակին ,
Եւ մի՛ քեզ տիսկար առցես գործ չարին .
Թէ կամիս դիտել զգործս օտարին ,
Քննեաւ և ուսիր ըստ ժամանակին :

ԱՐԻՒԹ ՀԻՒԱՆԴ ԵՒ ԱՎՈՒԵՍ

Արդ հետք այլոց գնացք և վարք,
Լինին դիանոց դասախարակք :

Ուրիշերու ընխած ուղեն ,
Խեւաշցիներն իւրաք իւսունեն :

մժկ . Արիւծը հիւլնդցաւ , և ամէն կեն-
դանիներուն գեսպան խրկեց կանչեց , որ
դան միսիթարեն զինքը նեղութէն , որ հի-
ւանդութէը կը պատճառէր : Ուստի ամէն-
քը շուտով վազեցին եկան առիւծին տեղը .
որ զանանիք մէկիկ մէկիկ կը խղդէր երբոր
հոն կը հասնէին : Մինակ աղօւէսը աղէկ
չէր սեպէր առիւծին երթալ . թէպէտ կա-
սիկը շատ անդամ եկէր էր առիւծին կող-
մանէ աղաչէլ , որ մէյմը երթոյ իր պարտքն
ընէ ինչպէս ուրիշներն ըրին . որուն այս
պատճառը տըւաւ . շատ անդամ դիտեցի
կենդանիներուն ոտքի տեղն , որ այցելութէ
գացին առիւծին . տեսայ որ ամէնուն ոտ-
քին նշանը կը ցցընէ , թէ ներս մտէր են ,
բայց չերենար , թէ մէկն անկէ դուրս է
ելէր :

Պէտք է աշըւուն իւնաւ Անամիներէն ու շի-
խաբէլիլ . շատ զի շատ անդամ բարեկամ երևա-
լու մարդը արաւար իւ յգէն որոգայնի մէլ :

Զեարդ քաջ դիտէ միտք նրբազնին,
 Յայլոց վնասուց խրատի ինքնին .
 Զի նշանկ և հետք գործոց աշխարհին,
 Մնան խրատել չեղեալ ապառնին :
 Զգաստ և արթուն լեր յապագային,
 Այլոց վրիսկանք քեզ խրատ լցին .
 Թէ թմրեալ ըրջիս առ թակարթ ախտին,
 'Ի նոյն թակարթեալ կորնչիս հեշտին :

ԿԱՊԻԿ ԵՒ ԿԱՏՈՒ

Զեռք յիմարաց գործեն շահին ,
 Զապրուստ և շահ խորամանկին :

Անիւս յարդին լուս իւ խաբին ,
 Ալոց համար մէս իաշիապին :

ԱԺԴ . Կապիկն ու կատուն կրակին մօտ կը
 մամրասային թէ ինչպէս կրնան առնել կրա-
 կին վրայեն շագանակը + էստանէն որ կրխոր-
 վէր : Եզրայր ըստաց, կապիկը կատուին . այս
 շագանակներն որ կը տեսնես՝ անանկ յաջո-
 ղութք կրնանք առնել որ չէ եղած . այս
 բանիս համար իմինէս աւելի յարմար կը
 տեսնեմ քու թաթիկներդ, դուն միսյն մո-
 խիրէն դուրս քաշէ . Ես ասդին կառնեմ :
 Այս հնարքիս հաւնեցաւ կատուն . և նախ
 կրակները ետ առաւ, ապա մոխիրը . յետոյ
 թաթիկը տանելով բերելով կ քանի հաս
 կրակին մէջէն հանեց . կատուն թաթիկը

տաքութեն կերէր, կապիկը հանդիսատ կու-
տէր : Մէկ ծառայ մը այս բանիս վրան ե-
լաւ՝ խռովեց անոր հարկիքը . բայց կապիկը
մէկէն փախաւ . ուստի բոլոր պատիժը կա-
տուն քաշեց , և բոլոր օդուտը կապիկին ե-
ղաւ :

Դահասէր ճարտը մէս իւ շահը իւնայի , ու-
րիւն իւլ որ ըլլայ հոգ լըներ . անոր հայաց
պէտք է հեռաւ իւնալ անանիներէն :

Անիմաստ ուսմիկը դիւրասահ պատրին ,
գործեն վասն այլոց ոչ 'ի շահ անձին .
Տքնին 'ի հաճել սիրտ շահասիրին ,
Անկետլ 'ի վտանգ չարաչար պատժին :
Զգոյշ լեր ուլ մարդ մերձիլ յայնալիսին ,
Որ քեզ չար խորհի և շահ իւր անձին .
Զի կենակցութի ընդ խորագիտին ,
Վնաս պատուհաս բերէ ընկերին ,

ԱՌԻՒԾ ԵՒ ՑՈՒԵՔ

Ուր միութեն իցէ անքակ,
Յաղթէ ուժոյ զերթ ամբարտակ :

ԵՐԲՈՐ ԳԵՂ ՏԵՌԱՆԴԻ իայ ,
ԱՇԽ ԲԱՆԻ ՅԱՂՑՈՂ իւլայ :

ԱԺԵ. Պորս ցուլ սովորութի էին ըրեր որ
միատեղ արծին . և իրենց վասնգը ճանշնա-
լով միշտ զգուշութիւն կընէին առիւծի մը-
գէմ, որ կը պարտէր մօտ անտառին մէջ, ու
կըսպասէր որ զանոնք պարապ գտնէ յափր-
տակէ : Բայց առիւծը տեսնելով անոնց
զգուշութիւր, որ միշտ գլուխնին դէպ իրեն
անկած կը կենացին . հարկաւորեցաւ սա-
տանութի բանեցընելու : Ուստի նախ և ա-
ռաջ ձեւացուց, թէ միտքը վոխած է անկէ-
ետե այլ չպիտի դպչի անոնց . յետոյ ետ
գարձաւ՝ Եղած տեղէն շատ հեռուն գնաց :
Ցուլերն ասանկ տեսածնուն պէս կարծե-
ցին թէ անոր այսչափ հեռանալովը ապահով-
եղան, և հոդ չընելով իրարմէ զատւեցան ,
դաշտին մէջ մէկն ասդին մէկալն անդին
հեռացան : Անստենք առիւծը նորէն դար-
ձաւ յանկարծակի ընկաւ անոնց վրա . և ո-
րովհետեւ զատւած էին՝ շատ դիւրին եղաւ
մէկիկ մէկիկ չորսն ալ յափշտակէլ :

Ուր գուշը ուր միաբանութիւն հայ ամենան կը յառ-
լէ . ուր ուր միաբանութիւն լի կայ հարիսա կը իւր-
ծանի :

Քանի՞ զօրաւոր անքակ միութիւն ,
Յաղթող ձիրանաց անյաղթ առիւծուն .
Բայց երբ քայքայի այն ոյժ բռնագոյն ,
Յաղթի ՚ի փոքունց այսպէս հեշտադոյն :
Հզօր պետութեք պանծացեալ ՚ի սոյն ,
Առանց միութեն եղեն անանուն .
Այն որ աշխարհի տիրեր վեհագոյն ,
Արդ անկանգնելի կայ յիւր կործանումն :

ՈՉՆԻ ԵՒ 02

Անզգամին թէ տաս տեղի ,
Մերժեալ առնէ զքեզ անտեղի :

Անէւենին նէ երես պաս ,
Մէծ չառաջւուա կը ռանս :

մժիշ . Ո՞ւկ ոզնի մը որսորդէն փախչելով
Ժայռի խայացի մը տակ կը մանէ , ուր տեղ
օձ մը կը բնակէր . աղաւեց օձին որ իրեն
տեղ տայ պահվելու համար . օձը սիրով ըն-
դունեց , բոյց յետոյ նայեցաւ որ անոր
փշերէն անհանդիստ կը լսայ . հասկը ցուց ող
նիին , թէ որսորդը դնաց հիմա վտանգ մը
չկայ՝ կը նաս տեղդ երթալ . կաղաչէր որ

Ելլէ երթայ իր ծակէն : Ե՞ս երթամ ըստ
ողնին, քաւ լիցի . դխանսաս ով անխելք, որ
ես հոս աւելի իրաւունք ունիմ բնակելու,
քան թէ դուն : Եւ այսպէս ողնին օձէն
զօրաւոր ըլլալով դժուարութիւ չունեցաւ
համարձակ անոր գէմ դնելու իր ուժն, ու
վոշնառելու անկէ :

Օրինակ է անոնց, որ անիբասանն ուրիշին
բանը յաժշտակիելով իւ պին, և իրենց զօրու-
թէ վրա իւ պարծենան . Բայց վիշտն այն ա-
ռանին, որ իւսէ . Զօրիւնը ապրեր է, վայ դրի-
շին :

Այս է անիրաւ գործ բռնաւորին,
Զօդուտ օտարաց յինքեան ձգողին .
Որով և խնդայ յանիրաւ շահին,
Յաւերժանալ միշտ կարծէ եղկելին :
Զի՞նչ օգուտ երբէք դործեաց զրկողին,
Անիրաւ վաստակ անիրաւ տեղին .
Լքին զամենայն յայլ վիճակ մոտին,
Սուզէցան ՚ի փոր մահու անմահին :

ԼԵՍՈՒ ՅԵՐԿՈՒՆՍ

Զի՞նչ շահ երկնել դործս ահագին ,
Եւ ծնամիլ վիժած չնչին :

Մէծ խոսքմռանցը բան ճը լարձեր ,
Երբոր գործուց լի Հիայեր :

Ճիշ . Այրբեմն լեռանը ցաւը կը բռնէ . և
երբոր սոսկալի ձայնովը կը պօռար , աշ-
խարհնք կը դողացընէր . մինչեւ ամէնքը չորա
դիւն եկան հոն թափեցան . կարծէին թէ
մէկ զարհուրելի հրէշ մը սլիտի ծնի , կամ
նշանաւոր ցուցանիք մը սլիտի հանէ որ չէ
եղած : Բայց քանի մէծ զարմանիք եղաւ՝
երբոր պօռալով ետքի ճիգն ըրաւ , տեսան
որ ծնաւ լեռը , ի՞նչ ըլլայ աղէկ է . ահա
մէկ մուկ մը փորէն դուրս ելաւ :

Օրինակ է մէծ խօսողներուն , որ խօսով մէծ
բանէր իւ խոսքանան , և գործով միան լադ բան
իւ պէսնէն . անոր համար իւսնի , թէ խօսին ու
գործին մէջը լադ բան իայ :

Տես պատկառելի ձայն մեծաբանին ,
Ահեղ որոտայ յամպոց սահմանին .
Այլ երբ ժամանէ ՚ի դլուխ դործոյն ,
Յետնեալ արտադրէ զիւր մուկն չնչին :

Թաէ ճոխաբաննես կտրօղ դոլ մեծին ,
Յամօթ համակիս ՚ի մեծաց զնին .
Զի չկը ինչ արգել զիւրաշարժ լւզուին ,
Բայց արդեամբ առնել դործ է դժուզին :

ՈՒՐՈՒՐ ԵՒ ՄԱՅՐՆ

Մի անարգեր սեղանո էին ,
Մի քեզ չնորհաց դրունք փակեսցին :

Վայ որ իշեէ Ասպառծոյ դէմ ,
Դուռան ողորմած գոյ և իր դէմ :

ԺԻՇ . Աւրուրը սաստիկ կը հիւլնդնայ . Եր-
բոր վերջի շունչը հասաւ՝ կըսէր մօրը . վայ
ինձ մարիկ . աղօթք ըրէ կուռքերուն որ ին-
ձի առողջութիւն տան : Ո՞րդեակ ըստւ մայ-
րը՝ շատ ըրի շատ աղաչեցի , բայց փուճը
գնաց . վո՞զի չեն ուղեր քեզի առողջութիւն
տալ , որովհետև շատ անգամ տեսէր ենք ,
որ դուն անոնց սեղանն անարգելով յափրը-
տակեր ես զոհերուն միսն , որ իրենց ընծայ
եղած էին :

Օքնակ է անհաւագ որիօղներուն , որոնց աւ-
ու եիւղեցականներուն զբա է . և միս ծառը
ընելով ածային օրէնքը իանարգին . բայց երբար
իւ հիւշերնան , և գործառնէ մէջ իիյանին , գահա-
նաները իւ գործառն , որ իրենց համար ակցիւ-

շնէն . Հայ անոնց որ անտառնելը ռդորմունի պիտի
գոնեն :

Ահեղ սպատուհաս օրինազանցին ,
Մերժիլ յերեսաց արարչապետին .
Զի որ մեղանչէ յամոռ անբաւին ,
Ուստի գեղ և ճար հայթայթէանձին :
Ո՞նանը խորհուրդ ժառանգ գեհենին .
Զի՞ գոչես ձայնես երբ կաս ՚ի մահձին .
Խնդրեաւ զօդնութի մարմնոյ աշխարհին .
Որ յանձ մեղար հաճել զնոսին :

ԵՇ ԵՒ ՁԻ

Ար ոչ բառաց զրեռն ընկերին ,
Ծանրի յաւէտ բեռամբ ուժգին :

Թէ ընկերի օգնօղ ւըւսաւ .
Անօգնական իւղած իւ հասաւ :

ԱԺԾ . () ը մը էշն ու ձին միատեղ ճամբայ
կերթային . իշուն բեռը շատ ըլլալով աղա-
չեց ձիուն , որ իրեն օգնութի ընէ ու բե-
ռանը մէկ մասն ալ ինքն տռնէ , եթէ ու-
զենայ խնայել անոր կենացը . իսկ ձին ամե-
նեին չուզեց այս աղէկութին անոր ընել-
ուստի էշն ընկաւ բեռանը տակը մեռաւ :
Տէրն որ տեսաւ , իշուն կաշին քերթեց բո-
լոր բեռանը հետ մէկ տեղ դրաւ ձիուն վրա :
Անատենը ձին սկսաւ պօռալ . ով թշուա-

ոռութես ես չուզեցի բեռանը մէկ մասը տա
նելու, հիմա հարկաւորեցայ՝ չէ միայն բո-
լորը, այլ և կաշին ալ միատեղ տանել:

Օրինակ է անողոք յարդու . որ ինչպէս ինքն
ուրիշն չուզեցի, իբոք ալ անանի ողոք մուլիք
իւ հեռանայ . անոր հայտը անողոք յարդը գա-
զանի իւնանցնեն, որ ուրիշն վրա գումար չպահի:

Ահա իրաւունք արժանիր նմին,
Որ ոչ կարեկցի վշտաց ընկերին .
Այր ընկերատեաց իրեւ անկանի,
Ոչ ուստեք նպաստ տեսցէ բնաւին :
Երանի կարդան ողորմած անձին,
Չի ողորմութելք յիւրմէ ոչ բառնին .
Թէ չափով օդնիէ կարեաց կենակցին,
Աչափ օդնութելք 'ի վերուստ թափին:

ԵՂՋԵՐՈՒ ԵՒ ԵԶԻՎՔ

Վայ որ այլոց ապաւինի,
Չանձին փրկանս ոչինչ հնարի :

Թի՞ որ յայսդ այլոց դնէս,
Հարիս գլուխ վայ իւ բերէս :

Մի . Եղնիկ մը որսորդներէն հալածվելով,
փախաւ եղներուն գոմը . որոնցմէ մէկն ը-
սաց իրեն, ինչ կընես ողբրմելի, հոս կենա-

Ըսլդ մարդու ձեռք կը մատնըվիս, և վտանց
զի մէջ քեղ կը ձգես: «Ներեցէք ինձի ըսաւ
եղնիկը, թէ որ դուք մարդու բան չըսէք՝
և զիս կրնամ ազատել: Գիշեր որ եղաւ
եղնապանը խոտ բերաւ եղներուն, բայց
եղնիկը չի տեսաւ հոն: Տանը ծառաները և
վէրակացուն մտան ելան բան չի տեսան: Խակ եղնիկը կարծելով թէ վտանդէ ազա-
տեցաւ, ելաւ եղներուն շնորհակալ եղաւ,
որ կամեցան պահէլ զինքն իրենց մէջ: Ա-
նոնք ալ պատասխանեցին, թէ մենք կուզենք
որ դուն բոլորովին ազատիս. բայց զգիշ
կեցիր որ մեր ափրոջը ձեռքը չլինիս. վասն
զի մէծ վտանդէ կենացդ: Շատ չանցաւ
տէրը տուն դարձաւ բարեկամին հարկիքէն,
տեսաւ որ քիչ օրւան մէջ եղները վատեր են,
դնաց դոմն որ նայի. երբոր մօտեցաւ մսու-
րին, ըսաց ծառաներուն, թէ ի՞նչ է պատ-
ճառն որ խեղճ եղներս քիչ կուտեն, և քիչ
յարդ ըլսալով ազբը ինաս կուտայ իրենց:
Վերջապէս երբոր ասդին անդին կը նայէր
ուշադրութէ, տեսաւ եղնիկին մէծ եղ-
ջիւրները, և մէկէն կանչեց ծառաներն որ
բոնեն մորթեն:

Ո՛ՀՈՅ հանգիստ իշխառուէ, իր իշնացը ժնաս
իշ բերէ: Հին ապէնը մէկ երեւէլ պօքառէր յէ
երբորպա գերազ իշերաւը, աշխարհի իշ դաշտու-
նէր իր տաջութէլ. և երբոր պոտն իշ դառնար
սութէլու խմելու երեւէ ըլլաւշ անանի անողիքան
հարտ իշասը, որ ամենու իշ պարմանային:

Եղուկ խորհրդոց վատասիրտ անձին ,
Որ ապաւինի յօտարտց ձեռին .
Ոչ ջանայ փախչիլ յապահով տեղին ,
Անգործ սպասէ կենաց բարձողին :
Քանի քաջ արանց 'ի յասպարհովին ,
Առաթուր կոխեալ հանուրց տիրեին .
Բայց երբ փափկութը ըլ յարկաւ նստին ,
Մատնեցան կորեան զերթ կնամարդին :

ԱՐՁԵՒ ՄԵՂՈՒՔ

Այր անհամբեր միշտ վնասի ,
Թէև իցէ զօրեղ արի :

Ո՛՛ըսկ բաժնաս լի համբերէս ,
Միշտ չնաս +եղի կընես :

Միա . Ո՞եկ արջ մը քաղցած անօթի ելաւ
անտառէն , որ կերակուր գտնէ . Ճամբուն
վրա մեղրի փեթակ տեսաւ , սկսաւ լսիել .
Փիեթակէն մեղու մը դուրս ելաւ արջուն ա-
կանջը չարաչար խայթելով ցաւցուց . արջն
ալ կատաղութէն կործանեց փեթակը : Ան-
ատէնը բոլոր մեղուները բարկանալով դուրս
թափեցան մէկէն արջուն վրա մաղեցան ,
և անանկ խայթեցին զինքն , որ արուն լը-
ւայ եղաւ վրէժինդիրը լովիրենց թշնա-
մուն , որ փեթակը կործանեց : Եւ սյսպէս
արջը ամօթով և կատած ստիպեցաւ ետ
դառնալ , մեղադրելովիր գաղանական ան-

Համբեկութեն՝ որ այնչափ թշնամի իրեն
վրա հանելու պատճառ եղաւ :

Խըստ է անոնց, որ իրենց առըստագին համար
այսիւնին դրիանք իշխն . ևս առաջեւ ուրիշամու
անհամբեր մարդիկ, որոնք շատ անգամ սպան-
պատճառաւ իւ իւրաընին :

Այսպէս անհամբելը կրեն զարժանին,
Ըստ իւր ապաժոյժ բերմանց որկորին .
Զի որ կեղեք զտուն օտարին,
Զրկանք և յայլոց պատրաստի նմին :
Մի գաղանութեր բերիր յուտելին,
Եւ մի գողանար զապրուստ ընկերին .
Որ թէւ իցէ փանաքի չնչին,
Դ նախանձ բրդեալ վնասէ ուժովին :

ԽՈՀԱՐԱՐ ԵՒ ՇՈՒՆ

Քաջ զօրանայ սիրտ խոհական,
Երբ հանդիսպի նմին վզեան :

Խոհէմ մարդը իւեց իշտանոյ,
Երբու իրեն չաս իռադայ :

Մի՛՛. Արբեմն շուն մը մտաւ խոհարանը
կամ կերակուր եփելու տեղը, և հոն ապա-
սէլով տեսաւ թէ խոհարարը անզցուշութեր
կեցեր չեր նայէր . խլեց անկէ կովին սիրան,

ու փախաւ : Խակ խոհարարը տեսաւ որ շունը այս չալութին ըրաւ՝ կը փախչի , կանչեց ետեւն՝ ասանկ . դուն այսօր դիւրին կը ցար զիս խաբել . բայց լաւ գիտնաս . ես ասկէ ետեւ անանկ պիտինայիմ , որ ամենեւին բան մը չալիտի կընաս խմէ գողնալ . վասն զի դուն չէ թէ իմ սիրոս տարիր , այլ մանաւանդ ինձի սիրոտ տըւիր . որովհետեւ կորուստը և ձախորդութիւն կը բանան մարդուս միտքը , և կը սորվեցընեն որ լաւ զգուշութիւնելով ազատ ըլլայ դժբաղդութեց որ կը պատահին :

Աւելաց հովիս քորյուսնելիք ւէ պահոիր , բայց ուերդ է որ մէկ անգամ իյնօւը , մը մաւ լիյնի - վասն զի յախորդութիւն և ծառը լաւ իս սորվեցնեն մարդուս խոհելութիւն :

Գեղեցիկ առած բան խոհականին ,

Որ սիրոտ տալ ասէ միսանն առաջին .

Այս մարդոյ պատկան այս բանականին ,

Սի կրկին անգամ միսասիլ յանձին :

Թէ չես փորձ զգաստ 'ի մի նուագին ,

Անկանիլ քեզ կայ 'ի նոյն վերսախին .

Եւ թէ անընդուստ կացցես 'ի կային ,

Սահեալ կործանիս կրկին չորեքին :

ԱՐԾԻՒ, ԲԱՆՁԵ ԵՒ ՑԻՆ

Չքնաղ դործեն դործք և դնացք,
Եւ ոչ պատիր ահսիլ դիմաց :

Գործու իշնէ ճարտը սիրուն,
Եւ ու գետին աղուբանի :

Ժիշ. Ռազեն ու ցինը վիճաբանութե կը-
նէին տրծիւին առջին, թէ որն աւելի աղ-
նուական է, ցինը կը դովիզը իր գերազանց
ուժը և աստտիկ թռչիլը, իսկ բազեն իր
աղնիւ բարբը, և կը նայէին թէ ի՞նչ վճիռ
կուտայ արծիւը : Պատասխան տըւաւ ար-
ծիւը, թէ դնացէք մէյմէկ որս ըրէք, ով
որ ձեզմէ լաւ որս բերէ, այն է աւելի աղ-
նուական : Եւ ահա ցինը գնաց մուկ մը
բերաւ, և բազեն աղաւնի մը : Վնատենը
արծիւն ըստաւ թէ այնչափ աւելի աղնուա-
կան է բազեն քան զցինը, որչափ աղաւնին
գերազանց է քան զմուկը, որովհետեւ ուժը
չէ, հապա դործքն է աղնուական ընօղը :

Աղնուական անթիւ գործու իւ յայգնի և ու
գետիւն . Ան որ ուշադ աղնուական լէ՝ գործու
աղնիւն է, աղնուական իշլաս . Ան որ անունդ
աղնուական է, գործուն լէ, ուղրմէնի նս . Ինւ-

պէս որ յայգինի բաշխն ու օբնը , այսինքն շահինն ու չայլախը :

Նազելի գնացք գործք առաքինի ,
Չքնաղ յօրինեն զսիրտ և հոգի .
Թէ սոքա չիցեն Ծակցեալընդ գեղ ,
Չէ աղնիւ չքնաղ այն սիրտ այն հոգի :
Մի պանծար ընդ գեղ և յանուն զարմի ,
Զանա զքեղ գործով գործել պանծալի .
Զի լոկ բան անուն չեն աղնիւ յարդի ,
Գործն է պսակիչ ամենայն բանի :

ՆԱՊԱՍՏԱԿ ԵՒ ԳՈՐՏՔ

Քոյդ վրիպանք թեթև թուին ,
Եթէ հայիս յայլոց թերին .

Քո ու ուակաց ներև իւլայ ,
Թէ որ նայիս այլոց վրա :

Մի՛՛ - Երբեմն նապաստակները մէկ տեղ
եկան կուլային իրենց խեղձութելը վրա , որ
վախկոտ ըլալով շատ վաանգի մէջ էին ,
վասն զի մարդէ կը վախնանք կըսէին , շնէ ,
արծիւէ , գրեթէ ամէն բանէ վախ ունինք .
ուրեմն մենք ասանկ պիտի հասնինք . ուս
տի աւելի լաւ է մէկ անգամ մը մեռնիլ ,
քան թէ բոլոր կենացնուս մէջ զարհութան
քով մեռնիլ : Զայս ըսելով վազեցին միա
բան որ լիձն իյնին խղդըլին . բայց ասոնց

ոսքին ձայնեն լճեն, քովի դորտերը վախնաւ-
լով մէկէն ջուրը ցաթկեցին : Անատենը մէկ
ծեր նապաստակ մը իրենցմէ կանչեց . ովլ
ընկերը, կեցէք մի՛ վախնաք . ահա ինչպէս
տեսանք, մազմէ շատ աւելի վախկոտ կեն-
դանիներ ալ կը գտնըլին եղեր . հապա մենք
տեղերնիս դառնանք :

Ի՞նչնեղաւէ մէջ ո՛ր ըլլայ մարդ, ո՞նչպէ լի յառ-
ասեաբէլը զինուը ի՞րացնցնել, այլ իրմէ վարի-
նին նայել և մահթարգիլ . վասն զի յառասհո-
քա-ընին և թէթեամբաւընի և մարդիսաւին դեմ
բան : Գիլլաստանեը իշուին, Ան բարի մարդը
շաբարանուի մէջ ալ ըլլայ, մէջ մակերպ իշուայ
առանց այլայլելու :

Թէ քեզ դժկամակ լիցի ձեռք բաղդին,
Զլացեալ զձիրս օժիտ բնածին .
Մի՛ կարձամրտիր հայեաց ՚ի ստորինս,
Այլոց թերութեք քեզ յորդոր լիցին :
Չիք ինչ անթերի յեղելոց կարգին,
Գործ է կատարել զայն թերատ ներքին .
Արդ ուշիմ մտօք քննեաւ զոտարին,
Գտանիես զքեզ ՚ի դոհ վիճակին :

ԵՂՋԵՐՈՒ

Թէ և իցես յանքոյթ տեղի :
Մի՛ դնելը զքեղ յապահովի :

Ուր որ ըլլաս ապահով չե՞մ :
Մահեն հեռաւ ուղւլի իարծես :

Մի՛ . լլէկ եղնիկ մը ծովուն քով ժուռ
գալով բան կուտէր . որ մէկ աչքը չի տես-
նելուն համար ծովուն դին էր ըրեր . տես-
նօղ աչքը ցամաքին դին . և առանկ զինքն ա-
պահով կարծելով վախ մը չունէր : Սակայն
նաւով անցնօղները տեսան զայն ու նետով
զարկին ձգեցին . ողորմելի եղնիկը մեռնե-
լու ատենը լալով կը կանչէր , թէ ուսկից
որ կը վախնայի այն կողմանէ բան չեղաւ . և
ուսկից որ վախ չունէի , անկէ ինաս քաշե-
ցի , ու զարնը վեցայ . ուրեմն վախ չեղած
տեղէն աւելի վախնալու է եղեր :

Ան անգամ և ամեն ուղ պէտ է արթան
ինաւը , Ան լի՝ լի իարծած պէտին ներ իսպայ .
որ զնեաւ իսպածելի բանեն այն լադ մէծ չու-
տի գոր՝ որ լադապահ հովքանեն : Վրաջ նաւապին
աշնաւահանգագին մէջ առելի պէտ է վախնաւ
պան Ան ծովին մէջ . իշու իմաստուն իշ :

Այսպէս հասանեն արկածք աշխարհի ,
 Անփոյթ ըրջողաց յապահով վայրի .
 Զի աներկեւան չիք ուստեք տեղի ,
 Յոր ոչ ժամանեն վիշտք աղետալի :
 Արթուն կաց ով մարդ յանքոյթ վիճակի ,
 Ի գործս ՚ի գնացս Ժիր յամենայնի .
 Շառք իբրև զինքեանս անվտանգ եղին ,
 Ի վտանգ մահու կորեան ցաւագին :

ՕՉ ԵՒ ԽԵՑԳԵՏԻՆ

Թէ ոչ գնաս յուղեղ կարդին ,
 Զքեղ չարաչար գործքքո դատին :

 Թէ այս հետ վերակ լուրջաս ,
 Մահին դառն վերակ ինը լուրջաս :

Միզ . ԽԵցգետինը սպաֆօնը օձին հետ ընկ
 կեր կըլայ , և միատեղ երթալու ատենը
 կը նայի , որ օձը մէկին մէկալին չարտւթե
 կուզէ ընել և խայթել . այս բանէն կաս
 կած երթալով խեցգետինը միշտ կը խրա
 տեր օձն որ խորամանկութիւնը թողու և իրեն
 պէս սպարզամխտ ըլլայ . բայց օձը ամենելին
 մտիկ չէր ըներ : Ուստի խեցգետինը օր մը
 տեսաւ , թէ օձը կը քնանայ բռնեց ճանկե
 րով անանկ սիսմեց որ մեռցուց . և յետոյ
 երկնցընելով շիտկըցուց , սկսաւ մեռած օ
 ձին հետ խօսիլ . թէ որ առաջ կըսէր այս
 պէս շիտակ և սպարզ ըլլայիր , հիմա ասանկ

պատիժով չէիր շխտկըլեր . որովհետեւ ևս
ընկերը շխտակ կուզեմ , հարկ եղաւ որ քեզ
ալ շտկեմ :

Խըսդ է անձնոց , որ Առջուն լարսով Բարսու-
մէ ետև շլատն . Հասն զի Բարի ընօղը Բարի իւ-
գունէ , լար ընօղը՝ լար . Երբենի շնոր Երբենի ու-

Այս Են իրաւունք արդարադատին ,
Չափէ 'ի դործոց չափ չարամիրին .
Զի որ ոչ դառնայ 'ի դործոց չարին ,
Չարատանջ ուղղի գանիւք արկածին :
Արդ մի՛ դառնանար ընդդէմ խըրատչին ,
Գանձեա 'ի սրտի խրատ մտերմին .
Փախիր 'ի դործոց վեասաքերին ,
Թէ ոչ կորնչիլ կամիս յօրհասին :

ԱՌԻՒԾ ԵՒ ԳԱՅԼ

Մի՛ զոք գրդուեր ընդդէմեղօր ,
Զի մի՛ հասցէ քեզ խաւար օր :

Չար մէ խօսիր Եղբօր կըտ ,
Չար խորհուրդը ուեւ իւ դառնայ :

միէ . **(1)** Երառիւծ մը Երբոր հիւանդ ուառ-
կեր էր այրին մէջ , ամմէն կենդանիները
գնացին զինքը տեսնելու բաց 'ի աղուէսէն .
իսկ գայլը մատնութիւն կընէր առիւծին , թէ

աղուեսը քեզ բանի տեղ չե ուսպելուն չե-
կաւ : Այս միջոցիս մէջ աղուեսն ալ հոն
հասաւ , տեսաւ որ առիւծը մռմըուալով կը
բարկանայ իրեն , բանը հասկըցաւ ու մէկէն
առջին գնաց ըաւ : տեր իմ , որ կենդանին
քու շահդ մտածեց ինչպէս ես , որ աշխարհք
պլուտելով . քեզի համար գեղ գտայ բժիշկ-
ներէն : Ի՞նչ գեղ է , ըսաց առիւծը . քեզի
գեղ այն է , որ գայլը ողջ քերթես , ու կաշին
տաք տաք հագնիս : Առիւծը հաւտալով ,
մէկէն զարկաւ գայլը պատռեց . երբոր կա-
շին կը հաներ , աղուեսը ծիծաղելով ըսաւ .
ասանկ հասկըցիր՝ որ պէտք չէ տերը բար-
կութի շարժել , այլ բարեկամութի յոր-
դորել :

Որո՞նք որ իւնանին համայ ըլլալու համար ու-
ժիւց իւ մագնէն , և մէծաւորին սիրաց իւ շը-
ծէն բարիւթիք , այսպէս իւ պատժը վըն :

Դրդոիչ նենդաւորք չարաչար պատժին ,
Այլոց գուք փորեն 'ի նոյն գըլորին .
Որ չար խորհեցաւ ընդդէմ ընկերին ,
Ե՞րբ ոչ դառնաղէտ կորեաւ 'ի նմին :
Քեզ է այս խրաս ծառայդ վեհաղնին ,
Մի մասներ զընկերն առ օգտի անձին .
Ուչափ քաղցրակեաց լինիս ընդ այլոց ,
Այնչափ բարութիք՝ յայլոց քեզ բերին :

ԳԻՆԻՄՈՒ, ԵՒ ԿԻՆ ԻՒՐ

Ոյր կըթութելք իցեն յոռի .
Զինչ և առնես միշտ է յոռի :

Երբու հէւ գէւ սորչած է .
Ի՞ւ որ ընես օդուագ լընէ :

միշտ . Ո՞ւ կին մը իր գինով էրկանը դեղ
կըփնտըռէր . օր մը տեսաւ որ խիստ գինով
է , տարաւ քարէ շինած գերեզմանին մէջ
սլառկեցուց , գերեզմանին դուռը գոցեց դը-
նաց . կարծէր թէ ասով սիտի զգաստանայ
մարդը : Բայց իրիկւան գնաց գերեզմանին
դուռը զարկաւ . գինովը ներսէն ձայն հա-
նեց թէ ովլ ես . կնիկն ալ սկատասխանեց ,
թէ ես մեռելի հաց բերօղ եմ : Գինովը կան-
չեց անոր , թէ ինձի ուտելու բան մի բերեր ,
հապա խմելու . վա զի ես շատ կը տրամիմ
երբոր կերակրի սննուն կառնեմ . ու գինիի
սննուն չեմ առներ : Անատենը կնիկը գըլ-
խուն զարնելով կըսէր . վայ անբաղդիս որ
ճար մը չի գտայ քեզի շահելու , ահա չար
սովորութելք քեզ անանկ կորալնցուցեր է ,
որ ճար չիկայ :

Խըրագ ըլլան մարդուն , որ չար գործոի մէջ
չունանայ . Հասն ոչի շար անդամ սովորութիւնը

շաղկեցով աւ մասի իշխե իւ իւրաշնչնե + անանի
որ բնական իշխե պառելի բաներն աւ իշխենի ը-
նել ինըդեւ պեսան+ : Որման է վայ, որման է
իւրաշնչնի , որման է դադասապան , բայց մեայն
գինէ մու մարդուն . իշխե Սողոմոն :

Որ 'ի գործ վատթար այսպէս սովորի ,
ի նոյն վատթարեալ մոլի յիմարի .
Զի ունակութք քնութի փոփոխի ,
Ելանէ ըստ չափ թէ չար թէ բարի :
Թէ անկար երբէք 'ի գործ ինչ յոռի ,
Արա զներհական բարին ցանկալի .
Եւ թէ նոյն դառնաս ՚ի գործ առաջին ,
Մոլեալ կործանին յայն անկանգնելի :

ԲՈՒ ԵՒ ՉՆԱՀԻԿ

Թէ ըստ տեղւոյն չես նախատես ,
Ունինչ օգտիս զոր և գործես :

Որ ապէնին պայուշ լըւլայ .
Երածի ըստծն ունինչ իւրիւայ :

Միթ . Ո՞եկը բռնեց բու թռչունը , և վան-
դակով պատուհանին մէջ կախեց . որ բոլոր
գիշերը ձայն կրհաներ կերգեր . իսկ գիշե-
րահաւը չդիմանալով ասոր ձայնին եկաւ
քովը մօտեցաւ , հարցուց թէ ի՞նչու ցորե-
կը ձայն չես հաներ , ու գիշերը կըկանչես :
Անսուլ պատասխանեց , թէ առանց մտած .

մունքի չէ ըրածս . վասն զի ցորեկն երգելուս համար բռնըլեցայ : Կրկնեց դիշերահաւը ծիծաղելով , թէ ասկէ ետև քեզի ոչ դգուշանալ պէտք է , և ոչ պահվիլ . անխելք այդ դգուշութելը բռնըլելէդ առաջընելու էիր :

Բառն կամ սպայդուշը օրինակ է անխահէմ հարդիանց , որ պէտք եղած աեւը սգուստի լն ըներ , որ պէտք լիշած աեւը իշնեն : Մարդուս որսգայթը իրեն բերանն է , որ իւ խօսքութը իւ բռնըլմ . իւնէ իմասդանը :

Ի զուր է ջանալ յանցանել առ թին ,
Որոնել ըզձար փրկութեն անձին .
Խորհիլ և առնել ըստ ժամանակին ,
Գործ խոհեմութեն է խոհականին :
Արթուն նախատես լե՛ը ապագային ,
Մինչը է եղեալ դեղ խորհեաց ախտին .
Զի գայ ժամանակ երբ ՚ի սոյն սահիս ,
Ոչինչ դեղ և ճար գտանել մարթիս :

ԿԱՏՈՒ ԵՒ ԽԱՐՏՈՑ

Վայ որ լեզուն զերկրաւ ածէ ,
Բոլոր լըսաս ինքեան ածէ :

Ու որ այսոց լար իւ պարուն ,
Իրեն հագին իւ ուղըն :

ՄԵ. Աատուն կրմանէ ոսկերիչին խանութը , և հոն գանելով խարտոց մը՝ կըսկըսի լզել . բայց լեզուն խարտոցին ակռաներէն քերթըլելուն համար՝ արիւնոտեցաւ խարտոցը . խակ կատուն կուրախանար՝ կարծելով թէ երկաթէն ուտելու բան կը հանէ . մինչեւ բոլոր լեզուն մաշեցաւ :

Լէզուն գշաօղ և բամբառանդ սիրող մարդը մշտ իւ ընասի , ու կարծէ թէ ուրիշին ընս իւնէ . անոր համար իւ լէզուն իւ գլուխը իւսպէ . մանաւանդ ենէ իրակ զօրասոցին և գիպնախան մարդիանց հետն իյնի : Թէ որ մարդ բամբառօղը իրաիի արժանի իւլլայ , հապա գահանան բամբառօղը ինչ իւլլայ . իւնէ իմաստունը :

Ո՛վեանդ դժնեայ գործ լեզուադարին ,
Լոսէ և խարտէ զանուն օսարին .
Կարծէ խանդարել զայլոց ըզբարին ,
Բայց ինքն մաշի կոսորի յահձին :

Նախանձու է բերք այս գործ իստարին ,
Դառնացեալ ընդդեմ բարեաց ընկերին .
Մի որեր լեզու այլոց ՚ի վնաս ,
Զի մի՛ անզգայ մաշեսցիս կրկին :

ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՒ ԲԱՂԻ

Եթէ բարեք քեզ դիպեսցին ,
Տու-ը փառս երկնից և ոչ բաղդին :

Թէ ո՞ր չե՞-+ը ապրան+ իյնին ,
Ճանչոցի ժամ+ պուր երինառին :

Մը . | Երկրագործ մը գետինը փորելու ա-
տենը գանձ գտաւ , և այս պատճառաւ գի-
շեր ցորեկ գետնին պատիւ կընէր որ իրեն
այն բարերարութին ըրաւ . օր մը բաղդը
բարկանալով երեցաւ իրեն ըսաց . ով յե-
մոր ինըն համար ինձի ընելու սլատիւդ
գետնին կընես . այն ոսկին ես քեզի տըւի ,
որ փարթամ ըլլաս , բայց գիտեմ՝ Եթէ ժա-
մանակը փոխվի , և այս ոսկին ուրիշին ձեռքն
անցնի , անատենը պիտի պարսաւես զիս թէ
բաղդ չունիմ :

Ամին մարդ պարպահան է , ո՞ր այ պըտած բա-
րիւց ճանընայ , և պաշտէ արարիւց , չէ նէ դիպ-
ուած+ սեղելով ուրիշի պարիւ ընէ . զասն զի-
ամին բան այ իսմունէ իւլլայ : Բայց զարյանքն

այն է որ շահը իւրեւ լուստին կուպան , և յա-
խորդութիւն այ գալովից ուրախջան , լիյուն ըն-
անաւ իւրեւ հագուս իւրիստիւթ համար կուպայ ,
որ յախորդութիւն մէջ համբէրութիւն ընեն , յաջո-
ղութիւն մէջ խռնաբհութիւն :

Այսափ է խորհուրդ անխմաստ ռամկին ,
Որ ոչ ճանաչէ ուստի դայ բարին .
Երբ դիպի բարեաց դանձուց աշխարհին ,
Զայն երկրի գրէ զայն պարգև բաղդին :
Ազբիւր է բարեաց տնսահման բարին ,
Հանուրց բարերար ըստ էից հարկին .
Պատկառ կալ ձեռաց ամենակալին :
Որ տայ և բառնայ երբ կամք են նմին :

ԵՐԿՈՒ ՈՒՂԵՒՈԲՔ

Բաղում ինդրտեք յաջողակին ,
Չիք բարեկամ ձախողակին :

Յաջու բանին խնդրօղ շաբ իայ :
Չիւրդին մարդ ւի մօդինայ :

Ճլք . Երկու հոգի ճամբայ կերթային , մէ-
կը կացին մը դտաւ , ուրախանալով ամե-
նուն կըսէր , թէ կացին դտայ . իսկ ընկելը
կը իրատէր որ դտայ ըսէ , հապա դտանք
ըսէ . բայց մէկալը միշտ նոյն կըսէր : Գիւ
մը առաջ դացին՝ նայիս որ կացինին տէրը
վաղելով ետևնուն կուգար . անատենը դըտ-

նօղը խօսքը վորխեց, ու սկսաւ մէկալին ը-
սել, թէ կորանք Եղբայր : Անալ պատաս-
խանեց թէ ինչո՞ւ կորանք կըսէս, հազար կո-
րայ ըսէ . վասն զի երբոր կացինը դտար՝
դտանք չէիր ըսէր՝ դտայ կըսէիր . ուրեմն
ինչպէս յաջողութեղ զիս մասնակից չուզեցիր
ընել, սկզբք չէ որ ձախորդութեղ ընես :

Ո՞ւ ո՞ւ յաջողութե՞ն մէջ ուրիշն բարի իշնէ,
յախորդութե՞ն մէջ դէմ իւսգայ . զայ այն մար-
դուն, ո՞ւ յաջողութե՞ն մէջ հայաբանաւուշ մարդու-
երէս չի նայիր :

Բարեբաղդք սկանծան յելս յաջողակին ,
Ոչ զոք մասնակցեն ընդ բարեաց մասին .
Բայց թէ ժտմանեն 'ի ձախողակին ,
Բաշխեն և սփուեն զայն ընդ բոլորին :
Մի՛ մեծամշակիր երբ կաս 'ի բաղդին ,
Մասնակցեա զայն բաղդ կարօտ ընկերին .
Զի յետս յընթաղըիլդիւրասահ անուին ,
Քեզ նշխարեսցի և բաղդ օտարին :

ԵՐԿՈՒ ԳՈՐԾՔ

Ալ գոհ վարե կեանսա աղքատին ,
Անքոյթ զուարթ կայ յիւր կայլն :

Աշու 4-հ լի վաճառքն ,
Մահմետական բաժն :

մշտ . Երկու գորտ իրարու դրացի ըլլար-
լով մէկը ճշին մէջ կտագրեր ապահով և աղ-
քատ . մէկալը ճամբուն վրա քիչ ջրի մէջ
կապրեր հարուստ : Ճշին մէջինը շատ ան-
դամ կը խրատեր ընկերն , որ իրեն քով դայ
ապահով ապրի , և դուրսը վտանգի մը չե-
դայ . բայց մէկալն ամենեին անոր մաիկ չեր-
ընկեր՝ թէ ևս հոս շատ կերակուր կը գըտ-
նեմ : Ստկայն շատ զղջացու երբոր սայլ մը
վրայէն անցնելով տրորեց , որ մեռնելու ա-
տենը կը կանչէր , թէ ի՞նչ անխելքութի էր
որ շատ ուտելու համար կեանքս կարձեցու-
ցի . թէ որ ընկերոջս խօսքը մտիկ ընկեր , հի-
մա ողջ կը լսոյի :

Աղքատոք և վարթամբ զմի օդ շնչեն ,
 Ընդ կենաց շաւիղ այլ ոչ զոյդ դիմեն :
 Նա գոհ յիւր փոքուն ապահոված ,
 Սա անգոհ բազմաց 'ի վոսանդ մաշի :
 Այս կրկին վիճակը քեզ տիպ են կրկին ,
 Շատանալ փոքու 'ի կեանս աղքատին .
 Թէ չես գոհ փոքուն փափաքիս շատին ,
 Առաթուր փշրիս 'ի մահու անուին :

ՄԵՐԱԴՈՒԾ ԵՒ ՄԵՂՈՒ

Մերժեա 'ի բաց զայր անզգամ ,
 Մի զընտանի և բարեկամ :

Հեռա իւշիր անզգամէն ,
 Չե նէ օգնիւ բարեկամէն :

Երբեմն մեզուանոցին մէջ մէկ մարդ
 մտաւ մեղք գոլցաւ . Երբոր տէրին եկաւ
 տեսաւ թէ փեթակն աւրած է , զարմանաւ
 լով կայնէր կընայէր թէ ոլլըրեր է . անաւ
 տենը մեզունէրն աւ գարձան եկան . տեսան
 որ մեղագործը փեթակին քովն է , սկսան
 խայթել . Ո՞վ անզգամնէր կըսէր մեղագոր
 ծը ձեր մեղը գողցողին բան չըրեք , ու ձեզի
 նայօղը կըխայթէք :

Կան հարդիկ ոք անհքութ թշնամէն չեն պահ-
 շանար բարեկամնելք իւ վարչին . իսկ բարեկամէն

Երես իւ Դարյընէն . Բայց Եպէտ իւ հասկընան Ան
լսու Էն Վէր + Բարեխամին , գոն համբայը Անդամայն :

Կշռել զինքն և զայլս է մտաւորին ,
Ընտրել զբարեկամ մերժել թշնամին .
Իսկ սիրել զվատն ատել զբարին ,
Գործ է յիմարաց խորհուրդ անբանին :
Են որ գութ խրատ մերժեն մտերմին ,
Կենակցին անհոգ ընդ գող թշնամին .
Բայց դայ ժամանակ յոր խարին ծաղրին ,
Յայնժամ Ճանաչեն զյարդ բարեկամին :

ԵՐԿՈՒ ՇՈՒՆՔ ԿՐԹԵԱԼՔ

Յոր ինչ 'ի բնէ ոք սովորի ,
Այնակէս մնայ չար թէ բարի :

Ինչ բանի որ սորված ըլլայ ,
Գեւնէ աշէ անոնի ինընայ :

Մէկ . Ո՞ւ էկ պարոն մը երկու շուն ունէր .
մէկին որս ընել սորվեցուց , մէկալին տու-
նը պահել . որսորդ շունը միշտ որսի երթա-
լով կաշխատեր , և ինչ որ բունէր պահապան
շունը մէկ տեղ կուտեր հետը : Ուստի օր մը
որսորդ շունը բարկացաւ , և նախատելով
կըսէր անոր . դուն ամմէն օր առանց աշխա-
տանաց հանգիստ նստեր ես . իսկ ես միշտ
կաշխատիմ , դուն կուտես : Պատախան տը-
ւաւ պահապան շունը՝ թէ զիս մի պարտա-

ՀԵՐ, հասկա մեր տէրը պարսաւէ որ ինձ
աշխատիլ չե սորվեցուց, քեզի սորվեցուց :

Խըստ է ամէն մարդու, յանաւանդ ծնողաց,
որ պատինին պատին-է ապէնը բարի բաներով
իրնին. Հասն զի անապէնը ինչպէս սորվին՝ ա-
նանի իւ հան :

ՅԱՆՈՂՔ վարդապետք յայս պարաւանդին,
Վաջիկ հրահանգելքոյս բարուց մանկին.
Զի մանկունք ցվերջ զայն առնելք կրթին,
Գովեստ և պարաւնոցա վերբերին :
Ճանա սովորիլ ի բարեաց մասին,
Առաքինանալ իբրև զիւցաղին .
Ի քեզ նկարեալ բարեաց բոլորին,
Տենչալի տիպար գտցիս անփորձին :

ԶԿՆԿՈՒԼ, ԵՒ ԾԱՎ,

ՄԵՇ հաւատար այլոց զքեզ,
Եւս առաւել զանձն քո քեզ :

ՉԵ հաւագաս գեղ սարիւին,
Եւ յանաւանդ գեղ գու անյին :

ՄԵՇ. **Զ**կնկուլ թռչունը անապատակէր ըլ-
լալով, միշտ ծովուն քովերը կը կենցաղավաւ-
րի. և ծովուն քովի ժայռերուն մէջ ձագ
կը հանէ, ինչպէս կըսեն: Եղաւ որ ձագ հա-
նած ատենը՝ կերակուր գտնելու գնաց. այս

Արջոցիս մէջ ծովը ալեկոծելով, ալիքները
քարին դարձեր, բունը ծովուն մէջ ձգեր էր.
Երբոր թռչունը դարձաւ տեսաւ որ ձագե-
րը ջրին մէջ կորածվեր են, վայ ինձ կըսէր,
ևս ցամաքը թշնամի կարծելով ծովուն ապա-
սինեցայ . սակայն ծովին է եղեր իմ բուն
թշնամիս, որ ես չլյտէի :

Խըսափ է անոնց, որ Անտամին դախովուն հա-
յար՝ անանի սուսպ բարեկամի յետու իւ մադնշվին,
որ Անտամին առնելի դնաս իւ բերե իրենց :

Զի՞նչ շահ արթուն կալ՚ի մի վտանգին,
Յայլ վտանգ հաշիլ թմրեալ գլխովին :
Զի որ ոչ դիտէ եզր սահմանին,
Անդարձ մոլորեալ դանդաշէ յուղին :
Ծովէ այս աշխարհ որ ցանգ երերին,
Ալեքեր հողմունք խաղան՚ի նըմին .
Արդ մի վտանհիր վուխոխականին,
Զի մի ծախեսցիս յանցատակ ծոցին :

ԱՅՐ ԵՒ ԿԻՆ

Զիարդ գժնեայ կին անզգամ,
Խայթէ զընկերն օտարս համայն :

Չար իանայտ էն օչի նման ,
Ու ան մօդին վիշտ ուն իռապան :

Մէկ չար կնիկ մը ամենուն հետ ա-
տելութք վարվելով կուիւ կընէր . օր մը ի-
րեն ընկերն ուղեց հասկընալ , թէ արդեօք
հօրը տունն ալ անանկ կըվարվի . ուստի
մէկ պատճառով մը կինը խրկեց հօրը տու-
նը . բայց քիչ օր անցաւ նայիս գարձաւ ե-
կաւ . ընկերը հարցուց իրեն թէ անոնց հետ
ի՞նչպէս կը վարվէիր հոն : Անալ պատաս-
խան տրւաւ , թէ ի՞նչպէս պիտի վարվիմ ,
հովիւնէրն ալ ինձի հետ աղէկ չէին երթար :
Ո՛վ անզգամ կին՝ պոռաց երիկը , եթէ տ-
նոնց հետ ալ կուիւ ըրիր , որ առարւանց
կերթան ովարներուն հետ մթուն կը դառ-
նան . հապա ի՞նչ չէս ընէր անոնց , որ դի-
շեր ցորեկ մէկ տեղ էս :

Կ-ս-ս-ը-ա-ը յարտը մ-ո-ր ո-ր ե-ր-ն-ա-յ շ-ի-ն-ո-ը հ-է-դ
ի-ը դ-ա-ն-ի , և ա-ը-ն-ո-ն հ-է-դ ի-ո-ի-ւ ի-ը բ-ա-ն-ա-յ . ս-ս-
դ-ի ա-ս-ս-ի է մ-է մ-է գ-է ւ-ը տ-ս-ս-ս-ս-ն ա-ղ-է ի-ի-ն հ-է-դ
ւ-ի ի-ր-ն-ա-ը վ-ա-ր-ի-ւ , և մ-է ա-ղ-է ի-ը տ-ս-ս-ս-ն գ-է ւ-ի-ն
հ-է-դ ի-ը վ-ա-ր-վ-ի :

Այս բոյաք են բարուց կնոջ ժանտածին ,
Որ միշտ աղմկէ զընկեր դրացին .
Ապականիչ թոյն կրէ 'ի լեզուին ,
Ազգել զայն այլոց բերկրամիք են սրախն :
Բարէ դառնութե այն անզգամին ,
Յորմէ մերձաւորք հեռանան փախչին .
Ժոխան դդուանաց որ սպարտ էր նմին ,
Առեն հալածեն դժնդակ զայն կին :

ՈՒՆ ԵՒ ԳԱՅԼ

ԵՇԵ ունիս բան և հանձար ,
Ցաղթես բնաւից չիք քեզ դժուար :

Թողարկ գու գոճուր այլ բան չնես ,
Ըստ չառներ եւ իւ բերես :

Մը . Ո՞ւկ այծի ձագ մը իր ընկերներէն
մոլորած երբոր կերթար՝ գայլ մը ասոր եւ¹
տեէն ընկաւ , այծը հասկրցաւ որ աղատում
չունի՝ դարձաւ ըսաց . ով գայլ լու գիտեմ
որ քեզի կերակուր սլիտի ըլլամ . ուրեմն
կը խնդրեմ որ խեղճութե չի մեռնիմ . եկու²
քիչ մը խազ կանչէ , եսալ սպար խաղամ , ան-
կէ ետև ինչ որ կուզես ըրէ : Խակ դայլը հա-
ւանեցաւ անոր , ու երբոր ուռնալու ձայն
կը հաներ որ այծը խաղայ , չները գայլին ձայ-
նը առին հեռուէն , և մէկէն հոն հասան հա-
լածեցին զգայլը : Բայց դայլը փախչելով
կըսէր այծին , թէ արժանապէս ինձի այս

բանն եղաւ . ալէտք էր երաժշտութել ընել ,
որ բնական խոհարար աշճի եմ :

Ո՞ւ՞ր իր սուշած բանը իւ յգեւ անսովոր բա-
նի յեւ+ իւ պարնէ . Եւբախութել մէջ իիւնի :
Վայ անոնց որ չի պահ ճամբան իւ թողան , ս-
խաւարը իւրիւն . իւնէ Աւասիւ :

Այսպէս որ ձգեն զիւրեանց առնելին ,
Միտ դնեն այլոց գործոց և բանին .
Բայց անդէն ծաղրին առ մտաւորին ,
Ոյր հանձար յաղթէ ըռնութենոցին :
Չի՞նչ հզօրագոյն քան զէն լմաստին ,
Երբ հատու սրեալ է յիւր յեսանին .
Հատանէ զջիղ արքայից բազկին ,
Ծաղրեալ զիսորագէտն ածէ յարկածին :

ԳՈՂՔ ԵՒ ԱԲԱՂԱՆ

Պատճառ լինել գործոց բարեաց ,
Ատելի է չարասիրաց :

Թէ լաւ բանի ըլլաս պափառա ,
Կը բամբառն ու կը լարաւար :

Մլթ . Կողերը տուն մը մտան թաղելու
համար . բայց տանը մէջ ուրիշ բան չի գտան .
մինակ աքաղաղ մը գտան բունեցին տարին .
Երբոր պիտի մորթէին կաղաւէր որ թող

տոնն զինքը . վասն զի կըսէր ես շատ սլիւ-
ւական եմ մարդու , որ գիշերը կարթընցը-
նեմ զանոնք , կելլեն կաշխատին : Ահա ասոր
համար՝ ըսին գողերը՝ դուն մահապարտ ես ,
որ զանոնք արթընցընելով չես թողուր մե-
զի գողութիւն ընելու : Զայս ըսելով գլուխը
կտրեցին թէ ինչու համար ասանկ բանի
սլաաձառ կըլլայ :

Բարի բաներու պատճառ եղջը արելի է ան-
ըսդամներուն . որ իրենց յետեն բարի ընել լի
գար , ու բարեգործութիւն ընօջը իամ սասման է-
պելն եղջը իւ բայբանեն : Ո՛վ որ սասումը և
հագետը իւ յգէ՝ իրեն պատը մահին մօք իւ չի-
նէ , և ճամբան դժոխին +ով . իըսէ իմաստում :

Այսպէս թշնամիք բարեաց բոլորին ,
Ըպատճառ բարեաց ստեն խատագին .
Զի ոյր ակն է չար նմա չար թուին ,
Բարեգործ արդարը պատճառ բարեծին :
Դու մի՛ հետեւիր եղծողաց բարին ,
Կարգութիւն տուր բարեսիրին .
Որ պատճառ լինի բարեաց աշխարհին ,
Չքնաղ պանծալի լինի նազելին :

ԳԻՇԵՐԱՀԱՏ ԵՒ ԿՈՒԶ

Որ ըստ տեղւոյն զէն իւր փոխէ ,
Անյաղթ մնայ զերծ 'ի չարէ :

Թէ շաբ գեղացն բանը քահեն ,
Ամին բանի վան իւլիս :

Մի . Երբեմն գիշերահաւը թռչելու ատե-
նը յանկարծ վար կիյնի . կուզնալ հոն գըտ-
նըլելով կըրտնէ զինքն , որ սպաննէ : Իսկ
գիշերահաւը կաղաչէր որ չի մռցընէ . պա-
տասխաննեց կուզը սամարը՝ թէ չեմ կրնար
քեզ թող տալ . որովհետեւ բնութեամմէն
թռչունի հետ հակառակութիւնիմ : Ես՝
ըսաց գիշերահաւը, թռչուն չեմ : հասկա մուկ
եմ : Զայս որ լսեց կուզը թող տրւաւ : Ու-
րիշ անդամ երբոր ընկաւ գիշերահաւը կա-
տուն զինքը բռնեց . կաղաչէր թէ զիս մի՛
ուտեր : Կատուն ալ ըսաւ թէ բնութեամմէն
մկներու թշնամի եմ . անալ կըսէր թէ ես
մուկ չեմ թռչուն եմ : Եւ այսպէս երկու
անդամ անունը փոխելով աղատեցաւ գիշե-
րահաւը իւմէ գուշան :

Պէտք է Ճամանակին յար մարելով վասնգէ ա-
շագիւ, և ամին մարդու հետ խելովն վարվելով
սիրու շահիւ, ու մէ ապդի սովորութէ դակէ-
ւով ուրիշ բանի լի նարէւ :

Յարմարիլ տութից գործ է հանձարին ,
 Մի՛ յամառութ սկինդ կալ՚ի նմին .
 Զի փոփոխ չնշմունք հողմոց աշխարհին .
 Հարկաւ փոփոխեն պարագայս անձին :
 Մի՛ կաշկանդեսցեն զքեզքերմունք աղջին .
 Մի՛ սովորութի՛ք ՚ի քեզ սկնդասցին .
 Փոխեա զայն երբեմն ըստ ժամանակին .
 Որովհելաւ անդր գործքնախնեաց փոխին

ՅԻՒ ԵՒ ԿՇ

Մի՛ երաներ բազդ մեծատան ,
 Զի տառապանք նմին մերձ կան :

Երնեւ մէ պար մէծանեծին .
 Կայէ ներսէն ինւլ վեպ առին :

Ալսան . | Եռան էշը կը տեսնէ ընտանի էշն ,
 ու քովը մօտենալով կընայի անոր փափկու-
 թել երանի կուտայ , որ քաղքի մէջ գտնը-
 վելով լաւ կուտէ և հանգիստ կեանք կը
 վայելէ : Ուրիշ անգամ տեսաւ որ քեռնա-
 ւորեալ կերթար . տէրն ալ ետևէն դաւա-
 զանը զարնելով կը քշէր , ըսաց թէ ես աս-
 կէ ետև քեզի երանի պիտի չի տամ . վասն
 զի կը տեսնեմ , որ առանց չարչարանքի դուն
 երջանկութ չես կրնար վայելել : Ուրեմն
 իմ աղքատութիս քու մեծութ շատ վեր է ,
 որ ազատութ ուզած տեղս կերթամ :

Պէտք է որ աղքաղներն իրենց վեհակին գլու
գոհ ըլլան , գեսնելով մեծապուաններուն + աշած
նեղութիւններն , որ մշտ մայմանուկն իւ տանջը-
վըն : Ըստ աղքէի է +իւ ռանենալ հանգիստ , + ան-
